# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻԹԻՒ 19 (1669) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, 2014
VOLUME 34, NO. 19 (1669) SATURDAY, MAY 24, 2014

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Հայաստան եւ ՆԱԹՕ Կարեւոր Կը Նկատեն Համագործակցութիւնը




*Էդուարդ Նալբանդեան եւ Սէյրան Օհանեան Հայաստան – ՆԱԹՕ համագործակցութեան նուիրուած ժողովի ընթացքին*

*Չորեքշաբթի, Մայիս 21-ին ՆԱԹՕ-ի Պրիւքսէլի կեդրոնատեղիին ներս Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան եւ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան մասնակցեցան Հայաստան - ՆԱԹՕ համագործակցութեան նուիրուած Հիւսիսատլանտեան խորհուրդի նիստին:*

*Հայաստանի հետ քննարկման նստած էին ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղար Անտէրս ֆոգ Ռասմուսըն ու դաշինքի անդամ 28 երկիրներու դեսպանները:*

*Հայաստանի ներկայացուցիչները ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղարին հետ հանդիպած են նաեւ նիստէն առաջ եւ քննարկած՝ Հայաստան - ՆԱԹՕ համագործակցութեան, ինչպէս նաեւ տարածաշրջանային այլ խնդիրներուն առնչուող հարցեր:*

*Այնուհետեւ 28+1 ձեւաչափով բարձր մակարդակի հանդիպման ընթացքին Էդուարդ Նալբանդեան անդրադարձած է Հայաստան - ՆԱԹՕ համագործակցութեան, Հայաստանի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններուն, ղարաբաղեան հարցի կարգաւորման գործընթացի վերջին զարգացումներուն եւ միջազգային խնդիրներու վերաբերեալ պաշտօնական Երեւանի դիրքորոշումներուն:*

*Թէ՛ պաշտպանութեան, թէ՛ արտաքին գործերու նախարարները կարեւոր նկատած են ՆԱԹՕ-ի հետ համագործակցութիւնը: ՆԱԹՕ-ի ղեկավար Ռասմուսըն, իր կարգին բարձր գնահատած է Քոսովոյի եւ Աֆղանստանի մէջ խաղաղապահ գործողութիւններուն Հայաստանի մասնակցութիւնը:*

*Նախարարները պատասխանած են նաեւ ՆԱԹՕ-ի անդամ երկիրներու դեսպաններու հարցերուն, որոնք կը վերաբերէին Հայաստանի արտաքին քաղաքականութեան, տարածաշրջանային զարգացումներուն, ղարաբաղեան հարցին, Ուքրանիոյ տագնապին եւ պաշտպանութեան ոլորտէն ներս Հայաստանի կողմէ իրականացուող բարեփոխումներուն:*

## Մինսկի Խումբի Համանախագահներուն Դիմաւորեցին Բողոքի Ցոյցով




*Ղարաբաղի բնակիչները բողոքի ցոյցով փակած են ճանապարհը Մինսկի Խումբի համանախագահներուն առջեւ*

*Անցեալ շաբաթավերջին Ստեփանակերտ այցելած ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահները դիմաւորուեցան բողոքի ցոյցով: Փակելով մայրուղին՝ ուրկէ պէտք է անցնէր համանախագահներու մեքենաներու շարասիւնը, բողոքի մասնակիցները պահանջեցին, մասնաւորապէս Ամերիկայի ներկայացուցիչ Ջէյմս Ուորլիքէն՝ լսել իրենց կարծիքները եւ նկատի առնել զանոնք:*

*Ինչպէս ծանօթ է, Ուորլիք վերջերս հրապարակած էր այն վեց սկզբունքները, որոնց վրայ պէտք է կառուցուի ղարաբաղեան հարցի վերջնական լուծումը::*

*«Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը իրաւունք ունի եւ արժանի է տեղեկացուած ըլլալու այդ ամէնուն եւ կարելիութիւնը պէտք է ունենայ յայտնելու իր համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնը», - Լեռնային Ղարաբաղի իշխանութիւններուն հետ հանդիպումէն ետք լրագրողներուն յայտարարեց Ջէյմս Ուորլիք:*

*Պատասխանելով այն հարցին, թէ համանախագահները ինչպէս կը պատկերացնեն ղարաբաղեան հակամարտութեան լուծման ուղղուած հետագայ ընթացքը, նկատի առնելով ժողովուրդի կոշտ դիրքորոշումը, Ուորլիք ըսաւ, թէ իրենք կը յարգեն ժողովուրդի իրաւունքը՝ խաղաղ ձեւով ներկայացնելու իրենց պահանջները:*

*«Ինծի համար անակնկալ էր այդ, բայց եւ այնպէս ես մեքենայէն դուրս եկայ եւ բաւական օգտակար*


*Շար.ը էջ 4*


## Մաքսային Միութեան Հայաստանի Անդամակցութիւնը Պատճառ Եղած է Եւրոպական Որոշ Ծրագիրներու Սառեցման

*Մաքսային Միութեան Հայաստանի անդամակցութեան գործընթացը պատճառ եղած է եւրոպական որոշ ծրագիրներու սառեցման: Այս մասին Մայիսի 21-ին, «Եւրամիութեան ընդլայնման 10-րդ տարեդարձ» վերտառութեամբ հասարակական քննարկումներու ժամանակ յայտարարեց Հայաստանի մօտ Եւրամիութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթէա:*

*Միւս կողմէ սակայն, ըստ եւրոպացի դիւանագէտին, քաղաքացիական հասարակութեան աջակցող ծրագիրները կամ Հայաստանին ուղղակի ֆինանսաւորման ծրագիրները կ'ընդլայնուին, օրինակ արդարադատութեան համակարգին, գիւղատնտեսութեան աջակցութեան եւ այլն:*

*Տրայան Հրիստէա յոյս յայտնեց, որ Հայաստանի եւ Եւրոպական Միութեան միջեւ յարաբերութիւնները ապագային կը զարգանան:*

*Ըստ դեսպանի, Եւրոպական Միութեան անդամակցութիւնը նաեւ ժողովրդավարութեան անդամակցութիւն կը նշանակէ: «Ընդլայնումը ձեւափոխման ծառայող հզօր գործիք է: Յանձինս իր 28 անդամ-երկիրներուն, Եւրոպական Միութիւնը իր ձայնը ունի աշխարհի մօտ: Ընդլայնումը ցոյց տուաւ, որ առաւել միակուռ Եւրոպան մեր նպատակներու եւ շահերու իրագործման միակ ճանապարհն է: Ներկայիս 8 այլ երկիրներ մեր դռները կը զարնեն», - ըսած է Տրայան Հրիստէա՝ շեշտելով, որ այս շատ կարեւոր գործօն է:*

*Ելոյթի աւարտին եւրոպացի դիւանագէտը յոյս յայտնեց, որ Հայաստանի եւ Եւրամիութեան միջեւ յարաբերութիւնները տակաւին կը զարգանան՝ ի նպաստ Հարաւային Կովկասի կայունութեան, ապահովութեան եւ բարգաւաճման:*

## Հանդիպում Հնչակեան Կեդրոնէն Ներս

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ Գէորգ Պերկուպերկեան եւ ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան փոխատենապետ Վազգէն Մեսրոպեան ՍԴՀԿ Երեւանի Ստեփան Սապպահգիւլեան կեդրոնէն ներս ընդունեցին Թուրքիոյ Սոցիալիստական դաշինքի ներկայացուցիչ, Իսթանպուլի հայաշատ Պաքըրքէ թաղամասի թաղապետի նախկին թեկնածու հայազգի Նուարդ Պաքըրքըօղլուին եւ «Նոր Զարթօնք» հայկական կազմակերպութեան ներկայացուցիչ Նշան Գիւրճէհին:*

*Տիկին Պաքըրքըօղլու ՍԴՀԿ ներկայացուցիչներուն հետ հանդիպման ժամանակ ներկայացուց Թուրքիոյ մէջ հայութեան իրաւունքներուն հետ կապուած խնդիրները: Խօսուեցաւ նաեւ վերջին ընտրութիւններու ժամանակ հայազգի թեկնածուի ընտրական իրաւունքներու բազմաթիւ ոտնահարումներու մասին:*

*Հիւրերը կարեւոր նկատեցին Թուրքիոյ ձախակողմեան հայեացքներ կրող ուժերու եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան համագործակցութեան կարելիութիւնները:*

*ՍԴՀԿ ներկայացուցիչները յայտնեցին, որ պատրաստ են համագործակցելու Թուրքիոյ բոլոր այն յառաջադիմական ուժերուն հետ, որոնք իրենց կառավարութենէն կը պահանջեն ընդունիլ Հայոց Ցեղասպանութիւնը, ինչպէս նաեւ բացատրական աշխատանք կը տանին թուրք հասարակութեան մօտ:*

*ՍԴՀԿ Կեդրոնական Վարչու-*


*Շար.ը էջ 4*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Յովիկ Աբրահամեանը վերցնում է իշխանութիւնը

ԱՐՄԷՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Ընդամէնը մէկ ամիս է, ինչ Յովիկ Աբրահամեանը զբաղեցնում է վարչապետի պաշտօնը, սակայն այնպիսի հետեւողականութեամբ է սկսել իր նախորդի գործունէութեան հետեւանքների ու արդիւնքների սրբագրումը, որ շատերի մօտ տպաւորութիւն է ստեղծուել, թէ որդեգրել է բացարձակապէս հակառակ քաղաքական ուղեգիծը:

Իրականում ամէն ինչ շատ պարզ է: Յովիկ Աբրահամեանը վարչապետի պաշտօնում փորձում է կայանալ առաջին հերթին նախկին վարչապետ Տիգրան Սարգսեանի հաշուին եւ նկատի առնելով նրա թոյլ տուած տակտիկական սխալները: Վերջինս իր ոչ պոպուլիար որոշումներով ու քայլերով, որոնք պայթիւնավտանգ ներհասարակական ու սոցիալական իրավիճակը բարելաւելու փոխարէն աւելի էին խորացնում ճգնաժամը, այնպիսի բացասական իմիջ էր ձեռք բերել, որ իրենով մարմնաւորում էր ողջ իշխանութեան նկատմամբ հանրային բացարձակ անվստահութեան եւ հակակրանքի խորութիւնն ու մասշտաբները: Նրա ֆոնին նոր վարչապետի ձեռնարկումները մատուցւում են որպէս տիգրանսարգսեանական ճահճից դուրս գալուն ուղղուած փրկարարական գործողութիւններ: Մինչդեռ դրանց մի զգալի մասը ոչ միայն բնոյթով յետադիմական է, այլեւ նոյնիսկ շատ աւելի վտանգաւոր, քան այն, ինչ անում էր Տիգրան Սարգսեանը:

Իսկ ի՞նչ է անում այսօր Յովիկ Աբրահամեանը: Նշանակուելուց գրեթէ անմիջապէս յետոյ ԱԺ օլիգարխ պատգամաւորների լոբբինգի ազդեցութեամբ նա հրահանգեց վերացնել այսպէս կոչուած «շքեղութեան հարկը», որը մտցուել էր նախկին վարչապետի կողմից՝ իբրեւ պետութեան կողմից սոցիալական արդարութեան սկզբունքի պաշտպանութեան դրսեւորում: Հիմնաւորումը կարծես թէ այն էր, որ այդ հարկատեսակն իր խնդիրը չէր լուծում ու որեւէ արդիւնք չէր տալիս: Եւ Յովիկ Աբրահամեանը որոշեց, որ այդ հարցի լաւագոյն լուծումը ոչ թէ հարկատեսակի պրակտիկ կիրառութեան արդիւնաւէտութիւնը մեծացնելու նոր մեխանիզմների ներդրումն է, այլ այն առհասարակ հանելը: Ուշադրութիւն դարձնենք՝ դրա պատուէրն իջեցրեց ոչ թէ հասարակութիւնը, պետութիւնը, այլ հայրենի օլիգարխիան:

Յաջորդ քայլը խոշոր կազմակերպութիւնների համար աուդիտը վերացնելու օրէնսդրական նախաձեռնութիւնն էր, որով, փաստօրէն, լիարժէք հնարաւորութիւններ ստեղծուեցին խոշոր ընկերութիւնների, կազմակերպութիւնների կողմից ֆինանսատնտեսական գործունէութեան հաշուետուութիւնների հաշուառման պրոցեսն աւելի անվերահսկելի դարձնելու համար: Եւ քանի որ ստուերային ֆինանսական շրջանառութիւնները բնորոշ են յատկապէս խոշոր բիզնեսին, Յովիկ Աբրահամեանի կառավարութիւնը, փաստօրէն, այս փոփոխութեամբ աւելի թուլացրեց դրանց նկատմամբ պետութեան վերահսկողութեան սահմաններն ու լծակները: Գործադիրն այս դէպքում էլ առաջնորդուեց ցաւող գլուխը այն կտրելով «բուժելու» տրամաբանութեամբ: Իսկ թէ ում էր դա ձեռնտու, թերեւս, մեկնաբանութեան կարիք չունի:

Յաջորդ քայլը, որը եւս համարժէք հասարակական ընկալում չգտաւ, արտահերթ եւ հապշտապ ռեժիմով յատուկ պետական պաշտպանութեան ենթակայ անձանց, այսինքն՝ երկրի նախագահի, ԱԺ նախագահի եւ վարչապետի կեցութեան, սննդի եւ տրանսպորտային սպասարկման, ինչպէս նաեւ արարողակարգերի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները եւ ծառայութիւնները պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումների պլանում ընդգրկելն էր, որով այդ պաշտօնատար անձանց հետ կապուած պետական գրեթէ ողջ գնումների մասին տեղեկատուութիւնը փաստացի դարձաւ հասարակութեան համար անհասանելի: Կառավարութեանը, հաւանաբար, ներդաշնակեցնում էին մամուլում մերթընդմերթ հրապարակուող տեղեկութիւնները յատկապէս մէկ անձից կատարուած՝ ըստ էութեան անտրամաբանական թանկ գնումների մասին: Տուեալ դէպքում էականը ոչ այնքան մի քանի միլիոն դրամի ծախսումները հասարակութեան համար փակելն է, այլ հասարակական վերահսկողական գործառոյթները սահմանափակելու ակնյայտ միտումը, որն օրինաչափութիւն դառնալու դէպքում կարող է շատ աւելի տխուր հետեւանքների հանգեցնել: Օրինակ՝ մի գեղեցիկ օր Կառավարութիւնը կարող է որոշել «անվտանգութեան նկատառումներով» պետական գաղտնիք դարձնել նաեւ այդ բարձրաստիճան պետական պաշտօնեաների եկամուտների եւ ունեցուածքի մասին յայտարարագրերը: Ի դէպ, Տիգրան Սարգսեանի գործունէութեան քիչ թէ շատ չափելի դրական արդիւնքներից մէկը հենց պիւտճետային միջոցների չարժը, առհասարակ պետական փաստաթղթաշրջանառութիւնը հնարաւորինս թափանցիկ դարձնելն էր, որը, ահա, կարծես թէ յայտնուել է նոր վարչապետի թիրախում: Ակնյայտ է, որ նման քայլերով մեծանում են կոռուպցիոն ռիսկերը թերեւս ամենախոցելի ոլորտում՝ պետական գնումների համակարգում:

Սակայն Յովիկ Աբրահամեանի առայժմ հիմնական «գլուխգործոցը» օրերս այսպէս կոչուած գործարարների հաւաքի անցկացումն էր, որտեղ վերջիններիս, ոչ աւել, ոչ պակաս՝ հրահանգեց յետայսու նորմալ վճարել հարկերը, այսինքն՝ ապրանքաշրջանառութիւնն ու դրամաշրջանառութիւնը զգալիօրէն դուրս բերել ստուերից: Նա «գործարարներին» մէկուկէս ամիս ժամանակ է տուել՝ գործերը,

Շար.ը էջ 18

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# Վտանգաւոր «տանդէմ» Կամ Օհանեանի ու Նալբանդեանի տարբեր նպատակները

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Մայիսի 20-ին Հայաստանի արտաքին գործերի ու պաշտպանութեան նախարարները մեկնելու են Բրիւսել, որտեղ կը մասնակցեն Հիւսիսատլանտեան խորհրդի 28 + Հայաստան ձեւաչափով նիստին:

ՆԱՏՕ- Հայաստան յարաբերութիւնը Սեպտեմբերի 3-ի եւ Ուկրաինայի զարգացումների լոյսի ներքոյ համալրուել է բազմաթիւ հարցականներով: Վերջին օրերին դրան անկասկած աւելացել է Արցախի հակամարտութեան կարգաւորման գործընթացի դինամիկան, որի ընթացքում հնչել են ամերիկացի համանախագահի յայտնի բացայայտումները 6 կէտերի վերաբերեալ:

Բանն այն է, որ դրանք ներկայում տարածաշրջանում ռուսական կայսրութեան յաւերժացման «ճանապարհային քարտէզն» են, ինչն էլ բացայայտել է Ուորլիքը, ակնկալելով, որ Հայաստանի հասարակութիւնը, չդիմադրելով Սեպտեմբերի 3-ին, գոնէ դրան կը դիմադրի, ինչը էական նշանակութիւն է ունենալու տարածաշրջանը հերթական անգամ ռուս-թուրքական գործարքին զոհ տալու հարցում:

Եթէ Հայաստանի ու Արցախի հանրութիւնը դիմադրում է, ռուս-թուրք-ադրբեջանական գործարքը՝ Իսրայէլի գաղափարական առաջնորդութեամբ տապալւում է (Հայաստանը վերջնականապէս զոհ տալով այդ գործարքին, գործարքի յաջորդ թիրախը դառնալու է Իրանը): Եթէ չի դիմադրում, ապա բոլոր դէպքերում տապալւում է Հայաստանը՝ իսկ Կովկասի հարցում ռուս-թուրքական գործարքը կանգնեցնելու տարբերակ է մնում լայնամասշտաբ պատերազմը, որը կը հակադրուի ռուս-թուրք-ադրբեջանական լոկալ պատերազմի ծրագրին:

Նալբանդեան-Օհանեան դուէտը ՆԱՏՕ-Հայաստան ձեւաչափում հետաքրքրական վիճակում է:

Սեյրան Օհանեանը Ուորլիքի բացայայտումներից յետոյ միակ հայաստանցի պաշտօնեան էր, ով յայտարարեց, որ Հայաստանը կ'աջակցի Արցախին ազատագրուած տարածքները հարկ եղած դէպքում պաշտպանելու հարցում եւ յանձնման մասին խօսք չի կարող լինել:

Էդուարդ Նալբանդեանը ոչ միայն լուռ է, այլ բանակցութիւն-դաւադրութեան մասնակիցն է եւ քննարկում է ազատագրուած տարածքները յանձնելու տարբերակները:

Այստեղ հնարաւոր է տարբերակ, տեսականում, երբ տեղի է ունենում իշխանութեան թեւերի մարտավարական հաւասարակշռում, եւ դիւանագիտական թեւը իր գործն է անում, այսպէս ասած փոխզիջումային ծիրում, իսկ պաշտպանական թեւն իր անզիջում դիրքերում է, այսպէս ասած բազէի դերում:

Ընդ որում, դա կարող է լինել արդիւնաւէտ մարտավարութիւն, բայց Հայաստանի պարագայում իրականութիւնը հեռու է դրանից: Հեռու է այն պատճառով, որ Էդուարդ Նալբանդեանը ոչ միայն դիւանագիտօրէն լռում է կամ այլ բան ասում, այլեւ ակտիւ քայլեր է կատարում Հայաստանի ինքնիշխանութիւնը Ռուսաստանին յանձնելու ուղղութեամբ: Այսինքն, այստեղ դիւանագիտութիւն չկայ, այստեղ փաստացի գործ ունենք դաւաճանութեան հետ:

Ու հիմա ինչ են անելու Բրիւսելում Սեյրան Օհանեանն ու Էդուարդ Նալբանդեանը, նախարարը՝ որ հանդէս է գալիս ազատագրուած տարածքները յանձնելու դէմ, ու նախարարը, որը Հայաստանի տարածքը յանձնել է եւ բանակցում է ազատագրուած տարածքները յանձնելու շուրջ:

Ընդ որում, այդ երկու նախարարներն էլ ենթարկւում են մէկ նախագահի, որը փաստացի մինչ այժմ ակնյայտօրէն կանգնած է յանձնող նախարարի դիրքերում: Երեւի այն պատճառով, որ ինքն էլ ժամանակին հենց յանձնող նախարար էր, բայց ոչ թէ արտաքին գործերի, այլ պաշտպանութեան, ինչն ուղղակի անհեթեթ է, երբ յաղթող երկրի պաշտպանութեան նախարարը կարող է հանդէս գալ յաղթանակի մի կարեւոր, ռազմավարական, ռազմա-քաղաքական բաղադրիչը հակառակորդին յանձնելու դիրքորոշմամբ: Սերժ Սարգսեանը հենց դրանով էր հանդէս գալիս 2005 թուականին:

Հաւանական է, որ արդէն նախագահ դարձած Սերժ Սարգսեանը Բրիւսելում կը փորձի մանեւրել իր երկու նախարարներով: Վերջին հաշուով, Սեյրան Օհան-

Շար.ը էջ 18


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# «Սա Առաջին Հերթին Մեծահարուստների Շահերը Սպասարկող Կառավարութիւն է».- Ստեփան Դեմիրճեան

«Հայ ազգային կոնգրէսը» չի կարող կողմ քուէարկել կառավարութեան գործունէութեան ծրագրին, քանի համարում է, որ սա առաջին հերթին մեծահարուստների շահերը սպասարկող կառավարութիւն է: Այս մասին Ազգային ժողովում կառավարութեան եռամեայ ծրագրի հաստատման հարցի քննարկման ժամանակ յայտարարեց ԱԺ «Հայ ազգային կոնգրէս» խմբակցութեան անդամ Ստեփան Դեմիրճեանը՝ ներկայացնելով իրենց խմբակցութեան տեսակէտը:



Հայաստանի Ժողովրդական կուսակցութեան նախագահ Ստեփան Դեմիրճեան

Ըստ այդմ՝ թէ հետագայում ինչ քայլեր կ'անի կառավարութիւնը, ցոյց կը տայ ժամանակը, բայց առաջին քայլերը քայլեր են ոչ ճիշդ ուղղութեամբ: Դրանք են՝ չքեղութեան հարկի վերացնելը, խոշոր ընկերութիւնների պարտադիր աուդիտի ենթարկելու պահանջը հանելու օրէնսդրական նախաձեռնութիւնը:

«Նախորդ կառավարութեան հրաժարականը պահանջելիս՝ մենք նշում էինք, որ Հայաստանին անհրաժեշտ են արմատական համակարգային փոփոխութիւններ, եւ կառավարութեան հրաժարականը անհրաժեշտ, բայց ոչ բաւարար պայման է՝ երկիրը առկայ ճգնաժամից դուրս բերելու համար: Սա ակնյայտ դարձաւ կառավարութեան նոր կազմը հրապարակելուց յետոյ»,- ասաց Ստեփան Դեմիրճեանը:

Անդրադառնալով կառավարութեան ծրագրի այն բաժիններին, որտեղ նշւում է, որ հաւասար հնարաւորութիւնների, հաւասար մրցակցութեան դաշտ ստեղծելու մասին՝ դրանով իսկ փաստւում է, որ նման տնտեսական միջավայր մեր երկրում չկայ:

Հայաստանի Ժողովրդական կուսակցութեան նախագահը նաեւ յաւելեց, որ գործող կառավարութեան որոշ կարկառուն դէմքեր, ակտիւ մասնակցութիւն են ունեցել այսօրուայ արատաւոր համակարգի ձեւաւորման գործում: Երկրում տիրում է ամենաթողութիւն, ոչ ոք պատասխան չի տալիս իր ոլորտում արձանագրուած ձախողումների համար:

«Կառավարութեանը ծրագիրը ծրագիր չէր լինի, եթէ չնշուէր կոռուպցիայի դէմ պայքարը»,- ասաց Ստեփան Դեմիրճեանը եւ յաւելեց, որ նման միջոցառումների պակաս մեր երկրում երբեք չի եղել, բայց կոռուպցիան մեր երկրում անշեղօրէն աճել է:

Ըստ Դեմիրճեանի՝ ծրագիրը առատ է դեկլարատիւ բնոյթի ձեւակերպումներով ու գեղեցիկ նախադասութիւններով ու ձեւակերպումներով, որոնցով առատ էր նաեւ նախորդ կառավարութեան ծրագիրը, որի գործունէութեան հետեւանքով շուրջ 300, 000 հազար մարդ արտագաղթեց Հայաստանից: Տարբերութիւններն էլ, ըստ Ստեփան Դեմիրճեանի, այս եւ նախորդ ծրագրի միջեւ շատ չեն:

# «Յովիկ Աբրահամեանի Հետ Բարեկամական Կապերը Ազդում Են ԲՀԿ-ի Որոշումների Վրայ».- Ստեփան Սաֆարեան

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամեանի հետ բարեկամական կապը մեծ ազդեցութիւն ունի «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան կայացրած քաղաքական որոշումների վրայ: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց «Ժառանգութեան» ներկայացուցիչ Ստեփան Սաֆարեանը՝ անդրադառնալով ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանի յայտարարութեանը, թէ «բարեկամութիւնը քաղաքական կատեգորիա չէ»:

«Երկիրը փոքր է եւ երկու բարեկամ կարող են հանդէս գալ հակառակ ճամբարներում: Տեսականօրէն Գագիկ Ծառուկեանի յայտարարութիւնն արդարացի է, սակայն գործնականօրէն բարեկամական կապերը կարեւոր են եւ դրանք ազդում են ԲՀԿ-ի որոշումների վրայ: Եթէ այդպէս չլինէր, ապա Բարգաւաճը չէր սպասի կառավարութեան ծրագրին եւ չէր փոխի իր կոշտ դիրքորոշումը կառավարութեան մասին, այն դիրքորոշումը, որն ունէր Տիգրան Սարգսեանի մասին»,- ասաց նա:

Անդրադառնալով Ծառուկեանի յայտարարութեանը առաջիկայ նախագահական ընտրութիւններին մասնակցելու վերաբերեալ՝ Ստեփան Սաֆարեանն ընդգծեց, որ այս յայտարարութեամբ ապացուցուեց, որ ԲՀԿ-ն չի պատրաստւում ամբողջական իշխանափոխութիւն պահանջել:

«Գագիկ Ծառուկեանը յայտարարել է այն, ինչի մասին 2013թ.-ին խօսել է Րաֆֆի Յովհաննիսեանը, այն որ 2013թ.-ի ընտրութիւններին չմասնակցած ուժերն իրենց հաշուարկներն արել են 2018թ.-ի համար, դրա համար հիմա ջուրը չեն մտնում: Բացի դրանից երբ Սերժ Սարգսեանը խօսեց խորհրդարանական մոդելին անցնելու մասին, ԲՀԿ-ն դէմ արտայայտուեց, եւ դա ցոյց տուեց, որ իր ռազմավարութիւնը կառուցուած է այս կառավարման համակարգի համար»,- աւելացրեց նա:

Նշենք, որ Մայիսի 16-ին «Կենտրոն» հեռուստաալիքին տուած հարցազրոյցի ժամանակ ԲՀԿ առաջնորդը մասնաւորապէս ասել էր. «Բարեկամութիւնը քաղաքական կատեգորիա չէ: Կայ նոր վարչապետ, նոր կառավարութիւն. տեսնենք ինչ ծրագրեր են բերում, որքանով են նրանց քայլերը համապատասխանում իրենց ծրագրերին եւ խոստումներին: Տեսնենք ինչ են անում, որ ժողովրդի կենսամակարդակը բարձրանայ: Իմ ամենամօտ բարեկամը ժողովուրդն է: Ես իմ սկզբունքները եւ արժանապատւութիւնը երբեք չեմ զիջելու»:

# Կայացել է Տէր-Պետրոսեան- Ծառուկեան Հանդիպում

Մայիս 20-ին տեղի է ունեցել ՀՀ առաջին նախագահ, Հայ ազգային կոնգրէսի նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանի հանդիպումը:

Հանդիպմանը, որին մասնակցել են ԲՀԿ-ից՝ Վարդան Օսկանեանն ու Ստեփան Մարգարեանը եւ Հայ Ազգային Կոնգրէսից՝ Լեւոն Զուրաբեանն ու Արամ Մանուկեանը, քննարկուել են երկրում ստեղծուած իրավիճակը, երկու քաղաքական ուժերի միջեւ համագործակցութիւնը, ինչպէս նաեւ խորհրդարանական ոչ-իշխանական ուժերի քառեակի անելիքների հետ կապուած հարցեր:

Վարչապետ Յովիկ Աբրահամեանը ողջունել է Լեւոն Տէր-Պետրոսեան-Գագիկ Ծառուկեան հանդիպումը:

Պատասխանելով «Ազատութեան» հարցին, թէ իրեն չի մտահոգո՞ւմ, որ Ծառուկեան-Տէր-Պետրոսեան համագործակցութիւնը կարող է իր դէմ աշխատել, Աբրահամեանն ասաց, թէ ոչինչ չի բացառում:

«Եթէ ես իմ գործն եմ անելու, ով ուզում է դէմ լինի, ով ուզում է կողմ լինի: Ի՞նչ է տալիս, եթէ ես իմանամ՝ ինձ դէմ են, ասե՞մ՝ «իմ դէմ մի խօսէ՞ք»: Ես ոչ մի բան չեմ բացառում, [որ Ծառուկեան-Տէր-Պետրոսեան համագործակցութիւնը կարող է իր դէմ դուրս գալ], հիմա դրա համար ի՞նչ է պէտք... որ ես լաւ աշխատեմ, ազնիւ, թափանցիկ աշխատեմ, ինչքան ուզում են դէմ լինեն, կարեւորը փաստ չլինի, որ ինձ մեղադրեն, եւ որեւէ սխալ որոշում չկայացնենք: Հնարաւոր է նաեւ սխալ որոշում կայացնենք, բայց ես համոզուած եմ, որ նոր թիմի մէջ կայ եռանդ, եւ բոլորը համերաշխ ձեւով փորձում են գործը առաջ տանել: Դա շատ կարեւոր հանգամանք է ինձ համար: Իսկ ով չի աշխատի, կամ վատ կ'աշխատի, մենք իրենից կը բաժանուենք: Ես էլ համոզուած եմ, որ ինձ մօտ յաջողուելու է»,- ասաց վարչապետը:

Անդրադառնալով ԲՀԿ-ի այն յայտարարութեանը, որ կառավարութեանը ժամանակ են տալու, որպէսզի տեսնեն, թէ որքանով իրականութիւն կը դառնան նոր կառավարութեան խոստումները, եւ եթէ չկատարուեն դրանք, ապա կը պահանջեն նաեւ այս կառավարութեան հրաժարականը, Աբրահամեանն ասաց.- «Ասում են՝ տեսնենք, եթէ ծրագրերը կ'իրականացնի, նորմալ կ'աշխատի, հրաժարականը չենք պահանջի, չի աշխատի, կը պահանջենք, շատ նորմալ գնահատական է, ես գոհ եմ»:

# Յովիկ Աբրահամեանը Մտադիր Է Ստեղծել «Վարչապետների Ակումբ»

ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեանը մտադիր է նախկին վարչապետների ներուժն օգտագործել՝ նրանց մի կառոյցում համախմբելով: ԱԺ-ում կառավարութեան ծրագիրը ներկայացնելուց յետոյ պատասխանելով ՀՀ նախկին վարչապետ Հրանդ Բագրատեանի հարցերին ու առաջարկութիւններին՝ նշեց. «Քանի որ այս դահլիճում նստած են երկու նախկին վարչապետներ, ուզում եմ տեղեկացնել, որ ցանկանում եմ ստեղծել «Վարչապետների ակումբ», որտեղ կը ներգրաւուեն ՀՀ բոլոր վարչապետները, եւ կը քննարկուեն տնտեսական, քաղաքական գործընթացները»:

Յովիկ Աբրահամեանը նկատեց, թէ հաշուի կ'առնուի նրանց փորձը, գիտելիքները. «Դա, իմ կարծիքով, լաւ գաղափար է: Համոզուած եմ, որ նախկին վարչապետներն իրենց գիտելիքներով, փորձով կ'օգնեն իրականացնել մեր ծրագիրը»:

Վարչապետը բացատրեց, թէ իր ցանկութիւնն է, որ ժողովուրդն ապրի բարեկեցիկ կեանքով. «Եւ այս հարթակը թոյլ կը տայ նախկին վարչապետներին իրենց գաղափարներով օգնել ու նպաստել երկրի զարգացմանը»:

«Հայ ազգային կոնգրէս» խմբակցութեան պատգամաւոր Հրանդ Բագրատեանը առաջարկին դէմ չէր. «Շնորհակալութիւն՝ ակումբ ստեղծելու համար: Մենք ժլատ չենք, կը կիսուենք, միշտ էլ կիսուել ենք»:

Յովիկ Աբրահամեանն էլ իր հերթին նշեց, թէ իր համար անհասկանալի է այն ուժերի պահուածքը, որոնք չեն ուզում կառավարութեան հետ համագործակցել: «Սակայն, քանի դեռ իմ համբերութիւնը չի հատել, շարունակելու եմ համագործակցութեան ձեռք մեկնել»,-ասաց նա:

# Առաջարկուող Միակ Այլընտրանքն Առայժմ Խորհրդարանական Կառավարումն Է

Նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների յանձնաժողովը Հայաստանում գործող կիսանախագահական համակարգին իբրեւ միակ այլընտրանք առայժմ առաջարկում է խորհրդարանականը:

Սահմանադրական բարեփոխումների վերաբերեալ կազմակերպուած հանրային քննարկման ժամանակ «Ազատութեան» հարցին ի պատասխան այդ մասին ասաց Սահմանադրական դատարանի նախագահ, Հանրապետութեան նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովի ղեկավար Գագիկ Յարութիւնեանը:

«Յանձնաժողովն այդ հարցում դեռեւս վերջնական եզրահանգման չի եկել: Յանձնաժողովը ներկայացրել է առաջին իր մօտեցումը, որ ինչպէս կարելի է բարեփոխել գործող համակարգը բաժանման, հաւասարակշռման տեսանկիւնից: Այսինքն՝ առկայ կիսանախագահական համակարգի սահմանադրական լուծումների հետագայ բարեփոխումները ինչ ուղղութիւններով եւ ինչպէս կարող են իրականացուել: Եւ յանձնաժողովը նաեւ փաստել է, որ կան խնդիրներ, որոնք այդ շրջանակներում թերեւս այդքան արդիւնաւէտ լուծելի չեն, եւ կարող է այլընտրանք լինել նաեւ անցումը խորհրդարանական կառավարման ձեւին», - նշեց նա:

# ԼՈՒՐԵՐ

## Ֆրանսիայի Դեսպան.- «Եկել Է Հարաւային Կովկասը Խաղաղութեան Տարածաշրջանի Վերածելու Ժամանակը»

Եկել է Հարաւային Կովկասը խաղաղութեան, զարգացման եւ կայունութեան տարածաշրջանի վերածելու ժամանակը, Մայիսի 21-ին «Եւրամիութեան ընդլայնման 10-րդ տարեդարձ» խորագրով հանրային քննարկման շրջանակում լրագրողներին ասել է Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազօր դեսպան Անրի Ռենոն:



Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենօ

Դեսպանն ընդգծել է, որ ուժ կիրառելու կամ ուժ կիրառելու սպառնալիքի մասին խօսք լինել չի կարող, դա անընդունելի է: Անդրադառնալով Ադրբեջանի վերջին յայտարարութիւններին, ինչպէս նաեւ Բաքու ԵԱՀԿ ՄԽ-ի համանախագահների այցի ժամանակ այդ երկրի նախագահի եւ արտգործնախարարի բացակայութեանը՝ Ռենոն նշել է. «Ես չէ, որ պէտք է մեկնաբանեմ ԵԱՀԿ ՄԽ-ի տարածաշրջանային այցը: Ես ընդամէնը ցանկանում եմ ուշադրութիւն հրաւիրել հրադադարի 20-ամեակի կապակցութեամբ արուած համանախագահների վերջին յայտարարութեանը, որտեղ նշուել էր վստահութեան մթնոլորտ ստեղծելու կարեւորութիւնը՝ Մադրիդեան երեք իրաաւհաւասար սկզբունքների հիման վրայ Լեռնային Ղարաբաղի խնդիրը խաղաղ լուծելու համար»: Սակայն, ցաւօք, ըստ դիւանագէտի, 20 տարի առաջ հրադադարի վերաբերեալ կնքուած պայմանագիրը չկարգաւորեց իրավիճակը. հիմնախնդիրը մինչեւ հիմա գոյութիւն ունի:

«Կարծում եմ՝ Ֆրանսիան, որպէս ԵԱՀԿ ՄԽ համանախագահ, բոլոր ջանքերը կը գործադրի իր առաքելութիւնը շարունակելու, այսինքն՝ ղարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման ընդունելի լուծման հնարաւոր տարբերակներ որոնելու ուղղութեամբ: Ֆրանսիայի այս պատրաստակամութեան մասին քաջատեղեակ է Հայաստանի եւ Ադրբեջանի բարձր ղեկավարութիւնը», - նշել է Անրի Ռենոն՝ յաւելելով, որ այս պատրաստակամութիւնն առաջին հերթին կը դրսեւորուի ԵԱՀԿ ՄԽ ձեւաչափում, եւ, բնականաբար, ԵՄ լիազօր մարմիններին օժանդակութեամբ:

## Մարզահամերգային Համալիրը Հանուել Է Աճուրդի



Կարէն Դեմիրճեանի անուան Մարզահամերգային համալիրի շէնքը

19 մլրդ 350 մլն դրամ նախնական գնով աճուրդի է հանուել Երեւանի Կարէն Դեմիրճեանի անուան Մարզահամերգային համալիրի շէնքը՝ յարակից տարածքներով հանդերձ:

Այս տեղեկատուութիւնը տեղադրուել է ԴԱՀԿ-ի պաշտօնական կայքում: Շէնքն օտարելու վերջնաժամկէտը Մայիսի 29-ն է: Յայտարարութիւնում նշւում է նաեւ, որ գոյքը հանդիսանում է գրաւի առարկայ:

Պետական գոյքի կառավարման վարչութիւնից «Ազատութեան»-ը փոխանցեցին, որ համալիրը կառավարութեան որոշմամբ օտարուել էր դեռ 2005 թուականին 5 մլն 750 հազար դոլարով Մուրադեան եղբայրներին պատկանող «Բամօ» ընկերութեանը: Պայմանագրի համաձայն աւելի քան 10 մլն դոլար ներդրումներ անելուց յետոյ, շէնքը շահագործման է յանձնուել 2008 թուականին:

Առայժմ յստակ չէ, թէ երբ եւ ինչու է գրաւադրուել ու աճուրդի հանուել համալիրը: Համալիրի աշխատակազմից «Ազատութեան»-ը փոխանցեցին, որ տեղեակ չեն աճուրդի մասին:

ԴԱՀԿ-ից «Ազատութեան»-ն ասացին, թէ հարցի շուրջ մանրամասն հաղորդագրութիւն կը տարածեն աւելի ուշ:

Տնտեսագէտ Վահագն Խաչատրեանի խօսքով՝ «աննախադէպ» է, երբ մասնաւոր սեփականութեան վաճառքն իրականացնում է ոչ թէ մասնաւոր բանկը կամ վարկային որեւէ կազմակերպութիւն, այլ պետութիւնը:

«Երբ 2008 թուականի ճգնաժամից յետոյ Հայաստանի Հանրապետութիւնը 500 մլն դոլարի ռուսական վարկ ստացաւ, այդ ռուսական վարկից օգտուել է նաեւ «Բամօ» ընկերութիւնը, որը ստացել էր 20 մլն դոլար, եթէ չեմ սխալւում: Հետագայում նաեւ այլ վարկեր է ստացել նաեւ ուրիշ կազմակերպութեան միջոցով, էլի ռուսական վարկերից: Ռուսական վարկը 2013 թուականին փակուեց Հայաստանի իշխանութիւնների կողմից: Ամենայն հաւանականութեամբ «Բամօ» ընկերութիւնն այդ գումարները չի փակել», - ասաց Խաչատրեանը՝ շարունակելով. - «Համոզուած եմ, որ լրացուցիչ գումարների կարիք ունի պետութիւնը, դրա համար աճուրդի է հանուել Մարզահամերգային համալիրը»:

Համալիրը, յիշեցնենք, գրանցուած է որպէս հանրապետական նշանակութեան յուշարձան: Համալիրի համահեղինակ, ճարտարապետ Գուրգէն Մուշեղեանն անհանգստացած է: Նրա խօսքով՝ թէեւ մինչեւ օրս նախկին սեփականատէրերը յուշարձանի նշանակութիւնը չեն փոխել եւ տեսքը չեն փչացրել, պարզ չէ, թէ ինչ կը լինի աճուրդից յետոյ:

Պետական գոյքի կառավարման վարչութիւնից «Ազատութեան»-ը տեղեկացրին, որ «Բամօ» ընկերութեանը Մարզահամերգային համալիրի շէնքը օտարուել էր պայմանով, որ պէտք է պահպանուէն կառոյցի նշանակութիւնն ու գործունէութեան ուղղուածութիւնը, եւ այդ պայմաններն ուժի մէջ են մնալու հետագայում:

## «Հայերին Ուղղուած Էրդողանի Ուղերձից Յետոյ 2 Կարեւոր Կէտ Է Ուշադրութիւնից Դուրս Մնացել».- Թուրքագէտ

Ապրիլի 24-ից առաջ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից հայերին ուղղուած յայտնի ուղերձից յետոյ 2 կարեւոր հանգամանք է յայտնի դարձել, որոնք դուրս են մնացել ուշադրութիւնից: Նման տեսակէտ, լրագրողների հետ հանդիպմանը յայտնեց Թուրքագէտ Անդրանիկ Իսպիրեանը:

Իսպիրեանի խօսքով՝ հայերին ուղղուած Էրդողանի յայտնի ուղերձից յետոյ 2 կարեւոր կէտերից մէկն այն էր, որ բացի Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դաւութօղլուից, ով ըստ պնդումների հենց յիշեալ ուղերձի տեքստի հեղինակն է, իշխող կուսակցութիւնից որեւէ աջակցութիւն չի եղել Էրդողանին: «Սա նշանակում է, որ Հայոց ցեղասպանութեան ժխտողականութեան մէջ Թուրքական քաղաքական եւ հասարակական լուրջ կարծրատիպ կայ ձեւաւորուած, որը կոտրելն այնքան էլ հեշտ չէ, թէեւ Էրդողանի ուղերձում որեւէ սպառնալիք չկար Թուրքիայի անվտանգութեանը»,-նշեց Իսպիրեանը:

Թուրքագէտը յաջորդ կէտը համարեց այն, որ Էրդողանի ուղղուած ուղերձը միջազգային հանրութիւնն ընդունեց այնպէս, ինչպէս, որ Թուրքիան ցանկանում էր, որ ընդունուէր: «Գրեթէ բոլոր արեւմտեան յայտնի պարբերականները ողջունեցին Էրդողանի ուղերձը եւ այն որպէս «ներողութեան» տեքստ ներկայացրեցին, չնայած այնտեղ ներողութիւն բացարձակ չկար: Զաւեշտալին այն է, որ հայ հասարակութեան մէջ էլ կային մարդիկ, ովքեր միամտաբար կարծել էին, թէ Էրդողանը ներողութիւն է խնդրել»,ասաց Անդրանիկ Իսպիրեանը:

Նշենք, որ Թուրքիայի պատմութեան մէջ առաջին անգամ վարչապետը Ապրիլի 24-ից առաջ ցաւակցութիւն է յայտնել 1915-ի զոհուածներին, սակայն իր յայտարարութեան տեքստում կրկին չի հեռացել պաշտօնական ժխտողական թէզից:

## Դիմաւորեցին Բողոքի Ցոյցով

Շարունակուածէջ 1-էն

գրոյց ունեցայ մասնակիցներուն հետ», - ըսաւ Ուորլիք, միաժամանակ ընդգծելով. - «Հակառակ անհամաձայնութիւններուն, պէտք է ինչ-որ ելք գտնել, որովհետեւ ամենավատ տարբերակը կրնայ ըլլալ պատերազմական գործողութիւններու վերսկսումը: Ղարաբաղը չափազանց գեղեցիկ է եւ ես տպաւորուած էի տեսնելով այդ երիտասարդներուն: Բոլորիս պարտքն է ապահովել այստեղ խաղաղութիւնը, որպէսզի այս նոր սերունդը ապրի խաղաղ պայմաններու մէջ»:

Արձագանքելով լրագրողներու այն հարցին, թէ այդ վեց կէտերը կրնան նոր պատերազմի հանգեցնել, ամերիկացի համանախագահը յիշեցուց, որ այդ վեց կէտերը նորութիւն չեն եւ նախապէս բազմիցս խօսուած է այդ մասին:

«Կարեւոր կը նկատեմ բան մը շեշտել. այս ամէնը պարտադիր որոշում չէ: Մինսկի Խումբը չի կրնար պարտադրել, մենք այստեղ ենք որպէսզի օգնենք ժողովուրդին, լսենք անոնց կարծիքը եւ հանդիպինք ոչ միայն դէ ֆակտօ իշխանութիւններուն, այլ նաեւ ժողովուրդի հետ», - ըսաւ ան:

Ի տարբերութիւն հայաստանեան իշխանութիւններուն, Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնները համանախագահներուն հետ հանդիպման ընթացքին հերթական անգամ շեշտած են, որ Արցախի համար անկախութիւնը ու ազատութիւնը բացառիկ արժէքներ են եւ վերադարձ անցեալին՝ թէ՛ կարգավիճակի եւ թէ՛ սահմաններու առումով, անկարելի է: Այս մասին ըսուած է Լեռնային Ղարաբաղի նախագահի մամլոյ ծառայութեան տարածած հաղորդագրութեան մէջ, ուր միեւնոյն ժամանակ կը շեշտուի, որ պաշտօնական Ստեփանակերտը հաւատարիմ է Մինսկի Խումբի շրջագիծէն ներս ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման:

## Հանդիպում Հնչակեան Կեդրոնէն Ներս

Շարունակուածէջ 1-էն

թեան անդամ Գէորգ Պերկուպերկեան շեշտեց, որ Հնչակեան Կուսակցութեան աւելի քան 127 տարուայ պայքարը ուղղուած չէ թուրք ժողովուրդի դէմ, այլ Թուրքիոյ պետական ֆաշիստական եւ ուրացող քաղաքականութեան դէմ:

## ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԵԱՆՔ
## ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ





Կազմակերպութեամբ Ս.Դ.Հ.Կ. Հայ-Եւրոպական Խորհուրդին, Շաբաթ, 26 Ապրիլին, Փարիզի Առաջնորդանիստ Սբ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ սրահին մէջ, տեղի ունեցաւ հաւաք-հանդիպում մը Թուրք գործիչ եւ մարդկային իրաւունքներու պաշտպան Էրօլ Էզքօրայի հետ:

Հաւաքին ներկայ էին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Յակոբ Տիգրանեան, վարչութեան անդամ ընկ. Խաչիկ Քեշիշեան, Ս.Դ.Հ.Կ. Ֆրանսայի Վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Գէորգ Սաչլեան եւ անդամներ, նաեւ հոծ բազմութիւն մը:

Հաւաքին բացման խօսքով ելոյթ ունեցաւ ընկ. Գէորգ Սաչլեան, որ ներկայացնելէ ետք օրուան հիւր բանախօսին կենսագրական գիծերը, շեշտը դրաւ Թուրքիոյ կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման անհրաժեշտութեան եւ արդարութեան վերականգնման վրայ:

Օրուան բանախօս Էրօլ Էզքօրայ աւելի քան մէկ ժամուան իր ելոյթով անդրադարձաւ Թուրքիոյ ներկայ քաղաքական իրավիճակին, վերջին ընտրութիւններու արդիւնքներուն եւ Թուրքիոյ դիմագրաւած մարտահրաւէրներուն: Ապա կեդրոնանալով Հայկական Ցեղասպանութեան իրականութեան վրայ, կոչ ըրաւ Թրքական իշխանութիւններուն օր առաջ ճանչնալու Հայկական Ցեղասպանութիւնը: Ան շեշտեց, թէ Թուրքիան չի կրնար ժողովրդավար երկիր դառնալ առանց իր անցեալի գործած ցեղասպանութիւնը ընդունելու:

Էրօլ Էզքօրայի բանախօսութենէն ետք ներկաներ եւ յատկապէս Ս.Դ.Հ.Կ. Նազարբէկ երիտասարդական միութեան եւ Հայ-Եւրոպական Խորհուրդի անդամներ հարցումներ ուղղեցին հիւր բանախօսին:

Փակման խօսքով հանդէս եկաւ Հայ-Եւրոպական Խորհուրդի Ֆրանսայի ներկայացուցիչ ընկ. Սարօ Մարտիրեան, որ մի քանի ժամեր առաջ միայն վերադարձած էր Իսթանպուլէն՝ մասնակցելու Հայկական Ցեղասպանութեան ոգեկոչման հանդիսութեանց? ներկայացնելով Ս.Դ.Հ.Կ. Հայ-Եւրոպական Խորհուրդը առաջին անգամ ըլլալով 98 տարիներ ետք: Ան ներկաներուն փոխանցեց ոգեկոչման հանդիսութեանց հետ կապուած վերջին տեղեկութիւնները:

Հաւաքի աւարտին ներկաներ մասնակցեցան հիւրասիրութեան, որ կազմակերպուած էր Տիկնանց մարմնին կողմէ:

Թղթակից

## ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ԱՃԽԱՀԱՆՔԻ ԶՈՀԵՐՈՒՆ ԹԻՒԸ 301

Թուրքիոյ Սոմա գաւառի մէջ անցնող շաբթուան ընթացքին մէկ ու կէս քլմթ. խորութիւն ունեցող ածխահանքի մը արկածին հետեւանքով մահացած են 301 գործաւորներ: Այս առթիւ քննութիւններ եւ ձերբակալութիւններ կը կատարուին: Կ՚ըսուի թէ «Սոմա Հոլտինկ» ընկերութիւնը պիտի ստիպուի 350 միլիոն լիրա վճարել տուժողներու ընտանիքներուն, ինչպէս հաստուցում: Այս առթիւ Թուրքիոյ իշխանութիւններու կողմէ երեք օր սուգ յայտարարուած էր:

## ԴԱՐՁԵԱԼ ՀԱՅ ԶՈՀԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Քանի մը օր առաջ Հալէպի հայաբնակ Նոր Գիւղ թաղամասին մէջ ինքնաշէն հրթիռի մը պատճառով քանդումներ տեղի ունեցած են: Զոհուած է հայ մը Յարութ Մարգէեան: Վիրաւորներն են Ալիս Պոյաճեան, Հայկանուշ Միրզոյեան, Նուարդ Մարգէեան եւ Անդրանիկ Մալաքեան: Հալէպէն հասած տեղեկութիւններուն համաձայն, Յարութ Մարկէեան մահացած է իր կրած վէրքերուն պատճառով

Պարտադիր զինուորական ծառայութեան ընթացքին զոհուած է հալէպահայ Անդրանիկ Քահքճեանը: Ան կը ծառայէր Տէր Զօրի մէջ եւ զոհուած էր 16 Մայիսին: Նշենք որ սուրիական քաղաքացիական պատերազմի երեք տարուան զոհերու թիւն է 152 հազար:

## ՀԱԿԱ-ՉԻՆԱԿԱՆ ՑՈՅՑԵՐ ՎԻԵԹՆԱՄԻ ՄԷՋ

Չինաստան որոշած է հինգ նաւեր ղրկել Վիեթնամ տեղափոխելու համար իր հպատակները, որոնք ենթարկուած էին հակաչինական խռովութիւններու: Արդարեւ Պէյժինկի իշխանութիւնները քարիւղի հետազօտման վայր մը իրը կը նկատէր Չրային վիճելի տարածաշրջանի մը մէջ:

Չինական լրատու գործակալութեան մը համաձայն առաջին ազատարար նաւը ճամբայ ելած է հարաւային Հայնան կղզիէն: Չինաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր մը յայտնած է թէ արդէն աւելի քան 3000 չինացիներ տեղահանուած են Վիեթնամէն: Իսկ տեղւոյն խռովութիւններու հետեւանքով երկու չինացիներ մահացած են:

Վիեթնամի իշխանութիւնները հրահանգած են կասեցնել հակա-չինական ցոյցերը: Իսկ Հանոյի ոստիկանները ցուցարարներն ու լրագրողները հեռացուցած են չինական դեսպանատան շրջապատէն: Տեղափոխութիւնները կը շարունակուին օդային եւ ծովային ճանապարհներով:

Ձեր Ծանուցումները
Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863
massis2@earthlink.net



# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱԼԷՊԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆՈՅ ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԸՆԿ. ՍԱՐԳԻՍ ԳԱՒԼԱՔԵԱՆԻ ՀԵՏ

# «ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵՆՔ ՄԵՐ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ Ի ՓԱՌՍ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԵՒ ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՎՏԱՆԳ ԱՊԱԳԱՅԻՆ»

Հարցում.- Այս օրերուն ինչպէ՞ս է Հալէպի ապահովական իրավիճակը ընդհանրապէս եւ հայկական թաղամասերու վիճակը մասնաւորապէս:

*Պատասխան.- Դժբախտաբար Հալէպը այս օրերուն կը գտնուի անհաւոր ծանր վիճակի մէջ: Հայապահպանման կեդրոն Հալէպը, որ ազգային, միութենական, մշակութային ձեռնարկներու եռուզեռով կը յատկանշուէր, արդէն երեք տարիներէ ի վեր կը գտնուի ճգնաժամային վիճակի մէջ:*

*Հալէպահայ միութիւններու եւ կազմակերպութիւններու առաջնահերթութիւնը դարձած է հալէպահայութեան օգտակար դառնալու խնդիրը: Անոր համար կազմուած է «Շտապ օգնութեան» մարմին մը, որ կը բաղկանայ երեք համայնքներու եւ երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներէ: «Շտապ օգնութեան» կից կը գործէ օժանդակ մարմին մը, որուն պատասխանատուութիւնը կը կայանայ կարօտեալ ժողովուրդին ուտեստեղէն հայթայթելու, մասնաւորաբար Ս. Գէորգ եկեղեցւոյ շրջանէն համեմատաբար աւելի խաղաղ թաղամասեր փոխադրուած հայ ընտանիքներուն, որոնք աւելի օգնութեան կարիքը ունին: Վտանգը կարմիր գիծը անցած է:*

*Հալէպահայութեան համար անսպասելի էր կացութեան այսքան արագօրէն վատթարանալը, որուն ի հետեւանք գործազրկութիւնը հասած է 85 տոկոսի: Գլխաւոր պատճառը աշխատատեղերու քանդուած ըլլալը եւ կամ անոնց բռնագրաւուած շրջաններուն մէջ գտնուիլն է:*

Հարցում.- Որպէս ապահովական վիճակի հետեւանք, ի՞նչ են հիմնական առօրեայ դժուարութիւնները եւ ի՞նչ միջոցներով օգտակար կը դառնաք գաղութին:

*Պատասխան.- Հալէպահայութիւնը բնաւ պատրաստ չէր այսքան ծանր տնտեսական եւ ընկերային վիճակ մը դիմագրաւելու: Ջուրի եւ ելեկտրականութեան դժուարութիւնները, ինչպէս նաեւ կարգ մը ուտեստեղէններու պակասը եւ սղութիւնը կը կազմեն գլխաւորաբար մեր առօրեայ դժուարութիւնները: Վերջերս ըմպելի ջուրի պակասը դարձած է մտահոգիչ, այդ իսկ պատճառով վարիչ մարմնի թելադրանքով տիրունական ընկերներ նախաձեռնեցին ջուրի մատակարարման աշխատանք մը, ջուրը ապահովելով եկեղեցիներու եւ մզկիթներու տակ գտնուող հորերէն: Այս ջրամատակարարումէն օգտուեցան մեծաթիւ ընտանիքներ, յատկապէս տարեցներէ բաղկացած: Այս նախաձեռնութիւնը գնահատուեցաւ բոլորին կողմէ:*



Հարցում.- Կիլիկեան վարժարանը, եւ կուսակցութեան հովանիին տակ գտնուող միաւորներու աշխատանքը ի՞նչ ընթացքի մէջ է:

*Պատասխան.- Կիլիկեան վարժարանը շարունակեց իր կրթական տարեշրջանը անշուշտ բաւական դժուար պայմաններու մէջ: Այսօր հասած ենք տարեշրջանի աւարտին եւ կը պատրաստուինք ամավերջի հանդէսին, փորձելով կաթիլ մը յոյս եւ ուրախութիւն նուիրել մեր սիրելի ծնողներուն եւ շրջանակին: Այստեղ պէտք է յիշենք նաեւ որ բոլոր կարիքաւոր աշակերտները ստացան օժանդակութիւն:*

*Ակումբի եռուզեռը կախեալ է ապահովական վիճակէն, բայց ասով հանդերձ երիտասարդութիւնը միշտ ներկայ է եւ միշտ պատրաստ օգնելու հոն ուր որ կարիքը զգացուի: Կուսակցութեան հովանիին տակ գործող միաւորները՝ ինչպիսին են Հ.Մ.Մ. կամ Տիրունի Ուս. Երիտ. Միութիւնը կը շարունակեն իրենց աշխատանքը: Նորակազմ Հալէպի վարիչ մարմինը իր լրիւ կազմով աչալրջօրէն կը հետեւի երկրի մէջ տեղի ունեցած քաղաքական ու ռազմական անցուդարձերուն:*

*Մտահոգիչ դարձած է մեծաթիւ ընտանիքներու գաղթը աւելի ապահով վայրեր, ինչպիսին են Լաթաքիա, Թարթուս, Պէյրութ եւ Երեւան:*

Հարցում.- Այս բոլոր դժուարութիւններու կողքին, տակաւին կը տեղեկանանք թէ ձեռնարկներ կը կազմակերպէք բաւական հոծ ներկայութեամբ:

*Պատասխան.- Ինչպէս գիտէք, հայու տոկուն նկարագիրը եւ յարգանքը հանդէպ իր մշակոյթին եւ աւանդութիւններուն, մեզի կը*



*ստիպէ որ հակառակ տիրող կացութեան շարունակենք մեր աշխատանքը, որպէսզի գէթ բարոյապէս յոյս ներշնչենք երիտասարդներուն, որոնք դժբախտաբար այս օրերուն մատնուած են յուսախաբութեան:*

*Միջինքի առթիւ Տիկնանց վարչութիւնը շուրջ 150 տիկիններով նշեց այդ տօնը եւ պահքի ճաշերով պատրաստուած սեղաններու շուրջ փորձեց թեթեւցնել առօրեայ հոգերը:*

*Տիրունի Ուս.Երիտ.Միութիւնը կազմակերպեց ազգային եւ յեղափոխական երգերու փառատօն մը, ուր ներկայ էին մեր բոլոր երիտասարդները եւ ընտանիքները, որոնք ստացան ուժ եւ կորով, նորոգելով իրենց ուխտը Հնչակեան կուսակցութեան:*

*Ցեղասպանութեան 99-րդ տարելիցին նուիրուած համահայկական մակարդակով ձեռնարկ մը տեղի ունեցաւ, ուր ներկայ էին երեք համայնքապետերը, Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսը, երեք կուսակցութիւններու ներկայացուցիչները, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, ինչպէս նաեւ ամբողջ հայութիւնը: Սրահը ծայրէ ծայր լեցուն էր:*

*Բացառիկ էր այս տարուան ձեռնարկը, որ չէր նմաներ նախորդ տարիներուն:*

*Հալէպի պետական համալսարանի բժշկական ամպիոնին մէջ տեղի ունեցաւ Ապրիլեան Եղեռնին հետ առնչուած դասախօսական*

*Շար.ը էջ 18*



# ՍԱՀԱԿԵԱՆ Լ. ՄԿՐՏԻՉԵԱՆ ԳՈԼԷՃԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ ԸՆԿԵՐԱ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՒԱՔԸ ՎԵՐԱՊՐԵՑՈՒՑ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՕՐԵՐԸ



*Հանդիսութեան ներկաներէն խմբանկար մը*

**ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Լոս Անճելըս գաւառի մէջ գործող Սահակեան Լ. Մկրտիչեան Գոլէճի Սանուց Միութեան կազմակերպութեամբ, Մայիս 16, 2014-ի երեկոյեան ժամը 8-ին, Փասատինայի «Սողանալեան» սրահին մէջ տեղի ունեցաւ սահակեանցի սան-սանուհիներու ընկերա-ընտանեկան իւրայատուկ հաւաք մը, որ դրուած էր՝ «Եկէք վերապրինք մեր ուսանողական օրերը» գրաւիչ վերտառութեան ներքեւ:

Լիբանանի մէջ հասակ առած ու իրենց նախակրթական ու երկրորդական ուսումը Սահակեան Բարձրագոյն Վարժարանի Թիթեղածածկ երդիքին տակ ամբարած, Ուսուցչապետ Բենիամին Ժամկոչեանի հայեցի դաստիարակութեամբ լիցքաւորուած եւ իրենց վարժարանին կապուած սան-սանուհիները, պայմաններու բերումով Միացեալ Նահանգներ տեղափոխուած, հոգեկան բարձր տրամադրութեամբ գիրար ողջունեցին՝ «Սահակեանի Օրեր» աւանդութիւն դարձած Մայիսի 10-ով ամրագրուած հաւաքին:

Ընդհանրապէս լուռ ու անաղմուկ կարգով գործող յիշեալ միութեան վարչութիւնը, որ այլազան նախաձեռնութիւններով նաեւ[sic: նիւթապէս] եւ բարոյապէս սատար կը հանդիսանար Սահակեան Լ. Մկրտիչեան Գոլէճին (Լիբանան) եւ Բենիամին Ժամկոչեան Դպրոցին (Երեւան), կազմակերպած էր այս հաւաքը, առիթ ընծայելու համար իրենց դպրոցի երբեմնի սան-սանուհիներուն՝ վերապրելու իրենց ուսանողական օրերը, պատմելով իրենց յուշերէն պատառիկներ, որոնք տպաւորած են զիրենք:

Սանուց միութեան Վարչութեան կողմէ բարիգալուստի եւ հաւաքի միտք բանին պարզաբանող իր ջերմ, այլ սիրալիր խօսքերով Տիկ. Վարդուհի Գազանճեան յայտնեց, թէ այս Ընկերա-ընտանեկան հաւաքը յայտագիր չունի: Ներկաները իրենք իրենց պատումներով պիտի փոխարինէին զայն, անպատրաստից եւ առանց հրաւէրի:

Ներկայ սահակեանցիներէն Նորայր Խաչատուրեանի առաջարկին անսալով, ազնուափայլ հանդիսավարուհին, ներկաները հրաւիրեց վայրկեան մը ոտքի ելլել՝ յարգելու համար յիշատակը մեզմէ յաւէտ բաժնուած Սահակեան Գոլէճի նուիրեալ բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիներու՝ Բենիամին Ժամկոչեանին, Նշան Քէօմիւրճեանի, Յովհաննէս Երէցեանի, Սարգիս Խայեանի, Յովհաննէս Հաննէսեանի, Տիկ. Մարի Գարանեանի, Հրանդ Գանդրունիի, Օրդ. Նուարդ Եղիազարեանի, Օրդ. Նուարդ Ջանազանեանի, Յովսէփ Ճիրեանի, Սարգիս Կիւլլիւճեանի, Փօլ Կիրակոսեանի եւ Ժիրայր Նայիրիի յիշատակը: Անոնք ոչինչ խնայած էին իրենց սան-սանուհիներուն ուսում ջամբելու համար:

Այդ պահուն, ներկայ սան-սանուհիները ողջունեցին իրենց յիշողութեան պաստառին վրայ սիրելի ուսուցիչներուն այցելութիւնը:

Այնուհետեւ տեղի ունեցաւ ջերմ հիւրասիրութիւն չքեղ ու ճոխ սեղաններու շուրջ բոլորուած ներկաներուն, որոնք կամովին, մէկ-մէկ կը մօտենային բարձրախօսին, պատմելու համար իրենց ապրած Սահակեանի յուշերէն: Զիրար հրմշտկող յուշապատումներու գեղումները անսպասելի խանդավառութիւն ստեղծեցին սրահէն ներս:

Սահակեան Գոլէճի սաներէն, ներկայիս հասարակական գործիչ՝ Քրիս Շահինեան իր հիացմունքը յայտնեց, որ այս կրթական օճախի ներդրումը մեծ է եղած հայ իրականութենէն ներս: Սահակեան Գոլէճը՝ ըստ ան, ազգին տուած է մեծ թիւով բազմաշնորհ գործիչներ, ղեկավարներ, գրողներ, խմբագիրներ, ուսուցիչներ եւ տնօրէններ: Ինք հպարտ էր իր դպրոցով:

Տիկ. Ջարմինէ Տիւզեան-Սահակեան պատմեց Տնօրէն Ժամկոչեանի ցուցաբերած դաստիարակչական ու հայրական վարքագծին մասին, որ սանը կը կապէր դպրոցին, որպէս իր երկրորդ տունը: Առիթով մը, իր մէկ սուտը իրեն արժած էր պրն. Տնօրէնին ապտակին:

Անգամ իր սահմանած պատիժները ընդունելի էին, ըստ Միմի Ատալեան որ պատմեց թէ, ինչպէս դասարանի մէջ, դասի չի հետեւելով, կողմնակի, երբ «Ամիրային Աղջիկը» վէպը կը կարդար՝ տնօրէնէն ստացած ապտակը երբեք չէր մոռցած:

Նազարէթ Գեւոնեան դիտել տուաւ, թէ՝ Ժամկոչեանի խորհուրդին ընդառաջ երթալով սաներ որդեգրելու դրական վարժութիւնը ունեցած էր: Այդ վարժութիւնը մեծ գոհացում սկսած էր պատճառել իրեն: Այդ օրուընէ սաներ կ'որդեգրեմ: Կը հաւատամ, ըստ Գեւոնեան, մեծագոյն հաճոյքը՝ անկարին օգտակար ըլլալու մէջ գտած եմ:

Հասարակական ծանօթ գործիչ, Գաբրիէլ Մոլոյեան դիտել տալէ ետք թէ՝ ինք Սահակեան Գոլէճի սան եղած չէ թէպէտ, «բայց մեծապէս գնահատած եմ Ժամկոչեան ուսուցչապետը ու անոր ներդրումը մեր ազգային, հայրենասիրական, կրթական եւ հայապահպանման բնագաւառներէ ներս»:



*Սահակեան Լ. Մկրտիչեան Գոլէճի Սանուց Միութեան Վարչութեան անդամները*

Սահակեան Սանուց Միութեան Վարչութեան անդամուհիներէն Տիկ. Նազելի Ալեքսանեան պատմեց, թէ ինչպէս Պրն. Ժամկոչեան մարզահանդէսներ կը կազմակերպէր առանձին: Ամէն առաւօտ, ան սաները մարզանքի կը հանէր իր ուլթսունը անց տարիքին:



Սահակ Գըլթըրֆեան, անդրադառնալէ ետք Ժամկոչեանի տիւ ու գիշեր ներկայութիւն ըլլալու մասին դպրոցէն ներս, ուր կը վազէր ամէն կարիքի: Ան իբրեւ ուսուցիչ, Տնօրէն ու ծանր աշխատող, օրինակելի բարձր արժանիքներու տէր էր: Ս. Գըլթըրֆեան համոզում գոյացուց, որ ան արժանի է համազգային գնահատութեան եւ մեծարանքի:

Սահակեանի շրջանաւարտներէն՝ Լենա Մանուկեան կարդաց գոլէճի «Ուսանող» պարբերաթերթի մէջ լոյս տեսած իր շահեկան յուշագրութիւնը:

Ծանօթ լուսանկարիչ Յովհաննէս Ճէրէճեան (Շիրազ), իր կարգին պատմեց զուարճալի յուշեր, որոնք խանդավառեցին մթնոլորտը:

Եզրափակիչ ելոյթներու շարքին, հանդէս եկաւ Սահակեան Լ. Մկրտիչեան Գոլէճի շրջանաւարտներէն՝ Տօքթ. Համբիկ Սարաֆեան, հանգամանօրէն բաղդատականը ըրաւ Բենիամին Ժամկոչեանի տնօրինած Սահակեան Բարձրագոյն Վարժարանի եւ վերակառուցուած նորին՝ Պէպօ Սիմոնեանի տնօրինած Սահակեան Լ. Մկրտիչեան Գոլէճին: Ան դիտել տուաւ, թէ այն ոգին որ իշխած էր Ժամկոչեանի օրով, անշեղօրէն կը տիրապետէր Տնօրէն Սիմոնեանի շրջանին եւ այդ ոգին արտայայտութիւն կը գտնէր մեր սաներուն ջամբուած մարդկային, ընկերային, հայրենասիրական եւ ազգապահպանման լիարժէք դաստիարակութեան մէջ:

Հաւաքը իր աւարտին հասաւ խանդավառ մթնոլորտի մէջ, որմէ ոգեւորուած սահակեանցիներ անակնկալօրէն, սրտաբուխ նուիրատուութիւններ կատարեցին: Նուիրատուներուն անուանացանկը «Մասիս» պիտի լոյս ընծայէ յաջորդ համարով:

Գնահատելի նախաձեռնութիւն մը, որուն համար կը շնորհաւորենք Սահակեան Լ. Մկրտիչեան Գոլէճի Սանուց Միութեան Վարչութիւնը, որ իր կարելին ըրած էր յաջողութեամբ պսակելու համար Սահակեանի օրուան նուիրուած սահակեանցիներու ընկերա-ընտանեկան հաւաքը, ուր ամէն մի սահակեանցի վերապրեցաւ իր ուսանողական օրերը:

## ՄԵԿՆՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Մայիսի 19ին Մայր Հայրենիք մեկնեցաւ «Հայաստանի Ծնողազուրկ Երեխաների Օգնութեան Ֆոնտ»ի հիմնադիր Յովհաննէս Պալայեանը, մասնակցելու համար ֆոնտի կողմէն հիմնականօրէն վերանորոգուած Արարատի շրջանի Պալատիկ գիւղի դպրոց-մանկապարտէզի շէնքի բացման հանդիսութեան:

Դպրոցի պաշտօնական բացման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Մայիս 25ին, 2014:

## ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

*ՓՐՈՖ. ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ*

*Դոկտ. Փրոֆ. Գէորգ Խրլոպեանի ( 1927-2010) երկար տարիների տքնաջան աշխատանքի արդիւնքը հանդիսացող վերոյիշեալ խորագրով հատորը լոյս տեսաւ 2006 Թ. Պէյրութում «Միմի եւ Արմէն Յարութիւնեան» հիմնադրամի մեկենասութեամբ: Այն բաղկացած է 406 ստուար էջերից: Գրքի կազմի առաջին երեսին պատկերուած է նկարիչ՝ Արծօ Չաքմաքճեանի «Եղեռն» գործը:*

*Հատորը բաղկացած է առաջաբանից, ներածութիւնից եւ 14 խիստ բովանդակալից գլուխներից եւ վերջաբանից: Այն համալրուած է նաեւ համապատասխան քարտէզներով եւ յաւելուածով, ուր անգլերէն լեզուով տրւում են տարբեր հեղինակաւոր գիտնականների եւ մտաւորականների կողմից Հայոց Ցեղասպանութիւնը հաստատող փաստագրական գրութիւններ:*

*Առաջին հերթին կարդալով առաջաբանը, անմիջապէս պարզ է դառնում, թէ ինչո՞ւ է հեղինակը ձեռնարկել եւ երկար տարիներ աշխատել այս թեմայի շուրջ:*

*Դեռեւս մանուկ հասակից հեղինակի յիշողութեան մէջ միշտ վառ են մնացել իրենց գերդաստանի մարդկանց, իր ծնողների ու հարազատների պատմած եղեռնային սարսափազդու յուշերը: Թէ ինչպէ՞ս իր հարազատների կորուստն ու դաժան տառապանքները տեւապէս ցաւով ու արցունքով են լցրել նրա աչքերն ու ամբողջ էութիւնը:*

*Այսպէս է որ Մեծ Եղեռնի փաստը ամբողջ կեանքում հանգիստ չի տուել իրեն եւ տարիների ընթացքում հաւաքելով վերապրողների աղիողորմ վկայութիւնները, ինչպէս նաեւ տարբեր լեզուներով մի շարք երկրների արխիւներում պահուող փաստագրական նիւթերն ու մինչ այդ հրատարակուած աղբիւրագիտական հրատարակութիւնները, շարադրել է «Ցեղասպանութիւն» խորագրով իր այս երկը:*

*Յայտնի է, որ 1965 Թ. Հայոց Ցեղասպանութեան 50-ամեայ տարելիցը Հայաստանում նշուեց համաժողովրդական մեծ պայքարով: Պատմաբաններն ու գիտնականները սկսեցին աւելի մեծ չափանիշով խորանալ երիտթուրքերի կողմից Հայոց Ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան հարցին: Ինչպէս հեղինակն է նշում, այդ դարձաւ համընդհանուր գիտական հետաքրքրութեան առարկայ եւ սկսուեց «Հայոց Ցեղասպանութեան» քաղաքականացման փուլը:*

*Փրոֆ. Գէորգ Խրլոպեանը առաջինն էր, որ սկսեց օգտագործել ցեղասպանագիտութեան եզրը, դեռեւս 1980 Թ. սկսեալ: Ինչպէս տեսնում ենք այս հատորն էլ լոյս է տեսել այդ նոյն խորագրի տակ:*

*Հարկ է նշել, որ իր այս խիստ կարեւոր աշխատութեան մէջ կատարել է տեսական բանիմաց ընդհանրացումներ, թէ ինչպէ՞ս է յղացուել Հայոց Ցեղասպանութեան ծրագիրը եւ ինչպէ՞ս է գործադրուել այն: Հեղինակը մանրամասն վերլուծելով Հայոց Ցեղասպանութեան դրդապատճառները տուել է նաեւ դրա իմաստաւորումը եւ պատժելիութեան հիմնաւորումը, միեւնոյն ժամանակ առաջ քաշելով հողային եւ նիւթական կորստի հատուցման խնդիրը:*

*Յատկանշական է, որ այսօր բաւականաչափ թուրք առաջադէմ մտաւորականներ հասկանում եւ գիտակցում են 1915 Թ. հայութեան հետ կատարուած ահաւոր ցեղասպանութիւնը եւ բացայայտ յայտնում են իրենց վրդովմունքը այդ մեծագոյն ողբերգութեան մասին: Թուրքերէն լեզուով թարգմանւում եւ լոյս են տեսնում հայ եւ օտար ցեղասպանագէտների գրքերը: Միեւնոյն ժամանակ առանձին թուրք գրողներ համարձակօրէն յօդուածներ եւ գրքեր էլ հրատարակում են հայերի կոտորածների մասին:*

*Հայոց Ցեղասպանութեան իրականութեանը անտեղեակ այսօրուայ թուրք սերունդը, կարդալով այդ գրութիւնները, լիովին գաղափար է կազմում՝ ի՞նչ է տեղի ունեցել 1915 Թ. արեւմտահայութեան հետ:*

*Գէորգ Խրլոպեանը իր այս մեծարժէք աշխատութեան 375րդ էջում գրել է:*

*«Պատմագիտութեան զարգացման ու ճշմարտութեան բացայայտման ճանապարհը խափանողների շարքում իրենց պատուաւոր տեղն է գրաւում առաջադէմ թուրք մտաւորականութիւնը, որն այսօր աշխարհը հիացնում է իր գիտական խորաթափանցութեամբ, լուսամտութեամբ, քաջութեամբ ու մարդասիրութեամբ: Նրանք այն ռահվիրաններն ու հերոսներն են, որոնք թուրք ժողովրդի պատիւը պիտի փրկեն: Նրանք քաջ գիտակցում են, որ ուշ թէ կանուխ ողջ աշխարհը պիտի ընդունի թուրքերի կողմից Հայոց Ցեղասպանութեան փաստը, եւ աւելի պատուաբեր են նկատում այն շուտ կատարել, որպէսզի հարկադրուած չլինեն նորանոր սուտեր ու կեղծ տեսութիւններ հնարելու...»:*

*Փրոֆ. Գէորգ Խրլոպեանը յատուկ ուշադրութիւն է դարձրել նաեւ Հայոց Ցեղասպանութեան պահանջատիրութեան խնդրին: Նա նշել է, որ Ցեղասպանութեան, ջարդի, կոտորածի ընթացքում տուժած կողմը ունենալու է չորս բնոյթի վնասների կամ կորուստների հատուցում:*

*Այսպէս.*

*1. Հայոց անշարժ, ինչպէս նաեւ շարժական գոյքը տեղահանութեան եւ կոտորածների ընթացքում մատնուեցին կորստի: Նիւթական այդ կորուստները հաշուարկւում են միլիառներով, որը մինչեւ այսօր չի հատուցուել:*

*2. Ցեղասպանութեան ժամանակ հայերը տուին աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակներ: Հեղինակը նշում է, որ «Մարդկային կորուստի պահանջատիրութիւնը երբեմն մտնում է նիւթական հատուցման մէջ: Մարդու կեանքը ստանում է դրամական արտայայտութիւն: Այս հատուցումից էլ զուրկ են մնացել հայերը»:*

*3. Երրորդ հատուցման խնդիրը բերում ենք ամբողջութեամբ: «Մշակութային կորուստը նոյնպէս անհատուցանելի է: Կործանուած կամ քանդուած պատմական յուշարձանները մշակութային արժէքները անվերադարձելի են: Կարելի է նորը ստեղծել, կարելի է նմանակը շինել, բայց ոչ այն՝ ինչ բարբարոսը քանդել է: Բայց ցաւալին այն է, որ եթէ այլ պարագաներում Ցեղասպանութեան դադարեցումով դադարում է նաեւ մշակութային կորուստը, «մշակութային ցեղասպանութիւնը», Հայոց*

*Շար.ը էջ 18*

## ԱՆՈՒՇ ՆԱԳԳԱՇԵԱՆԻ ՀԵՏ

*ՀՐԱՉ ՍԵՓԵԹՃԵԱՆ*

*Արեւմտահայերէնի ճակատագիրով մտահոգ լոսանճելըսահայութեան համար, Չորեքշաբթի, Մայիս 14-ի երեկոն հերթական դեղամիջոցը եղաւ երկարելու համար «Արեւմտահայերէն» կոչուող «հիւանդ»ին կեանքը: Մենք՝ գրող թէ ընթերցող, խօսող թէ լսող, մէկական բժիշկներ ենք, բուժքոյրեր ու բուժակներ, հող, ջուր եւ սնունդ հասցնողներ մեր սիրելի հիւանդին: Ան մահամերձ չէ... տակաւին: Այո, տակաւին...*

*Առաջնորդարանի Գալայճեան սրահին մէջ Անուշ Նագգաշեանի հետ հանդիպելու, անոր ստեղծագործութիւններուն աւելի մօտէն ծանօթանալու, ջուրը աղբիւրէն խմելու օրն էր այդ երեկոն՝ կազմակերպութեամբ Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի մասնաճիւղին եւ հովանաւորութեամբ ու գործակցութեամբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմին, գլխաւորութեամբ բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Ներկայ էին մեծ թիւով սաղիմահայեր, մտաւորական փաղանգ մը, հոգեւորականներ, միութենականներ, գրասէր լայն հասարակութիւն մը:*

*Օրուան հանդիսավարն էր մեր բեմերու վարպետ՝ Պրն. Բարսեղ Գարթալեան, որ ամենայն պատասխանատուութեամբ վարեց օրուան յայտագիրը: Ներկայացնելէ ետք Երուսաղէմէն Լոս Անճելըս ժամանած բանաստեղծուհի, հասարակական գործիչ, մեծ հայրենասէր Անուշ Նագգաշեանը, հրաւիրեց ազգային-հասարակական գործիչ Պրն. Արա Ահարոնեանը, որպէսզի ներկայացնէ Նագգաշեան ազգային-հասարակական գործիչը:*

*Ահարոնեան անդրադարձաւ Անուշ Նագգաշեանի կեանքի հանգրուաններուն՝ կազայէն՝ Երուսաղէմ, Երեւան, Փարիզ եւ այսօր՝ «Ջուրի ճամբու» վերածած Երուսաղէմ-Երեւան երթուղին, որ աւիշ ու կեանք կը ներարկէ բանաստեղծուհիին մէջ, իմաստաւորելով անոր կեանքը, հայ կեանքը, հայու կեանքը: Ահարոնեան անդրադարձաւ Նագգաշեանի հրատարակած գիրքերուն, Երուսաղէմի մէջ բանաստեղծուհիին հասարակական կեանքին՝ ինչպէս ՀԵՄ-էն ներս, խօսեցաւ Հայաստանի Գրողներու Միութեան անոր անդամութեան եւ ազգային այն շունչին մասին, որ ի՛րն է, Անուշինն է, եւ միաժամանակ մերն է, բոլորինս է:*

*Երկրորդ բանախօսն էր հանրածանօթ հասարակական գործիչ, "The Armenian Observer" շաբաթաթերթի խմբագիր՝ Փրոֆ. Օշին Քէշիշեան, որ կեդրոնացաւ բանաստեղծուհիին գրական վաստակին վրայ: Քէշիշեան մէջբերումներ կատարելով Նագգաշեանի բանաստեղծութիւններէն, նմուշներ հրամցուց, երեւան հանելով ոճական թէ կառուցային կազմութիւնները անոր ստեղծագործութիւններուն: Իսկ թեմանե՞րը՝ հայրենասիրութիւն, սէր՝ իր ընդհանրութեան մէջ, հայ մշակոյթ, գրականութիւն, մէկ բառով՝ Արմենիզմ է Անուշի փիլիսոփայութիւնը. սէր եւ հայկականութիւն: Թէ՛ հայաստանեան ուսանողական տարիները եւ թէ անկէ ետք կատարած այցելութիւնները, քաղաքացիութիւն ստանալը, այս բոլորը կոփած են Նագգաշեանի մէջ այն հայը, սփիւռքահայը որ է ան այսօր: Իր մէջ կը տեսնենք նաեւ իգական սեռի ներկայացուցիչը մեր մտաւորականութեան, եւ Քէշիշեանի իսկ խօսքերով՝ «մեծ տառապանքներէ կ՚անցնի ան, բայց կը մնայ ներող, լաւատես, համամարդկային». երկու բառով, Քէշիշեան ըսաւ՝ «Երուսաղէմ եւ Արարատ», ահա թէ ուր է բանաստեղծուհիին հոգին:*

*Գեղարուեստական յայտագի-*

*Շար.ը էջ 18*



# Massis Weekly

**Volume 34, No. 19** **Saturday, May 24, 2014**


## NATO Chief Sees 'Strong Partnership' With Armenia




BRUSSELS -- NATO Secretary General Anders Fogh Rasmussen praised Armenia for extending its military presence in Afghanistan and developing a "strong partnership" with the U.S.-led alliance as he met with the Armenian defense and foreign ministers in Brussels last Tuesday.

Defense Minister Seyran Ohanian and Foreign Minister Edward Nalbandian visited the NATO headquarters in the Belgian capital for an annual meeting with NATO's executive body, the North Atlantic Council. They also held separate talks


**Continued on page 2**


## $405,000 Raised for the Armenian Genocide Digitization Project

### USC Institute of Armenian Studies Celebration Hailed with Joy



LOS ANGELES -- The halls of the California Club rang with laughter and excitement as over 300 guests gathered for an 'Appreciation Evening' on Thursday April 10, sponsored by the Leadership Council of USC Institute of Armenian Studies and graciously hosted by Mr. & Mrs. Charles & Julia Ghailian, under the auspices of Dean Steve Kay of Dornsife College of Arts & Sciences.

The Institute's memorable celebration was attended by a plethora of notable guests – Former Governor of California the Hon. George Deukmejian; Former Chair USC Board of Trustees Mr. Edward Roski, Jr.; Former Chair USC Board of Trustees Mr. Stanley Gold, represented by his son Mr. Charles Gold; Board member USC Board of Trustees Mr. John King; Retired Federal Court Judge the Hon. Dickran Tevrizian; Consul General of the Republic of Armenia to Los Angeles the Hon. Sergey Sarkisov; community leaders, benefactors, supporters and fellow Trojans.

The exceptional evening opened with warm welcoming remarks by co-chairs Diane Cabraloff and Lori Muncherian, followed by Dean Steve Kay's spirited oration on USC's commitment and his bright vision of the Institute's future development. In taking note of the Institute's many successes, the Dean extended his deep gratitude to Mr. Gerald Turpanjian (Turpanjian Chair of Contemporary Armenian Studies), Ms. Sarah Chitjian (Chitjian Fund for Armenian Genocide Studies), and Dr. Richard Hrair Dekmejian, the Institute's Founding Director who was greeted by a standing ovation for his leadership and academic roles, and proceeded to outline the Institute's achievements and future challenges.

The Dean presented Appreciation Medals to Gov. George Deukmejian, Mr. Gerald Turpanjian/Mrs. Patricia Turpanjian, Ms. Sara Chitjian and Dr. Richard Dekmejian, and acknowledged the years of support and service to the Institute by Dr. Mihran Agbabian, Hon. Dickran Tevrizian, Mr. Harut Sassonian and Mrs. Savey Tufenkian.

Charles Ghailian, Chair of the Institute's Leadership Council, took the podium to thank Dean Kay's supportive leadership, as well as the generosity of Mr. Stepan Martirosyan and that of three families for establishing Endowment Funds – Mr. and Mrs.


**Continued on page 4**


## Karabakh Residents Meet OSCE Minsk Group Co-Chairs With Protest




STEPANAKERT -- The U.S., Russian and French mediators who went to Karabakh on May 17, were met with protests in the Kashatagh area of Berdzor (former Lachin). The protesters were holding placards with slogans such as "We made our choice in 1991", "Respect democratic principles", You are responsible", "Respect our rights", "Condemn the aggressor."

The protesters, virtually all of them residents of the town and nearby villages that used to be populated by Azerbaijanis, condemned the mediators' most recent statement that stressed, among other things, the need to return to Azerbaijan the Armenian-controlled territories surrounding Karabakh. They were also angry at similar calls that were separately made by James Warlick, the U.S. co-chair, in a speech delivered earlier this month.

"We want the co-chairs to know that we gained independence in 1991 and our lands cannot be a subject of haggling," said one young man. "They need to understand that we are the masters of our land."

"Should Armenians again be deported? That's absurd," another protester said, referring to one of the Basic Principles of resolving the Nagorno-Karabakh conflict put forward by the United States, Russia and France.

James Warlick was asked how he imagines return of the refugees to Nagorno-Karabakh.

"Safarov was also so-called refugee from Nagorno-Karabakh. How do you imagine their return? Agression continues, and Safarov case is another proof," one of the residents told Warlick.

In response the OSCE diplomat recalled his statement, underscoring that "all six elements are necessary for peace" and none of them can be taken out.

"We respect the rights of those who demonstrate peacefully even when we disagree," Warlick tweeted afterwards. "In Lachin, I listened," he said, posting a picture of himself talking to the protesters.

Speaking to reporters in Stepanakert on Sunday, Warlick said he was surprised by the unprecedented protest but called his conversation with its participants useful. "Nagorno-Karabakh is so beautiful and I'm so impressed to see so many young people," he said. "It's our duty to ensure … this new generation lives in peace."

"We are not coming here to impose any settlements," Warlick stressed. A compromise peace deal must be acceptable to all conflicting parties, he said.


**Continued on page 2**


## NKR President to Minsk Group Co-Chairs: Return to the past impossible

STEPANAKER (Armradio.am) -- Artsakh Republic President Bako Sahakyan received co-chairs of the OSCE Minsk group.

At the beginning of the meeting the President congratulated the newly appointed French co-chairman Pierre Andrieu for taking over the high post, expressing hope that he would continue active participation in the process of the Azerbaijani-Karabakh conflict's peaceful settlement.

Bako Sahakyan expressed gratitude to the former French co-chairman Jacques Faure for impartial and efficient work.

Referring to the Azerbaijani-Karabakh conflict settlement process President Sahakyan underlined that the official Stepanakert was committed to its peaceful settlement within the framework of the Minsk Group.

The President stressed that freedom and independence are exceptional values for Artsakh and return to the past both in terms of status and borders is impossible.

The current situation along the border line and regional trends were also touched upon.

## Shootout in Yerevan: Five People Wounded, Suspect Arrested



YEREVAN -- A Suspect in a shooting near Yerevan open-air souvenir market has been detained. Gor Arakelyan is a son-in-law of Prosperous Armenia MP Karo Karapetyan.

According to the Police's press service, Arakelyan also surrendered his Makorov pistol upon reporting to the police.

Five people were wounded as a result of the shooting in Yerevan. The inccident took place at about 1:30 p.m. on Saturday in front of the "Progresstech Armenia" Company building near "Vernissage," the Police reported.

A criminal case has been launched under Articles 235.1 and 258.4 of the Criminal Code of the Republic of Armenia. Probe into the details of the case is underway.

The injured were taken to University Hospital #1, where they were operated on, news.am reports. One of them is in grave condition, others are out of danger. The hospital has published the names of the citizens – Norayr Harutyunyan, Valery Hovhannisyan, Myasnik Hayrapetyan, Albina Badalyan and Mnatsakan Sukiasyan.

According to some reports, argument and a scuffle broke out because of a parking place. The son-in-law of the MP decided "to settle the dispute" by firing at offenders and passers-by.

## Armenian Genocide Museum-Institute on Forbes Must-See List



MOSCOW -- The 9/11 Memorial Museum in New York is opening its doors to visitors today. On this occasion the Forbes Russia presents another eight memorial museums worth seeing. These include the Holocaust Museum in Jerusalem, the Water Disasters Museum in Crimea, the Chernobyl Museum in Kiev, the Gulag Museum in Moscow, the Peace Memorial Museum in Hiroshima, the Armenian Genocide Museum-Institute in Yerevan, the Titanic Belfast Museum in Northern Ireland and the Apartheid Museum in Johannesburg.

Forbes reminds that the Armenian Genocide Museum-Institute was opened in 1995, on the 80th anniversary of the Armenian Genocide. Built on the slope of the hill, where the Tsitsernakaberd Memorial Complex is situated, the two-storey building is almost completely underground.

The exposition of the museum is mostly comprised of photos and documents proving the mass killing and deportation of Armenians from the Ottoman Empire in 1915.

The Museum Institute is part of the Tsitsernakaberd Memorial Complex opened in 1967. Set high on a hill, the complex occupies 4,500 square meters of territory and consists of three main buildings: the Memorial Wall, the Sanctuary of Eternity (Memorial Hall & Eternal Flame) and the Memorial Column "The Reborn Armenia."

Renovation works are currently under way, and the museum is expected to reopen in April 2015, on the 100th anniversary of the Armenian Genocide.

www.massispost.com

## Armenian Villager Dies After Azeri Captivity



YEREVAN — Mamikon Khojoyan, a 77-year-old resident of an Armenian border village, died on Tuesday more than two months after returning home from captivity in Azerbaijan with what appeared to be serious injuries.

Khojoyan, crossed into Azerbaijan from his Verin Karmiraghbyur village in Armenia's northern Tavush region in unclear circumstances on January 28. He was detained by Azerbaijani villagers and handed over to military authorities.

The authorities in Baku claimed afterwards that Khojoyan was part of an Armenian commando squad that attempted to carry out a cross-border incursion. The Armenian military and Verin Karmiraghbyur residents dismissed these claims, saying that he suffered from mental disorders and strayed into Azerbaijani territory by accident.

The elderly man was set free and repatriated to Armenia with the help of the International Committee of the Red Cross on March 4. He was immediately hospitalized. An RFE/RL correspondent who was allowed to visit Khojoyan at a Tavush hospital saw wounds all over his body. Doctors there suggested that he was injured in Azerbaijani custody. Azerbaijan's Defense Ministry denied that he was tortured.

Khojoyan underwent further treatment in Yerevan before returning to Verin Karmiraghbyur last month. According to Kamo Chobanian, the village mayor, his health condition sharply deteriorated a week ago. "The torture suffered in captivity has had its effects," he said of the villager's death.

Just days after Khojoyan's release, another Verin Karmiraghbyur resident crossed the border with Azerbaijan and was detained in similar circumstances. The 23-year-old Arsen Khojoyan was freed a month later. He assured journalists in Yerevan that he was not ill-treated in detention.

## NATO Chief Sees 'Strong Partnership' With Armenia

**Continued from page 1**

with Fogh Rasmussen.

"Both sides stressed their commitment to continue developing a strong partnership," read a NATO statement on the talks. It said they have already "developed a solid political dialogue and a broad range of civilian and military areas of cooperation."

That cooperation has significantly increased over the past decade in line with an Individual Partnership Action Plan (IPAP). The repeatedly modified cooperation framework has led to Armenia's participation in NATO-led multinational missions in Afghanistan and Kosovo and reforms of its armed forces.

According to the Armenian Foreign Ministry, Ohanian briefed the North Atlantic Council comprising ambassadors of NATO's 28 member states on the status of the ongoing defense reforms. Nalbandian, for his part, spoke about Armenian foreign policy, regional security and the Nagorno-Karabakh conflict, a ministry statement said.

Nalbandian and Rasmussen announced at the council meeting that the two sides are about to launch a fresh version of the IPAP laying out joint activities for 2014-2017. The NATO chief was also reported to thank Armenia for deciding to keep 120 or so Armenian soldiers in Afghanistan after the official completion of NATO-led combat operations there in December. The Defense Ministry in Yerevan reaffirmed last week that they will join a new NATO mission dubbed Resolute Support.

The talks in Brussels come as a further indication that Armenia, which is a member of the Russian-led Collective Security Treaty Organization (CSTO), has no intention to freeze ties to NATO because of Russia's standoff with the West over the crisis in Ukraine.

The CSTO's secretary general, Nikolay Bordyuzha, said late last month that the military alliance of six ex-Soviet states is suspending cooperation with NATO because of the latter's stance on Ukraine. He accused NATO of "blackmailing" the CSTO member states.

Visiting Yerevan in 2012, Fogh Rasmussen said that Armenia can continue to deepen relations with NATO while maintaining its military alliance with Russia. "There is no contradiction between having good relations with Russia and at the same time having a well-functioning partnership with NATO," he said at the time.

## Karabakh Residents Protest

**Continued from page 1**

In his May 7 speech, the U.S. envoy listed the six key elements of the framework peace accord drafted by the mediators. One of them, he said, stipulates that "the occupied territories surrounding Nagorno-Karabakh should be returned to Azerbaijani control."

The mediators travelled to Karabakh on the second leg of the latest round of their shuttle diplomacy aimed at kick-starting the stalled peace process. They met with Armenia's President Serzh Sarkisian, Foreign Minister Edward Nalbandian and Defense Minister Seyran Ohanian in Yerevan on Friday.

The diplomats proceeded to Baku on Monday through one of the most volatile sections of the Armenian-Azerbaijani "line of contact" around Karabakh. They monitored the ceasefire regime there before crossing into Azerbaijani-controlled territory.

# Genocide Monument to be Built on Fresno State Campus



FRESNO, CA — Fresno's Armenian Community has come together to form the Armenian Genocide Centennial Committee, an umbrella association established to commemorate the 100th anniversary of the Armenian Genocide throughout this year and 2015. Working under the theme "Commemoration, Education, Inspiration", the committee is made-up of representatives from the community's religious, educational, social, and political organizations.

"The commemoration of the 100th anniversary of the Armenian Genocide is clearly a significant moment for Armenians all around the world," said AGCC Chairman and California State University, Fresno Professor of Armenian Studies Sergio La Porta. "As Fresno is one of the largest and most active Armenian communities in the Western Hemisphere, I think it resonates particularly strongly here. It is home to a proud and resilient Armenian community and is an especially poignant place to commemorate those who died in the Genocide and those who toiled afterwards to insure that we would have a much better world to live in."

The centerpiece of the AGCC's efforts will be the monument that will be constructed on the Fresno State campus. Designed by Fresno architect Paul Halajian, the structure will embody symbols of cultural meaning to the Armenian people. Built from béton brut and Tufa stones, its principal components will be nine columns arranged in a circular pattern and angled inwards, reminiscent of the Tzitzernagapert monument in Armenia. The nine pillars represent the six provinces of historic Armenia, Cilicia, the Diaspora, and the Republic of Armenia. The columns will gradually descend in height around the circle, with the first measuring 19 feet high and the last 15 to underscore the significance of the year 1915. An incomplete halo will be set above the columns, symbolizing both the fracture left by the Genocide and the unity of the Armenian people.

In keeping with the group's mission to educate, the AGCC plans several endeavors to reach out to the broader Central Valley to raise awareness about the Armenian Genocide. A San Joaquin Town Hall event entitled Man's Inhumanity To Man—The Last Hundred Years will be held on March 18, 2015 at the Saroyan Theatre, and a dramatic play about the Genocide is in the works, scheduled to open at Fresno State on May 1, 2015.

The committee also plans to offer workshops for secondary teachers of the Fresno and Clovis Unified School districts as well as other area districts to inform them how best to educate their students about the Armenian Genocide. The proposed lesson plans not only address the Armenian Genocide in particular, but also place Armenia's tragedy within the larger historical context of Man's Inhumanity to Man, including the treatment of Native Americans, the Holocaust, and the more recent state-sponsored ethnic cleansings in Rwanda and the Balkans. The committee stresses that though the Genocide occurred a century ago, the crime is still very much a modern human rights issue—especially in light of the maneuverings of the Republic of Turkey to deny or revise this historical fact.

In conjunction with the Fresno Philharmonic, the committee will host a concert to be held on April 25th at the Saroyan Theatre. The AGCC hopes that the evening's program—which will include scared, classical, and new pieces—will celebrate the spirit of the Armenian people even in the wake of the Genocide. Also as part of the centennial's musical events will be a performance by the Khachaturian Trio for clarinet, violin, and piano at Fresno State on November 14, 2014.

These and other events and activities will supplement the Fresno Community's traditional roster of commemorative gatherings, including the religious ceremony of the local churches, the Raising of US and Armenian flags on the steps of Fresno City Hall, the commemoration at the Ararat Cemetery, and the Fresno State remembrance in the university's Free Speech Area.




# Gifting Peace of Mind



The birth of a child is the happiest moment in the life of a parent. When the newborn arrives, the cares of the world disappear, lost, as the parents are enchanted with their creation. Those cares, although temporarily gone, will sometimes affect the newborn child: clothing, food, diapers, and other goods that cost money which a family might not have.

It was with this in mind that in 2002, Armenia Fund created the Ororots Program.

Just as a cradle keeps a baby safe, the program assists families with the most need so that they feel protected in their most vulnerable months right after a new child is born.

Until they are one year old, children receive packages filled with the things any newborn child needs: diapers, soap, baby food, clothing like jackets and socks. The help varies depending on the age of the child. Once they're a few months old, the babies get toys, too.

The impact of these packages is immeasurable and although the cost would be out of reach for any of the families that receive them, each one costs only about $150. The packages are sent to needy families once every three months.

It's not easy choosing which families need help; there are unfortunately more than can be reached. But, as with all of its endeavors, Armenia Fund has developed a system which seeks to distribute the assistance as fairly as possible. For the Ororots Program, local councils were established throughout the country.

Mostly in rural communities, these councils are composed of local health and social services officials, as well as members of public organizations. The councils are tasked with determining which families have the greatest need and ensuring that those families are the ones which receive the help provided by the Ororots Program. When it comes time, Armenia Fund partners with non-governmental organizations (NGOs) working on women's issues to distribute the aid packages.

Because an important goal is to maximize the value of every dollar which is donated, the packages are sent only when there are enough funds to provide packages to 100 families. With continued support from donors, Armenia Fund will be able to expand the program beyond its current scope. The objective is to expand to all regions of Armenia, especially the border areas, if donation goals are met.

Sitting in a maternity ward in one of the villages of Gegharkunik, Lori, Shirak, or Syunik, the last thing on a parent's mind should be whether they will be able to clothe or feed their new child. With Armenia Fund's help through the Ororots Program, over 1500 families haven't had that worry, letting them focus on the joy of welcoming their new baby.

To learn about how you can help the Ororots Program, call 800-888-8897 or 818-243-6222.



# UCLA Research Program in Armenian Archaeology & Ethnography Present International Conference



The UCLA Research Program in Armenian Archaeology & Ethnography at the Cotsen Institute of Archaeology announces its inaugural event, an interdisciplinary conference that brings together 14 subfields within Armenian Studies. The conference seeks to assess the field holistically, and participants from eight countries will present position papers on May 31, 2014 and interact with each other and the academic community of Southern California at Lenart Auditorium Fowler Museum from 9am to 5pm.

The Research Program was established through a long-standing partnership between the Cotsen Institute of Archaeology and Zaruhy Sara Chitjian of the Hampartzoum and OvsannaChitjian Foundation, whose previous successful projects have included the excavations of the Areni-1 cave complex in the Republic of Armenia. The discoveries of the oldest leather shoe and the earliest wine press have changed the world's understanding of human civilization.

Future plans of the Research Program include several projects that will expand its activities in the Republic of Armenia, such as environmental research, which will open new venues in addressing the issues of Global Warming, and a project on archaeological human DNA. Future projects outside the Republic of Armenia will include the documentation of the Armenian cultural heritage worldwide, including collaborative projects in Turkey and other countries, as well as the preservation of the ethnographic legacy of the Armenian Genocide in the Armenian Diaspora. All of these projects are aimed at the long-term goal of increasing the visibility of the Armenian cultural heritage worldwide, with its inclusion in textbooks and through mass media.

For further information, please contact Dr. Gregory Areshian at gareshia@ucla.edu

# Memorial Day Hokehankist at Fresnos Ararat Armenian Cemetery

FRESNO - A Requiem Service, Hokehankist, will be recited on Monday, May 26, 2014, at 10:00 a.m. in observance of Memorial Day, at Ararat and Masis Ararat Armenian Cemeteries, with the participation of the Armenian Clergy of the San Joaquin Valley.

Memorial Day, an American holiday observed on the last Monday of May, honors men and women who died while serving in the U.S. military. Originally known as Decoration Day, following the Civil War, it became an official federal holiday in 1971.

The Armenian Clergy will conduct Requiem Services at both Cemeteries. The first service will be at 10:00 a.m. at Ararat Cemetery, 1925 W. Belmont Avenue, by the flag pole. A second service will follow at 10:30 a.m. in the nearby Masis Ararat Cemetery, 250 N. Hughes Avenue, at the Soghomon Tehlirian Monument.

"In observance of Memorial Day it is customary to visit cemeteries in remembrance of our loved ones," stated Allan Y. Jendian, Community Relations Director. Jendian invites members of the Armenian Community of the San Joaquin Valley to attend and participate in this Memorial Day observance.

For further information call the Cemetery Administrative Office at (559) 292-2415.

# $405,000 Raised

**Continued from page 1**

Albert and Tove Boyajian, Mr. and Mrs. Vahe and Veronique Karapetian, and Dr. and Mrs. Vatche and Shoushig Cabayan. Two former chairs of USC Board of Trustees were also honored – a Gratitude Award given for Mr. Stanley Gold's vision and financial support of the Armenian Genocide Digitization Project (received by his son Mr. Charles Gold), and Mr. Edward Roski, Jr. was presented a painting by Arthur Sarkissian (collection of Mr. and Mrs. Greg and Caroline Tufenkian) for his valuable support of the Institute since its founding in February 2005.

The highlights of the evening were two visual messages from former US Ambassador to Armenia the Hon. John Evans and Executive Director of the Shoah Foundation Institute Dr. Stephen Smith, extending congratulations and thanks to the Institute and its Leadership Council for their achievements.

The dramatic zenith of the Banquet came when a $405,000 check was displayed on the screen as our grand benefactor Mr. Gerald Turpanjian presented it to Dean Kay on behalf of donors and supporters for the balance needed to complete the Armenian Genocide Digitization Project by the Shoah Foundation Institute. The Digitization Project, including the first 400 survivor testimonies of J. Michael Hagopian's Archives at the Armenian Film Foundation, will be made ready in time for the Centennial of the Armenian Genocide in April 2015. This crucial and timely donation was hailed by the enthusiastic guests, reflecting a promising prelude to the Institute's 10th Anniversary Gala on September 28, 2014 – a date to remember, honor and raise USC Institute of Armenian Studies to ever greater heights.

# Exhibition on "Armenians of Bitlis" Held at Fresno State



**By Denise Altounian**
**Hye Sharzhoom, Staff Writer**

For many Armenians in Fresno, the city of Bitlis, located today in the Republic of Turkey, holds a special place in their hearts. Not only was it the birthplace of the family of noted Fresno native William Saroyan, but also the birthplace to many of the Armenians who settled in Fresno in the years following the Armenian Genocide.

For much of its history, including the Ottoman period, Bitlis flourished as a center of Armenian culture and tradition. Much of this legacy has almost vanished in the nearly hundred years following the Genocide of 1915.

However, in recent months there has been an attempt to shed light on the history of the city and the impact Armenians had there. Ara Sarafian, director of the Gomidas Institute in London, England, returned to Fresno State to discuss his most recent endeavor, a "bridge-building initiative" which was started in June 2013 to build contacts between Armenians, Turks, and Kurds.

On Sunday, March 30, Fresno State students, faculty, and the community were invited to the opening of a new exhibit, "Remembering the Armenians of Bitlis," on display at the Henry Madden Library for the month of April. The exhibit was organized by Sarafian, with the support of Prof. Barlow Der Mugrdechian and the Armenian Studies Program, to highlight some of the new documentation on Bitlis and to show never before seen photographs of Bitlis.

"This initiative is an important step in the process of recovering so much of Armenian culture lost as a result of the Genocide," stated Prof. Barlow Der Mugrdechian, Director of the Armenian Studies Program. "It is also a way to build bridges between people."

Sarafian was on hand in Fresno to open the exhibit and to give a talk "Down and About Bitlis: An Exhibition on Bitlis Armenians on the Shores of Lake Van."

Sarafian initiated contacts with residents of Bitlis last year, and the exhibit was a culmination of extensive research in Russian, Ottoman and Armenian archives to examine the number and role of Armenians in the Ottoman Empire, especially the eastern region. This culminated in an exhibition, "The Armenians of Bitlis" (Bitlis Ermenileri), that first debuted on March 1-2, 2014, in Tatvan, Turkey, located on the shores of Lake Van.

As Sarafian explained, some people were doubtful that it would be possible to display data that directly contradicts the Turkish government position on the Genocide. However this project represents a new opportunity for scholarship in the area. The display consisted of ethnographic maps and photographs of Armenians living in Bitlis, documenting the historic presence of Armenians there. The exhibit were based on research at the ABCFM Archives (Houghton Library, Harvard University), Mt. Holyoke College Archives (Mass.), AGBU Nubarian archives (Paris), and the Ottoman Prime Ministry Archives (Istanbul).

The photographs represented a significant milestone, because many people in Eastern Turkey had never actually seen an Armenian face before. The photos showed the daily lives of the Armenians, their schools, churches, and more. Although it may seem a small step, these photographs represent the human connection that is often lacking when it comes to Armenian, Kurdish, and Turkish relations.

The maps, based on demographic research from Russian and Turkish sources, displayed the ethnic composition of the Ottoman Empire. The research indicates that Armenians and Kurds in the Bitlis and Van provinces actually made up the majority of the population, with few Turks in the region. The Turkish government has deliberately argued that Armenians and Kurds were not in the majority.

One interesting outcome of the initiative was the immense support and interest in the project shown by the Kurdish population of Bitlis. They were very supportive of unearthing Armenian history in Turkey. Many Kurdish youth acknowledge the Armenian Genocide and want to know what role they can play in moving forward. Several Kurdish politicians and prominent attorneys attended the debut of the exhibit in Tatvan. According to Sarafian, as many as one in six Kurds in these areas may have Armenian ancestors.

This exhibit was a significant step forward in the future of Armenian Studies in Turkey. It is important that projects like these continue to record history before it is lost. Many Armenian landmarks still exist in Turkey and any attempt to falsify history can never eliminate local memories. The Armenian issue is far from closed and it is up to the new generation to continue scholarship in the area.

# ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ (1995-1999)

*ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ*



## Նախընթաց Պարագաներ

*Երջանկայիշատակ Տ. Տ. Վազգէն Ամենայն Հայոց Հայրապետի վախճանումէն ետք, 1994 թուի սեպտեմբերին սկսեալ, Մայր Աթոռի տեղապահը՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան ձեռնարկեց Ազգային- Եկեղեցական Ժողովի գումարումին որ պիտի ընտրէր յաջորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ. Սարգիսեանի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրութիւնը եղաւ աննախընթաց եւ անսպասելի, նկատի ունենալով Կիլիկիոյ Կաթողիկոսին իր Աթոռին վրայ մնալու ցկեանս յանձնառութիւնը կանոնական կերպով կատարուած Անթիլիասի Մայր Տաճարին մէջ 1977 թուի Մայիսին յատուկ ուխտառութեամբ:*

*Գարեգին Բ. Կիլիկիոյ Կաթողիկոսը ամենէն ուշիմ եւ զարգացած հոգեւորականներէն էր, աւազանէն Նշան, ծնած 1932-ին Սուրիոյ հայաշատ Քեսապ գիւղաւանին մէջ բարեհամբաւ Յակոբ եւ Ովսաննա ծնողաց յարկին տակ: Ուսման նախնական տարիներէն ետք որպէս յառաջադէմ աշակերտ, Նշան Սարգիսեան ընդունուած է Կիլիկեան Աթոռի Անթիլիասի դպրեվանքը՝ 1945 թուին, երբ նոյն տարին Ամերիկայի Արեւելեան թեմէն Անթիլիաս կը հասնէր թեմի Առաջնորդ Տ. Տ. Գարեգին Ա. Յովսէփեանց Մեծի Տանն Կիլիկիոյ ընտրեալ Կաթողիկոսը:*

*Դպրեվանքի առաջին դասարանի ուսանող Նշան նոյն տարին ներկայ եղած է Գարեգին Հայրապետի օծման եւ գահակալութեան: Ուսանողութեանս առաջին տարին յԱնթիլիաս, երբ 1949-ի Սեպտեմբերին նոր ժամանած էի Գահիրէէն եւ նշանակուած երրորդ կարգի ուսանող, Նշան նորընծայ սարկաւագ մըն էր, մեզմէ երկու կարգ երէց, որ երեսնամեակ մը ետք, 1977-ին, ընդունելէ ետք Գարեգին անունը իր քահանայական ձեռնադրութեամբ, պիտի դառնար նաեւ մեծանուն Գարեգին Հայրապետին յաջորդներէն որպէս Գարեգին Բ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:*

*Դպրեվանքի դասընթացքները գերազանց յաջողութեամբ աւարտելով, Նշան սարկաւագ կուսակրօն քահանայ կը ձեռնադրուէր 1952 թուին Վարագայ Խաչի տօնին, երբ մի քանի ամիս առաջ, Յունիսին, վախճանած էր Տ. Տ. Գարեգին Յովսէփեանց Կիլիկիոյ Կաթողիկոսը, եւ ի յարգանս Հոգելոյս Հայրապետին ձեռնադրութիւնները յետաձգուած էին: Գարեգին Սարգիսեան շուտով վարդապետական գաւազանի մասնաւոր աստիճանները կը ստանար եւ որպէս դաստիարակ եւ փոխ-տեսուչ պաշտօնի կը կոչուէր վերատեսուչ Դերենիկ եպիսկոպոս Փոլատեանէն որ եղած էր զինք ձեռնադրողը:*

*Կիլիկիոյ Տ. Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի արտօնութեամբ, Դերենիկ եպիսկոպոսի միջնորդութեամբ, եւ Եկեղեցեաց Համաշխարհային Խորհուրդի կարգադրութեամբ Գարեգին վարդապետ Սարգիսեան Անգլիոյ Օքսֆորտի համալսարան կ՚ընդունուէր ուր երկու տարի ուսանելէ ետք կը գրէր անգլերէն լեզուով իր աւարտաճառը՝ «Քաղկեդոնի Ժողովը եւ Հայ Եկեղեցին», որ իսկոյն կը հրատարակուէր Անգլիոյ SPCK յայտնի հրատարակչատան կողմէ ու կը ստանար Պսակաւորի ակադեմական աստիճանը: Անթիլիաս վերադարձին տեսուչ կը կարգուէր Դպրեվանքին որ Անթիլիասի Կաթողիկոսարանէն Տ. Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսի տնօրինութեամբ փոխադրուած էր լեռնալիբանան՝ Պիքֆայայի կաթողիկոսարանը ուր կային բնակութեան եւ դասասրահներու շէնքերն ու Սուրբ Աստուածածին մատուռը: Սոյն կարգադրութիւնը սակայն մնայուն չեղաւ եւ մի քանի տարի ետք դպրեվանքը Անթիլիաս վերադարձաւ:*

## Ընտրութեան Պարագաները

*Գարեգին Բ. Կիլիկիոյ Կաթողիկոսին մէկ Աթոռէն միւս Աթոռը անցնիլը եղաւ անակնկալ եւ հապճեպ, նկատի ունենալով Տանն Կիլիկիոյ միաբանութեան բոլորովին անտեղեակ ըլլալը, մանաւանդ երբ շուտով յայտնի եղաւ նաեւ իր «անվերադարձ» մեկնումը դէպի Ս. Էջմիածին: Որպէս հետեւանք այս բոլորին, միաբանութեան եւ Կիլիկեան Աթոռի վարչական կազմերէն ներս բնականօրէն շփոթութիւն յառաջացաւ, առանց սակայն իրենց կողմէ խնդրին մասնաւոր կարեւորութիւն մը տալու եւ կամ մտահոգութիւն մը յայտնելու:*

*Այդ անակնկալ կացութեան ետին կար նորանկախ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեան, երբ 1992-ին Հայաստանի Հանրապետութիւնը դարձած էր ինքնանկախ՝ Սովետական 70-ամեայ տիրակալութեան վախճանին: Հանրապետութեան առաջին Նախագահ ընտրուած էր Լեւոն Տէր Պետրոսեան երբ Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոս տակաւին ի կեանս էր: Հայրապետը վախճանեցաւ 1994 Օգոստոսին, եւ ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Տեղապահ ընտրուեցաւ Երուսաղէմի հայոց Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեան:*

*Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսին Մայր Աթոռ տեղափոխուելու եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելու աճապարանքին մէջ կարեւոր բաժին ունեցաւ Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան, որ լիովին զօրավիգ կանգնեցաւ պետական իր հեղինակութեամբ, «վստահեցնելով» որ Գարեգին Բ. Կիլիկիոյ պիտի ընտրուէր Ամենայն Հայոց Կաթողիկոս: Հայաստանի Նախագահը առաջին հերթին միամիտ, չըսելու համար անգիտակ ու անիրատես դուրս եկաւ, հակառակ իր պատմագէտի եւ բանասէրի համբաւին, «համոզուած» ըլլալով որ Վազգէն Ա. Կաթողիկոսի վախճանումէն ետք միակ կաթողիկոս մը կը մնար՝ յանձին Տ. Տ. Գարեգին Բ. Կիլիկիոյ, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելով Հայ Եկեղեցւոյ պառակտումը պիտի վերացնէր ու միահեծան հովուէր Հայաստանեայց Եկեղեցին:*

*Նման անիրատես եւ անփոյթ աճապարանք Գարեգին Կաթողիկոս ինք շատ լաւ գիտէր, եւ սակայն լռելեայն կ՚ընդունէր ու կը համաձայնէր իր փափաքը իրագործելու՝ բազմելու Հայ Եկեղեցւոյ բարձրագոյն Աթոռին: Հայրապետը կարիքը ունէր նաեւ ձերբազատուելու Անթիլիասի մէջ իր վրայ ճնշող քաղաքական կուսակցութեան կաշկանդումներէն, որուն պատճառով իր շարք մը ծրագիրները ըստ երեւոյթին չէր կրնար իրագործել: Նաեւ ի մտի ունէր իր անձնական իղձը գերագահ Աթոռին բազմելու որքան ատեն որ Հայաստանի պետական իշխանութեան ղեկավարին ուժն ու խոստումը ի զօրու կը մնային:*

## Հայրապետական Ընտրութիւն

*Հետեւեալ տեղեկութիւնները կ՚արձանագրեմ այստեղ քաղելով «ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագրի տուեալ համարէն: 1995 ապրիլ 3-ին Մայր Տաճարին մէջ պատարագած է Ամերիկահայ թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեան, եւ յընթացս սուրբ պատարագի տեղի ունեցած աշխարհական պատգամաւորներու երդման արարողութիւնը՝ Տեղապահ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի երդմնեցուցչութեամբ: Հոգեւորական պատգամաւորներ կարիքը չունին երդմնառութեան: Իսկ յաւարտ սուրբ պատարագի հոգեհանգստեան պաշտօն կատարուած է երջանկայիշատակ Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շիրիմին վրայ:*

*Ժամը 11-ին Վեհարանին մէջ բացումը կատարուած է Ազգային-Եկեղեցական Ժողովին Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Գազանճեանի աղօթքով եւ մասնակցութեամբ 398 պատգամաւորներու: Ժամը 2:30-ին դահլիճէն ներս մուտք գործած են Տեղապահը՝ Թորգոմ Պատրիաքը, Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսը եւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Լեւոն Տ. Պետրոսեան՝ «ուղեկցութեամբ պետական աւագանիին»: Ժողովական նիստերուն կը նախագահէր Տեղապահ Պատրիարքը եւ կ՚ատենապետէր դատախազ Տարիէլ Բարսեղեան:*

*Յաջորդ օր, Ապրիլ 4-ին տեղի ունեցած է Ժողովին երկրորդ նիստը ուր Տեղապահ Թորգոմ Արքեպիսկոպոս Մայր Աթոռոյ վեցամսեայ տեղեկագիրը կարդացած է, որմէ ետք պատգամաւորները Մայր Տաճար մուտք գործած են կատարելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը՝ գաղտնի քուէարկութեամբ: Ներկայացուած ութանուն ցանկին վրայէն հետեւեալ երեքը ստացած են առաւելագոյն քուէները, սակայն արդիւնքը ակնկալուածին պէս նպաստաւոր չէ եղած առաջին նիստին, քանի որ Կիլիկիոյ Կաթողիկոսէն ետք առաջին թեկնածուն՝ Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեան աւելի քուէներ ստացած է, ինչպէս կը կարդանք ամսագրին մէջ:*

*Գարեգին Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ 111 ձայն*

*Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեան 123 ձայն*

*Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսեան 61 ձայն*

*Յաջորդ եւ վերջնական ընտրութիւնը պիտի կատարուէր յիշեալ երեք հոգեւորականներէն որոնք ստացած են հետեւեալ քուէները.*

*Գարեգին Բ Կաթողիկոս Կիլիկիոյ 186 ձայն*

*Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեան 145 ձայն*

*Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսեան 61 ձայն*

*Համաձայն Կանոնագրին կէսէն աւելի քուէ ստացող թեկնածուն պիտի դառնար Կաթողիկոս Ամենայն Հայոց: Այդ պատճառաւ յաջորդ ընտրութեան կարիքը կար երկու բարձրագոյն քուէները ստացողներուն՝ Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսին եւ Գարեգին Ներսիսեան Արքեպիսկոպոսին միջեւ, սակայն, մէջբերելով «Էջմիածին» ամսագրէն, «Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեան որդիական ակնածանք ցուցաբերելով դիմեց ժողովին եւ ասաց. Ինձ թվում է այսօր պէտք է աւարտենք այս ընտրութիւնները: Իմ կողմից ես ուզում եմ շնորհաւորել Վեհափառ Հօրը որպէս Նորընտիր Հայրապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց»:*

*Յայտնապէս 398 քուէարկու պատգամաւորներու կէսէն նուազ էին թիւերը այդ պահուն, եւ հարկ էր օրինական ձեւով շարունակել ու յաջող վերջ մը տալ ընտրութեան՝ ստանալով 199-էն մէկ աւելի քուէները: Այսուհանդերձ Գարեգին Կիլիկիոյ Կաթողիկոսը հռչակուեցաւ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս առանց առարկութեան, որուն ետին կար անշուշտ պետական կանխորոշումը: Հայրապետը իսկոյն Տաճարի Իջման Սեղանի առջեւ իր ուխտը կը կատարէր, եւ ապա Մայր Տաճարի դռները կը բացուէին եւ Նորընտիր Հայրապետը իր օրհնութիւնը կը բաշխէր ժողովուրդին:*

*Գարեգին Կաթողիկոսի կարգադրութեամբ Հայրապետական Օծում տեղի չունեցաւ քանի որ, իր բացատրութեամբ, ինք արդէն օծում ստացած էր երբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուած էր 1977 թուին: Տեղապահ Թորգոմ Պատրիարքի նախագահութեամբ եւ մասնակցութեամբ ներկայ բոլոր եպիսկոպոսներուն Նորընտիր Հայրապետը ձեռնադրութիւն ստացաւ ու կատարեց իր ուխտառութիւնը, տալով հայրապետական իր պատգամը: Նորընտիր Հայրապետը կոչուեցաւ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց:*

*Ապրիլ 5-ի Ժողովի վերջին նիստին Գարեգին Կաթողիկոս կը նախագահէր եւ իր խօսքերը կը ներկայացնէր Հայ Եկեղեցւոյ ծրագիրներու վերաբերմամբ: Առարկելի երեսը կատարուած ընտրութեան մէջ այն էր որ պետական միջամտութեամբ լարուած էր 1995 Ապրիլի Մայր Աթոռ գումարուած Ազգային-Եկեղեցական Ժողովը, երբ միւս կողմէն Կաթողիկոսին գիտցածը Նախագահը կ՚անգիտանար, այսինքն այն իրողութիւնը որ Անթիլիաս բնական ընթացքով իր կայքն ու գործը պիտի շարունակէր առանց որեւէ շփոթի կամ շարժումի:*

*Գարեգին Կաթողիկոսի մեկնումին վրայ բնական եւ կանոնական կերպով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կը մնար ձեռնարկել յաջորդ կաթողիկոսի ընտրութեան առանց որեւէ նկատումի կամ մտահոգութեան: Կատարուածը իր լրումին հասաւ հակառակ ուղղութեամբ, երբ նորընտիր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը առաջին պատեհութեամբ, 1995 Յուլիսին, Անթիլիաս վերադարձաւ օծելու համար իր յաջորդը՝ Տ. Տ. Արամ Ա. Կիլիկիոյ Կաթողիկոսը:*

# ԷՍԹՈՆԻԱՅԷՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ. «ԵԿԵՂԵՑԻՆ ՆՈՐ ՇՈՒՆՉ ՏՈՒԱՒ ՄԵԶԻ»

*ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ*

Արտեմ Դաւիթեանցը ծնած է Պաքու, Ազրպէյճան: Ծնողները եկած են Ղարաբաղէն եւ Իրանէն: 1968-ին Հայաստան մեկնած է համալսարանական ուսումի համար եւ մասնագիտացած՝ ռուսաց լեզուի եւ գրականութեան մէջ: 1975-ին հաստատուած է Էսթոնիոյ Թալլին մայրաքաղաքը: Երկար տարիներ եղած է ռուսերէնի դասախօս Թալլինի համալսարանին մէջ, իսկ ներկայիս հիմնած է իր անձնական-ընտանեկան հրատարակչական ու թարգմանական աշխատանքներու գրասենեակը:

Թալլինը միջնադարեան քաղաք է, որ 1154 թուականին գտնուած է արաբ հետազօտողի մը կողմէ: Թալլինի կեդրոնական հին քաղաքը 1997-ին ԵՈՒՆԵՍՔՕ-ի կողմէ ցանկագրուած է իբրեւ «Մշակութային ժառանգ»: Էսթոնիա 1940 թուականին մտած է Խորհրդային համակարգին մէջ, իսկ 1990 թուականին դուրս եկած ու ստեղծած է իր անկախ հանրապետութիւնը: Ան այսօր Եւրոպական Միութեան անդամ է եւ քաղաքակրթութեան մէջ ունի սկանտինաւեան երկիրներու եւ գերմանական մշակութային դրոշմ: Խաչատուր Աբովեան Էսթոնիոյ Թարթու քաղաքի համալսարանին մէջ ստացած է իր ուսումը: Իր անունով ալ յիշատակութեան գրութիւն մը կայ համալսարանին մէջ:

Արտեմը միշտ ալ ջատագովը կական դպրոցը շաբաթական կը կազմակերպուէր կիրակի օրերը: Հոն կը սորվեցնեն հայոց լեզու եւ պատմութիւն, նաեւ կը կազմակերպուին մշակութային հաւաքներ եւ երեկոներ: Գաղութը ունի ամսական դրութեամբ հայերէնով մէկ ժամուան հաղորդում՝ պետական ձայնասփիւռի կայանէն:

Հայապահպանումը գլխաւոր հիմնահարց է հայ գաղութին համար, բայց մանաւանդ՝ նոր սերունդին, որ ծնած է Էսթոնիա: Արտեմ ամուսնացած է տեղացիի մը հետ: Այս մէկը լսելով՝ չեմ ուշանար իմ հետաքրքրասէրի հարցումս ուղղելու՝ քիչ մըն ալ «չարաճճիութեամբ»: «Ազգային գիտակցութիւնդ այսքան բարձր է, ինչպէ՞ս ամուսնացար ոչ հայուհիի մը հետ…»: Ուղղակի եւ կտրուկ հարցումիս տրուած պատասխանը եւս նոյն ձեւով էր. «Սիրեցի զինք»: Արտեմ ունի չորս զաւակ: Մանչ զաւակը՝ Դաւիթը, կը խօսի հայերէն: Արտեմ հպարտ է իր որդիով. «Դաւիթը՝ տղաս, Հայաստան այցելեց քանի մը տարի առաջ: Ներկայիս կը մտածէ հոն տեղափոխուիլ: Կը կարծէ, որ Հայաստանը լաւ երկիր է ապրելու»: Եթէ Հայաստանը «լաւ» երկիր է, բայց նաեւ «ինքնութիւն» է: Եւ այդ ինքնութեան կանչն է, որ տեղ մը, այս կամ այն ձեւով, կը մղէ եւ կ՚անհանգստացնէ իւրաքանչիւրիս ազգային գիտակցութիւնը:

Հայկական այս փոքր «գումարտակը» Էսթոնիոյ մէջ նուաճեց



եղած է հայկական կեանքը կազմակերպելու՝ Թալլին հաստատուած առաջին տարիներէն իսկ: Մօտաւորապէս 1500 հայեր կ՚ապրին Էսթոնիոյ մէջ: Անոնք մեծ մասամբ կու գան Հայաստանէն եւ նախկին Խորհրդային Միութեան երկիրներէ: Արտեմը մեծ աշխատանք տարած է, որպէսզի կեանքի կոչէ «Հայկական ազգային միութիւնը», որ սկսած է 1977-ին եւ պաշտօնապէս արձանագրուած է 1978-ին: Արտեմ երկար ժամանակ վարած է այս կեդրոնին ատենապետութեան պատասխանատու պաշտօնը: «Ուզեցինք ունենալ հայկական կեդրոն մը, ուր քաղաքական հակումներ չըլլան», ըսաւ Արտեմ՝ շարունակելով. «Մեր նպատակը հայոց լեզուն եւ մշակոյթը պահելն է: Բայց նաեւ այդ օրերուն բոլորս ալ Խորհրդային Միութենէն կու գայինք եւ քիչ թէ շատ՝ նոյնանման ենթահողերով, ուստի կարիք չզգացինք կուսակցական հակումներու»:

Հայկական կեդրոնը հայութիւնը համախմբող կորիզ է: Հայկական մէկ այլ ինքնութիւն: 1987-ին հայերը ճանչցուեցան որպէս փոքրամասնութիւն-համայնք Էսթոնիոյ մէջ՝ դառնալով առաջինը այս իմաստով, այլ փոքր խմբաւորումներու մէջ: Բայց պէտք էր աւելին, կար անհրաժեշտութիւնը հոգեւոր ամրոցի մը՝ եկեղեցւոյ: Պետական արտօնութեամբ եւ դասաւորումով Էսթոնիոյ կառավարութիւնը հայկական գաղութին նուիրած է մէկ եկեղեցաշէնք՝ հայ գաղութի գործածութեան համար: 1994-ին հայկական եկեղեցին պաշտօնապէս կ՚արձանագրուի պետութեան մօտ:

«Եկեղեցին նոր շունչ տուաւ մեզի», Արտեմն է ըսողը: «Երբ եկեղեցի ունիս, կը նշանակէ, թէ այլեւս անցողակի գաղութ չես, այլ՝ երկրին մէկ մասը»: Բայց եկեղեցին նաեւ հպարտութիւն է: «Երբ եկեղեցի ունիս, պատճառ չկայ հայ չզգալու եւ չըլլալու»: Հայ «ըլլալու» եւ «զգալու» գիտակցութեան հետ նշմարելի է Արտեմի դէմքին վրայ գծուած մեղմ ու գոհունակ ժպիտը, որուն մէջ ակներեւ էր ազգային եւ հաւաքական կեանքին մատուցած իր «համեստ» (ինչպէս ինք կ՚ըսէ), բայց նաեւ երկարատեւ ծառայութիւնը: Իր աչքերը ինծի սեւեռած, չեմ գիտեր՝ ինչո՞ւ, ուզեց խօսիլ իր ծննդավայրին մասին: «Պաքու գեղեցիկ քաղաք է: Երբ պատանի էինք, ճիշդ է, որ կ՚ապրէինք ընկերային կեանքին զգայնութիւնները որպէս հայ եւ ազերի, բայց չկրցանք երեւակայել, թէ այս ընկերային զգայնութիւնները օր մը պիտի վերածուին քաղաքականի, աւելի՛ն՝ պատերազմի»:

Ռազմիկ Իվանեանը Հայաստանէն է եւ Թալլին հաստատուած է 1971-ին, երբ տակաւին կը ծառայէր Խորհրդային բանակին մէջ: Ան որպէս բանակային՝ նախ տեղափոխուած է Գերմանիա, ուրկէ՝ Էսթոնիա, ուր կը մնայ մինչեւ օրս: Ռազմիկ կեանքով լեցուն եւ աշխոյժ հայորդի մըն է, որ ներկայիս ստանձնած է Հայ ազգային կեդրոնին ատենապետութիւնը: «Հպարտ հայ եմ», կ՚ըսէ ան: «Եթէ ժամանակ չտամ, ան ու միւսը չընէ, ո՞վ պիտի ստանձնէ ազգային մեր կեանքերը կազմակերպելու աշխատանքները»: Մեր գաղութներու կեանքերը իրաւացիօրէն յառաջ կ՚երթան, քանի կան «Ռազմիկներ», որոնք որոշած են գոհողութեան ճամբան ընտրել՝ հայապահպանման մեր աշխատանքները յառաջ տանելու ի խնդիր:

Շար.ը էջ 19

## ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ



Աստուածաշունչի Ընկերութեան Արաբական Ծոցի երկիրներու Խնամակալ Մարմինը ուրախ է յայտարարելու, թէ Ընկերութեան Ընդհանուր Քարտուղար՝ Հրայր Ճէպէճեան, Մայիս 14, 2014-ին ստացած է Դոկտորական վկայական յաջողութեամբ պաշտպանելէ ետք իր աւարտաճառը՝ «Քրիստոնէական յոյսի պատգամին ընկալումը եւ կիրարկումը հնդիկ աշխատաւորներու կողմէ անոնց արտերկեայ աշխատանքային կեանքին մէջ Արաբական Միացեալ Էմիրութիւններուն մէջ»:

Ճէպէճեան իր վկայականը ստացաւ Նիւ Եորքի Աստուածաբանական Ճեմարանէն՝ Աստուածաշունչի Ցանձնարութիւն (Bible Engagement) ճիւղին մէջ, որ կը ձգտի քաջալերել Աստուածաշունչը կարդալու եւ հասկնալու՝ մեկնելով անհատին եւ հաւաքականութեան լեզուական եւ ընկերամշակութային տուեալներէն:

Հրայր Ճէպէճեան ծնած է Պէյրութ, 1957-ին: Նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանին մէջ: 1981-ին աւարտած է, Հայկազեան Համալսարանէն ստանալով Պսակաւոր Արուեստից վկայականը Արեւտրական Գիտութեան մէջ եւ 1984-ին Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն Մագիստրոս Գիտութեան վկայականին Երկրագործական Տնտեսագիտութեան մէջ:

Ան մաս կը կազմէ միջազգային քրիստոնէական միջ-եկեղեցական հրատարակչական կազմակերպութեան՝ Միացեալ Աստուածաշունչի Ընկերութեան, որ կը գործէ աւելի քան 200 երկիրներու մէջ: Ճէպէճեան Ընդհանուր Քարտուղարն է նոյն Ընկերութեան Արաբական Ծոցի տարածաշրջանին: Ան կը գործէ այս կազմակերպութեան հետ աւելի քան 34 տարիներէ: Եղած է խորհրդատու-կազմակերպող 1991-96 տարիներուն Հայաստանի Աստուածաշունչի Ընկերութեան: 2006-2014 եղած է ատենապետը Միջին Արեւելքի Աստուածաշունչի Ընկերութեան Խորհուրդին: 2003-2006 տարիներուն ան աշխատած է Պարսկաստանի հայ եւ ասորի եկեղեցիներու սուրբ գրային հրատարակութիւնները համադրելու աշխատանքով:

Հրայր Ճէպէճեան ունի միջ-եկեղեցական լայն գործունէութիւն եւ մասնակցութիւն: Ճամբորդած ու տակաւին աշխարհով մէկ տեղ եւ մասնակցած շատ մը միջազգային եւ միջ-եկեղեցական քրիստոնէական համագումարներու եւ ներկայացուցած զանազան դասախօսութիւններ կրօնական, սուրբ գրային եւ Միջին Արեւելեան քրիստոնէական ներկայութեան մասին:

Ճէպէճեան ունի ազգային, միութենական ու գաղութային բեղուն գործունէութիւն: Անդամ է Էշրէֆիէի Հայ Աւետարանական Եկեղեցիին: Եղած է վարչական անդամ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան (ՄԱՀԱԵՄ) Կեդրոնական Մարմնի, Հայկազեան Համալսարանի խնամակալութեան, Ազունիէի Ազգային Բուժարանին, Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանի Հոգաբարձութեան, Ցեղասպանութեան Ոգեկոչման 90 ամեակի Լիբանանահայ Կեդրոնական Մանրմնի, եւայլն: Ներկայիս Ատենապետն է Հայ Աւետարանական Արմիս Մշակութային յանձնախումբին, անդամ է Պէյրութի Աստուածաբանական Ճեմարանի Խնամակալութեան, ՄԱՀԱԵՄի Հրատարակչական Մարմնի եւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի Վարչութեան, Կիպրոս:

Կ՚աշխատակցի լիբանանահայ, հայրենի եւ սփիւռքահայ շատ մը թերթերու հետ ստորագրելով ազգային, մշակութային եւ կրօնական նիւթերով յօդուածներ: 2010ին հրատարակեց իր առաջին հատորը՝ «Հայուն Գոյապայքարի Ճանապարհը», ուր ամփոփուած է իր 30 տարիներու յօդուածներու հաւաքածոն:

Ամուսնացած է Դոկտ. Արտա Պոյնէրեան Ճէպէճեանի հետ եւ ունին երկու զաւակներ՝ Վահէ եւ Ալիք: 2005-էն ի վեր անոր աշխատանքային նստավայրը եղած է Նիկոսիա, Կիպրոս:

Խնամակալ Մարմին
Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութիւն

# ԻՆՉՈ՞Ւ ՀԱՅԵՐԷՆ ԽՕՍԻԼ

*ՍՈՆԻԱ ՔԻՒԼԷՃԵԱՆ-ԱՃԷՄԵԱՆ*

*Հետաքրքրական զուգադիպութեամբ մը, վերջերս երբ համալսարանի գրադարանի լեզուաբանական բաժինի արխիւները կը փորփրէի, ուշադրութիւնս գրաւեց ամերիկացի լեզուաբան Joshua Fishman-ի յօդուածներէն մէկը, որ գլխաւորաբար կ'անդրադառնար, թէ ինչպէս ժողովուրդի մը լեզուի կորուստը պատճառ կը դառնայ նաեւ անոր մշակոյթի կորուստին, հետեւաբար նաեւ հաւաքականութեան մը արժէքներուն, ապրելաձեւին եւ կեանքի ընկալումին:*

*Այս ուղղութեամբ, բոլորս ալ, խոստովանինք կամ ոչ, կը գիտակցինք հաւանաբար, որ մայրենիին կորուստը ժողովուրդի մը համար աղէտ մը կրնայ ըլլալ: Ուստի յօդուածին հետաքրքրական բաժինը լեզուի կորուստին պատճառով սահմանուած «աղէտ»ին ահազանգումը չէր: Յօդուածը ուշագրաւ էր, որովհետեւ յայտնի լեզուաբանը իր մասնագիտութեան մէջ ունեցած հմտութենէն ելլելով կը խօսէր, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս, հակառակ ի գործ դրուած «պահպանում»ի բոլոր ջանքերուն, այսօր շատ մը լեզուներ, հետեւաբար նաեւ մշակոյթներ՝ կորուստի եզրին կը գտնուին: Այս ամփոփ յօդուածով, պիտի փորձեմ անդրադառնալ այս ուղղութեամբ լեզուաբանին կատարած կարգ մը հաստատումներուն, որոնք շահեկան կը գտնեմ եւ առնչակից՝ մեր մտահոգութիւններուն:*

*Ա. Մշակոյթը՝ լեզուին մէջ*

*Joshua Fishman խօսելով լեզու-մշակոյթ յարաբերութեան մասին կը հաստատէ, թէ ժողովուրդի մը մշակոյթին մեծ մասը լեզուին մէջ է եւ լեզուով է որ կ'արտայայտուի: Հաստատումը ինչքան ալ յանդուգն կամ ծայրայեղ համարուի, անշրջանցելի ճշմարտութիւն մը կ'արտայայտէ, քանի որ ոչ ոք կրնայ հերքել այն իրողութիւնը, թէ ինչպէս լեզուն իր մէջ կը խտացնէ մշակոյթի մը առանցքը հանդիսացող ժողովուրդի մը կենցաղին, հաւատալիքներուն եւ արժէքներուն երաշխիքը համարուող առակները, ասացուածքները, հանելուկները, աղօթքները, երգերը, բարեւելու, գովաբանելու, գոհունակութիւն յայտնելու արտայայտութիւնները եւ վերջապէս՝ գրականութիւնը:*

*Ի՞նչ կը մնայ լեզուէն, եթէ պարպենք զայն այս բոլորէն: Աղքատ բառակոյտ մը պիտի ըսէի, որ կեանքի դժբախտ օրէնքին համաձայն, աղքատութեան մատնուած որեւէ երեւոյթի նման, ժամանակի ընթացքին կը հիւծի, կը պարպուի կեանքէն եւ կը դատապարտուի մաշումի եւ հետեւաբար՝ մահուան: Ուրեմն, լռութեան մատնել լեզու մը, կը նշանակէ լռութեան մատնել մշակոյթ մը:*

*Ուստի ի՞նչ ընել, որ լեզու մը եւ մշակոյթ մը չդատապարտուին լռութեան: Fishman կը հաստատէ, թէ մայրենին լռեցնելու հիմնական սխալը կը կայանայ, երբ զայն փոխանցելու, բանեցնելու եւ նորոգելու միակ «պարտաւորութիւնը» դպրոցին կը վստահինք, ուր դժբախտաբար, նաեւ մեր իրականութեան մէջ, շատ աւելի շեշտը կը դրուի լեզուի «գիտութեան», քան անոր «կենդանութեան» եւ մշակոյթին հետ օրգանական կապին վրայ: Լեզուաբանը կը հաստատէ, թէ դպրոցը համարելով լեզուի փոխանցման հիմնական վայրերէն մէկը, անհրաժեշտ է նաեւ մտածենք, թէ «այդ լեզուով ի՞նչ կ'ընենք նախքան դպրոց յաճախելը, դպրոցէն ետք եւ դպրոցէն դուրս»: Ուստի, սխալ համոզում մըն է կամ գուցէ պատրանք մը պիտի ըսէի, երբ կը խորհինք թէ դպրոցական սահմանափակ տարիներուն եւ միջավայրին, ինչպէս նաեւ հաշուուած դասապահերուն ընթացքին է միմիայն, որ երեխաները մայրենին կրնան այնպէս մը իւրացնել, որ իրենք ալ իրենց կարգին կարենան զայն յաջորդ սերունդներուն փոխանցել:*

*Լեզուի մը զարգացման եւ գոյատեւման համար կենսականը ուրեմն, կեանքին մէջ, դպրոցական միջավայրէն ու դասապահէն դուրս ալ զայն բանեցնելու առաջնահերթութիւն տալն է: Լեզուն սահմանուած չէ միմիայն դպրոցական դասանիւթ ըլլալու: Նոյն սկզբունքին մասին խօսելով եւ զայն տեղափոխելով հայեցի դաստիարակութեան դաշտ, քանատահայ մտաւորական ուսուցիչ Վիգէն Թիւֆէնքճեան «Հորիզոն» շաբաթաթերթին մէջ լոյս ընծայած «Հայեցի դաստիարակութիւնը եւ մեր կառոյցներուն առաքելութիւնը» յօդուածին մէջ, խօսելով հայեցի դաստիարակութեան եւ ծնողքի դերին մասին կը գրէ. «Ուսումը զուտ գիտելիքներու ամբարում է, որ կը տրուի միայն կրթական հաստատութիւններու ճամբով, մինչդեռ դաստիարակութիւնը կրթութիւն է (upbringing), որ կու գայ նախ տունէն, ընտանիքէն եւ ամենօրեայ շրջապատէն, ապա միայն կրթական հաստատութենէն: Դաստիարակութիւնը ապրելակերպ է, ուսումը՝ գործիք այդ ապրելակերպով ինքզինք իրագործելու»: Սա կը նշանակէ՝ խօսիլ հայերէն երեխային հետ նախեւառաջ որպէս ծնողք, մեծ ծնողք, ընտանիքի անդամ եւ բարեկամ: Խօսիլ հայերէն, աշխարհին նոր բացուող երեխայի լեզուին մէջ ջնջելով մշակոյթի մը հեռաւորութիւնը, մշակոյթի մը անցեալը: Այսինքն խօսիլ ներկան, ժամանակը, կենցաղայինը: Մէկ խօսքով՝ լեզուին մէջ դնել կեանքը, առօրեան, խաղը, փորձառութիւնները, կեանք նետուելու առաջին քայլերը:*

*Բ. Լեզուն բարոյական պարտադրանք չէ*

*Լեզուի շարունակականութեան եւ սերունդէ սերունդ անոր փոխանցման համար մշակուած «պահպանում»ի քաղաքականութեանց մասին խօսելով, Fishman կ'անդրադառնայ այդ քաղաքականութեանց զուգորդուող զգացական շանթաժներուն, որոնք յաճախ օգտակար դառնալու փոխարէն բացասական ազդեցութիւն կը ձգեն լեզուն իւրացնելու ձգտող սերունդներուն վրայ: Լեզուաբանը իր փորձէն ելլելով կը հաստատէ, թէ լեզուի «պահպանում»ի մասին քարոզները յաճախ լեզուն կը «սառեցնեն» ու թոյլ չեն տար որ ան ապրի, ինքզինք նորոգէ եւ ժամանակին մէջ իր տեղը գտնէ: Երբ մանկավարժական սկզբունքները անտեսելով կը փորձենք երեխաներուն լեզու մը սորվեցնել միմիայն յարգելու անցեալ մը, վերապրելու անցեալէն եկող յաղթանակ մը կամ ցուցադրելու բեմի համար լեզու մը՝ լեզուն իր նահանջը կ'ապրի:*

*Ուստի, լեզուն փոխանցելու, սերունդներուն հետ յարաբերութեան մէջ դնելու կարեւորագոյն գրաւականը կը հանդիսանայ ոչ թէ լեզուին միջոցով անցեալի մը հետ հաղորդակցութեան մէջ մտնելու անհրաժեշտութիւնը, այլ ներկային, ժամանակին ու ժամանակակիցին հետ առնչուելու ու հետեւաբար, լեզուին կենդանութիւն տալու հրամայականը: Այսինքն՝ խօսիլ հայերէն, ոչ թէ որովհետեւ պէ՛տք է խօսիլ, այլ խօսիլ «պարզապէս»: «Պարզապէս»ը բանալին է, նշանը, որ լեզուն բերնին մէջ ապրող, աշխարհը ընկալելու կոչուած ձգտումն է եւ ոչ թէ անցեալին հետ առնչակից դառնալու սահմանուած գիտելիք-միջոցը:*

*Այստեղ որպէս ընդգծում, կ'ուզեմ նշել թէ «պարզապէս»ը անշուշտ պարզապէս չի գար: Եթէ մեր կեանքերը բնականոն հունի մէջ ըլլային, ապրէինք մեր երկրին մէջ, ուր մեր լեզուն ըլլար բոլորին լեզուն, պարզ է որ հարցը տարբեր կ'ըլլար: Սակայն հոն չենք: Ընդունինք նաեւ, որ նոյնիսկ մեզի մնացած «միակ» հայրենիքին մէջ ալ մեր լեզուն «իր տունը» չէ: Պանդխտութիւնը նաեւ լեզուական պանդխտութիւն է: Այս իրողութեան արդէն գիտակից ենք բոլորս: Կորսուած Երկրէն միակ ինչքը, որ մնաց մեզի այս լեզուն էր: Եղեռնէն մազապուրծ սերունդներուն յստակ էր ասիկա, եւ անապատը կորած մարդոց ժառանգորդները դարձան հայախօս հսկայական ճիգի մը շնորհիւ, որ հիմնուած էր պարտադրուած իրողութեան մը հետեւանքներուն վրայ. պարիսպներ բարձրացնել ինքն իր շուրջ՝ կարենալ ապրելու համար այնպէս, որ կարծես շատ բան փոխուած չըլլար:*

*Հետեւաբար, կառչեցանք միակ ինչքին որ մնացած էր ու դարձանք զանգուածաբար հայախօս՝ մէկ սերունդէն միւսը, կամաւոր կերպով մէկդի դնելով ոչ միայն դարերու պարտադրանքին ժառանգ դարձած երկրորդ լեզուն, որ շատերուն համար առաջին լեզու էր, այսինքն թրքերէնը, բայց նաեւ կորսնցնելով անոր հետ առնչուած ամէն բան: Ասիկա իրողութիւն մըն է որ կը ծածկուի: Հայախօսութիւնը իր մեծագոյն վերելքը ապրեցաւ քսաներորդ դարու առաջին կիսուն շնորհիւ պարտադրուած, բայց նաեւ գիտակցուած շրջումի գործողութեան մը: Շրջեցանք ամբողջովին հայերէնին՝ ազգային ինքնութեան արեւելումով:*

*Չորս սերունդներ անցած են այդ օրերէն: Նոր սերունդները կամաց-կամաց դարձան ինքնաբաւ, դարձան նիւթապէս ապահով, բացուեցան աշխարհին, տարտղնուեցան, նոր ճամբաներ փնտռեցին ու հասան բարօրութեան որոշ աստիճաններու: Այսինքն սկսան ապրիլ բնականոն կեանք մը: Այս ամէնը բարի: Մնաց սակայն շատերուն քով հին բարդոյթ մը, աշխարհի լեզուներուն բաւարար չտիրապետելու, աշխարհէն կրկին նուաճուելու, ընկճուելու ու զոհ դառնալու անդամալուծող բարդոյթը: Տակաւին, ամէն սերունդի հետ աճեցաւ թիւը լեզու-կեդրոնէն հեռացողներուն: Աշխարհին հետ շփումը դժուար էր: Հայերէնը, որ չորս սերունդ առաջ նկատուած էր փրկութեան միակ լաստը, ժամանակի անցքով ու ջուրերուն խաղաղումով սկսաւ կարծես ընկալուիլ իբրեւ աղքատ մակոյկ, անբաւարար՝ աշխարհին ջուրերը նաւարկելու համար: Հաստատուն հող հասողը փրկութեան լաստի պէտք չունենար: Վկայ՝ հայերէնին հանդէպ մեծամասնութեան կեցուածքը. հայերէնը կը նկատուի երկրորդական, ոչ անհրաժեշտ պարտադրանք մը: Իրենց զաւակները օտար վարժարան ղրկող ծնողները կը մեկնին իրենց ընկալումով իրենց զաւակներուն լաւագոյն շահերէն մղուած, այսինքն ոչ թէ միայն տիրապետել տեղական լեզուին, այլ չզանազանուիլ անկէ, միաձուլուիլ անոր՝ կարենալ լիուլի օգտուելու համար անով եկող բարիքներէն: Այդ տարբեր հարց, թէ այս ընկալումը որքան կը համապատասխանէ իրականութեան:*

*Ցաւը այդ է, որ այդ ծնողները չեն գիտակցիր, թէ բազմալեզուութիւնը ոչ միայն չի խանգարեր լեզուներու տիրապետութեան, այլ ընդհակառակը, անիկա յաւելեալ կը զարգացնէ մարդուս մտային կարողութիւնները: Երկրի լեզուին տիրապետելու այս բարդոյթը կու գայ ծնողներուն փորձառութիւններէն, իրենց ապրած երկիրներուն կամ կեանքի պայմաններու հետեւանքներէն: Գինը դժբախտաբար երեխաները կը վճարեն, կտրուելով իրենց մայրենի լեզուն հարազատ դարձնելու կարելիութենէն, զայն իր ամբողջութեամբ ապրելու ու ապրեցնելու բախտէն:*

*Ահաւասիկ չորս սերունդ ետք լեզուական առաջին զանգուածային շրջումէն՝ կանգնած ենք երկրորդ շրջումի, չըսելու համար շիջումի, երեւոյթի մը առջեւ: Հարիւր տարի առաջ հաստատուած հին ամերիկահայ գաղութները առաջին սերունդէն կորսնցուցին լեզուն ու դարձան զգացումով միայն հայ: Խարբերդէն ու Երկրի զանազան գաւառներէն հոն հաստատուած մեծ մասամբ բանուոր ու չքաւոր տղաքը չունէին կարողութիւնը լեզուական պահպանումի ու վերընձիւղումի: Պարագան նոյնը չէր անշուշտ յիսուն տարի առաջ դէպի այս ափերը եկած միջին արեւելեան գաղութներու գաղթին: Մեր հայախօսութիւնը այդ երկիրներուն յատուկ երեւոյթ էր, այդ ժամանակին մէջ ծագում առած ու ծաղկած ազգային ինքնութեան մը, զարթօնքի մը պտուղը: Անիկա կամաւոր հայացումի հետեւանք էր:*

*Պէտք է գիտակցիլ քանի մը կարեւոր կէտերու, եթէ կ'ուզենք հայախօսութիւնը շարունակել հաւաքաբար:*

*Հայերէնը, մեր մայրենին, միշտ ալ գոյակցած է մեծամասնական լեզուներու կողքին, երկլեզուութեան ու բազմալեզուութեան միջավայրերու մէջ: Երբեմն ալ կորսուած է: Լեզուն կորսնցնողները իրենք ալ ընդհանրապէս կորսուած են՝ լեզուին համար: Ուրեմն յարաբերութիւնը երկուստեք է:*

*Երկլեզուութիւնը խանգարող երեւոյթ չէ, այլ՝ ընդհակառակը: Կար ժամանակ, յիսուն տարի առաջ, երբ ամերիկացի որոշ լեզուաբաններ մէկ լեզուն միւսը կը խանգարէ գաղափարաբանութիւն մը կը ջատագովէին: Այդ մէկը ամբողջովին սխալ ապացուցուած է, եւ ներկայիս ճիշդ հակառակ տեսութիւնն է, որ կը հրամցնեն:*

*Ուստի, նկատի ունենալով այս բոլորը, մեզի կը մնայ գիտակցիլ, որ մեր բարդոյթները, մանաւանդ ինչ կը վերաբերի լեզուին, չփոխանցենք յաջորդ սերունդներուն: Երեխաները բնականաբար հետաքրքիր են ու լեզուն կը սորվին բնազդաբար: Եթէ գիտնանք զիրենք ճիշդ ձեւով հրահրել, իրենք*

*Շար.ը էջ 19*

# ՀԱՒԱՍԱՐԱԿՇՌՈՒԹԻՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ ՁԵՌՔԻ ՀՊՈՒՄ՝ ՄԱՐՄՆԻՑ ԴԷՊԻ ՀՈԳԻ



*ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼԵԱՆ*

Ֆիզիոթերապեւտմանուալիստ Գագիկ Կարապետեանին առաջին անգամ հանդիպեցի պատահաբար (թէեւ ոչինչ պատահաբար կեանքում չի լինում), բուժհիմնարկի միջանցքում՝ մի քանի տարբեր մասնագէտներին այցելելուցս յուսահատուած, քանի որ գանգատներիս ի պատասխան, հոգեբանական՝բոլորին յայտնի պարզ խորհուրդներ կամ անհեթեթ, դիւրին արտայայտութիւն էի լսում շարունակ, թէ տեսքը վատ չէ, ուրեմն վտանգաւոր բան չկայ՝ անտեսելով հիւանդի տրտունջը վատ ինքնազգացողութեան մասին: Հպանցիկ մի հայեացք աչքերիս մէջ նետելուց յետոյ, նա, ի զարմանս ինձ, թուարկեց այն բոլոր երեւոյթները հիւանդութեան, որ անհանգստացնում էին ինձ վերջին շրջանում՝ նեարդային համակարգի եւ ողնաշարի հետ կապուած, որի փնտռուած մասնագէտ-բժիշկներից մէկն է նա: Ասել թէ բախտաւորութիւն է մեր այս օրերում հանդիպել ոչ միայն ճիշտ, նաեւ մարդկային դրական որակներով բժշկի, գրեթէ ոչինչ ասել է: Յայտնի բան է, թէ բժշկի վերաբերմունքը, հայեացքը, անգամ ձայնի տօնը ինչպիսի ազդեցութիւն է ունենում հիւանդի վրայ, քանի որ նա հիւանդի ֆիզիքական ու հոգեւոր մարմնին միաժամանակ է դիպչում, եւ այլ կերպ հնարաւոր էլ չէ: Երբ ձեռքը մեղմօրէն դնում է ուսիդ ու մուգ աչքերի թափանցող հայեացքով զննում ներսդ, փորձում է ճանաչել հիւանդին, նրա ներսի մարդուն, որովհետեւ գիտի, որ իւրաքանչիւրին անհրաժեշտ է անհատական մօտեցում ցուցաբերել: Այդպէս է մտածում ու գործում նա, զգալով «շօշափում» էներգետիկ այն դաշտը, որի հետ քիչ անց պէտք է աշխատի:

Բուժհիմնարկի՝ իր զբաղեցրած երկու սենեակները աշխատանքային ոչ մի ժամի ազատ չեն, եւ դռան առջեւ հերթը մշտական է: Մեղմ երաժշտութիւնը, հանգիստ միջավայրը նպաստում են այցելուի լաւ ինքնազգացողութեանը, երբ բժշկի ձեռքը այնպէս թեթեւօրէն ու հմտութեամբ է դիպչում հիւանդ ներսիդ, որ մոռանում ես ժամանակ, իրականութիւն ու վայր, եւ անգամ մարմինդ, որ քիչ առաջ հոգսի պէս ծանրացել էր, կարծես չկայ, կարծես անէացել է:

Տուն դառնալուց յետոյ բացում եմ իր կայքէջը: Գագիկ Կարապետեանը հոգեկան ներդաշնակութիւն գտնում է ստեղծագործական աշխատանքի մէջ նաեւ, գրականութիւնը նրա համար դառնում է հոգու իւրօրինակ ապաստարան.- այս մասին վկայում են նրա չափածոյ գործերը, քնարական բանաստեղծութիւնները, որոնց նախնական, մաքուր զգացումները հեղինակի յուզաշխարհի, ներքին կեանքի լաւագոյն թարգմանն են այստեղ, ամէն տողի ներսում կարդում եմ սպասում, - սպասում , որ իրականութեան ու երազի սահմանագծին է, ժամանակի մէջ չտեղաւորուող, որ դուրս է դրանից ու հասկանում եմ՝ հիւանդի մարմնին նրա ձեռքի հպման բուժական ազդեցութիւնը մասնագիտական հմտութեամբ չէ պայմանաւորուած միայն, այլեւ կեանքի ճանաչողութեամբ ու մարդկային հոգու իմացութեամբ: Երբ անցնում ես պատմուածքների ընթերցանութեանը, աւելի հիմնաւորւում են կարծիքներդ, եւ հասկանում ես, որ բժիշկը խորապէս զգացել ու ապրել է մարդկային կեանքի երկուութեան դրաման ու դրա պատճառները, մարդու հոգու տուայտանք-տառապանքի ու հրճուանք - ուրախութեան վաղանցիկութեան ցաւը...

1988-ի Դեկտեմբերի 7-ը՝ նրա կեանքի անասելի ծանր օրը, լոյսը բացուեց արեան գոյնի մէջ, որ անձնական սուր ցաւի պէս, անբուժելի վէրք իբրեւ, որքան էլ ժամանակի՝ ամէն բան մոռացութեան տալու քմահաճութեանը, մորմոքուելու է մշտապէս...երբ նրա աչքերը տեսան մարդկանց կործանումը, երբ իր սիրելի շէն, ծիծաղկուն- ծաղկուն քաղաքը վայրկանների ընթացքում աւերակների վերածուեց, փլուեց-փլատակուեց իրենով այնպէս հպարտացող կենսասէր գիւմրեցու գլխին: Դադարեց շնչառութիւն, ձայները մարեցին, դադարեց կեանքի ձեւասփռում-բազմազանում-երփնաւորումը գոյնին այնպէս ամուր փարուած քաղաքի վրայ. մահուան ու վշտի սեւմոխրագոյնը՝ ընդերքից բարձրացած, խեղդեց քաղաքը, տիրականօրէն ու տեւականօրէն իջաւ ապրողների հոգուն: Կեանքը քաղաքի բնակիչների համար բաժանուեց երկու հաւասար մասի՝ երկրաշարժից առաջ ու երկրաշարժից յետոյ... Այդպէս էլ Գագիկ Կարապետեանի համար եղաւ, իր համաքաղաքացիների պէս նա էլ անցաւ դժոխային տառապանքների միջով, տեսաւ լաց, ողբ ու ատամների կռճտոց: Կամաւոր միացաւ փրկարարներին, արեց այն ինչ հնարաւոր եւ անհնար էր: Ու գրեց Քաղաքին ու նրա բնակիչներին պատուհասած սոսկալի արհաւիրքի իր ռեքուիեմը՝ «Դժոխք» պոէմը, որն ամէն տարի Դեկտեմբերի 7-ին հնչում է հանրային եթերով եւ կարեւորը՝ լաւատեսական պաթոսը չլքեց հեղինակին, որով նա վերյառնելու, արարելու կամք է պարտադրում ապրողներին:

Պատերազմները, բնական աղէտներն ու համաճարակները մարդկային հաւաքական ողբերգութեան երեւակումն են, որոնց միջով անցնող առանձին անհատի ճակատագրի վերհանումը այդ հաւաքականութեան հոգեվիճակի խտացում կարող է համարուել, եթէ դա արւում է ստեղծագործական ապրումի խորութեամբ ու մարդկային ամենախոցելի զգացումի՝ կարեկցանքի ուժով: Այդպէս նա գրական մարմնաւորում տալով՝ յաւերժացրեց մանկութեան իր ընկերոջը՝ Գուգոյին, որին ընկերները «հայկական Յանկօ» անունն էին տուել՝ ջութակն այդպէս զգայնօրէն ու յուզիչ խօսեցնելու համար: Նրան՝ իրենցից ամենաազնիւին ու առաքինիին բաժին հասաւ կեանքի ամենածանր հարուածը Դեկտեմբերի 7-ի մահաբեր առաւօտին: Անհնար է առանց սարսուռի, առանց հոգեկան ցնցումի կարդալ Գագիկ Կարապետեանի «Գուգոն» պատմուածքը: Կեանքի հարուածին չդիմացաւ Գուգոյի նուրբ հոգին. փլատակների միջից երկու զաւակների, ծնողների ու տատի անշնչացած մարմինները իր ձեռքով էր հանել... եւ՝ կնոջ, որին ներել չկարողացաւ... Կիսացնորուած, ուրուականի վերածուած նրա մարմինը Մոսկվայի հոգեբուժարանում մի քանի տարի դեգերելուց յետոյ գնաց միանալու կորսուած հարազատներին:

«Աստուած մանանան եփում էր երկրի ընդերքում եւ այն էլ հայի արիւնով: Ցաւից պապանձուեցին լեռները հայոց, խոնարհուեցին բլուրները, եւ սաստիկ տենդից ջերմում էր հողն իմ նախնեաց: Ամէնուր բացուած անդունդները բարձրացրին իրենց ձեռքերը եւ կեանք էին հայցում անմեղ զոհերի համար: Ախր ինչպէ՞ս չճչար գետինը, որն ի զօրու չէր միանգամից ընդունելու այդքան հիւրերի: ...Գնաց այդ ինքնակոչ «հիւրը», սակայն իր հետեւից թողեց սուգ ու լաց, մղձաւանջ ու տառապանք, աւեր ու ցաւեր: Փլատակների կոյտ է դարձել եւ մեր փողոցը, մեր մանկութեան զուարթ օրերի օրրանը, աւերիչ, աներեւոյթ ձեռքը մի հարուածով ջնջել էր լուսաւոր պատկերները մեր մանկութեան»:

«...Տարիներ են անցել: Նորից 7-ն է Դեկտեմբերի: Ձմռան տաք օր է: Քաղաքի վրայ լռութիւն է իջնում, ձիւնը խոշոր փաթիլներ է մաղում քաղաքիս վրայ, լռողութիւնս յուշեր է պատկերում պատուհանիս: Չեմ կարողանում հաշտութիւն կնքել անցեալի հետ: Սիրտս ու միտքս անվերջ թափառում են փլատակների մոխրակոյտում... Իսկ հոգիս անձայն ճչում է ցաւից՝ ի՞նչ պատահեց քեզ, ինչպէ՞ս ես, Գուգո...

...Անցան էլի տարիներ: Աշխատանքային ծանր ու լարուած օր էի ունեցել: Ինձ զանգեցին Մոսկուայից ու յայտնեցին Գուգոյի մահուան մասին: Չգիտեմ՝ ինչ կատարուեց ինձ հետ... Նորից տագնապեց տառապած սիրտս, անցեալի յուշերը նորից մթագնեցին միտքս, նորից ցաւը կորստի խարազանեց հոգիս...

Իմ ընկեր Գուգոն ժաժքից յետոյ ապրեց եօթ տարի, աւելի ճիշտ՝ շնչեց եօթ տարի, եօթ տարի ցաւից խելագար՝ չզգաց անգամ համը հացի, չիմացաւ՝ ինչ է ֆիզիքական ցաւը...

Յուշամորմոք մտքերով տարուած՝ չհասկացայ, թէ ինչպէս ձեռքս առա տեսախցիկն ու այնտեղից ինքնաբերաբար դուրս քաշեցի տեսաժապաւէնը: Դաժան արհաւիրքը՝ երկրաշարժը, ոչ միայն դժբախտացրել էր Գուգոյին, այլեւ խաթարել բանականութիւնը՝ մթագնած ուղեղում ջնջելով մի ամբողջ կեանքի տեսաժապաւէն-պատմութիւնը:

Ձեռքիս տեսաժապաւէնը նետեցի բուխարու մէջ: Մի բուռ մոխիր աւելացաւ ժապաւէնի այրումից, իսկ հեռաւոր քաղաքի գերեզմանոցում մի փոքրիկ հողաթումբ՝ անանուն շիրիմը Գուգոյի...»:

Ցնցող մէկ այլ պատկեր է վերհանում «Հանդիպում» յուշը, երբ երկրաշարժից տարիներ անց հեղինակի կողմից փրկուած կինը գտնում է նրան եւ փորձում երախտագիտութիւն յայտնել. «...Մտքիս շարժանկարն աւարտուեց: Ես սթափուեցի: Դիմացս կանգնած կինը՝ Աղունը, եւ տղան՝ Համիկը, հրաւիրում էին ինձ խաշի, նշելու մեր հանդիպումը: ...Խմում էին կենացս, գովաբանում իմ սխրանքը, հերոսացնում եւ էլի շատ ու շատ «անհամատեղելի» գովեստի խօսքերի արժանացնում նուաստիս: Իսկ ես լուռ նստած, մեղաւորի պէս ժպտալով, մտածում եմ, որ այս կնոջը ես դարձրի հաշմանդամ՝ զրկելով ձեռքից...»,- այսպէս է կարծում նա, այն պարագայում, երբ փլատակների տակ մնացած կնոջը փրկելու միակ ելքը՝ ձեռքը կտրելով դուրս քաշելն էր...

Գիւմրին վերածուեց աղէտի գօտու, կեանքը կորցրեց հաւասարակշռութիւնը ապրողների համար, խաթարուած հոգեկան աշխարհը յիշողութեան մղձաւանջից դժուար էր դուրս հանել՝ վերստին կեանք սկսելու համար: Բայց բնութիւնն իր օրէնքներն ունի, որոնք գործում են անխախտ՝ մեր կամքից դուրս, ինչ էլ պատահի:

Երկրաշարժից յետոյ Գագիկ Կարապետեանը բնակութեան տեղափոխուեց Մոսկուա: Մի քանի տարի անց Վազգէն Սարգսեանի խնդրանքով վերադարձաւ Հայաստան, աշխատանքի անցաւ Երեւանում: Շնորհաշատ մարդուն, հմուտ բժշկին հիւանդն ինքն է գտնում: Նրան այցելած ու ապաքինուած հիւանդների թիւը հաշուելն իրօք անհնար է, նրա մօտ բուժուել ու շարունակում են բուժուել հազարաւոր հիւանդներ՝ ամենատարբեր զբաղմունքի տէր, նշանաւոր ու յայտնի, պարզ ու սովորական մարդիկ՝Հայաստանից ու սփիւռքից:

Մարդկային ինչպիսի ճակատագրեր են խաչուել նրա ճանապարհին: Տարիներն անցնում են, բայց բժիշկը չի մոռանում նրանցից շատերին: Աւտովթարից զաւակներին ու ամուսնուն կորցրած, բազմաթիւ վնասուածքներ ստացած կինը՝ հոգեկան ու ֆիզիքական տառապանքների խոր անհուսութեան մէջ, ամէնօրեայ լոյսը դիմաւորելը հրաշք է համարում եւ ինչու զարմանալ՝ կարդալով զերզգայական, անհաւանական նրա խօսքերը՝ ուղղուած կեանքն իրեն կրկին վերադարձնողին: «...Գիշերն անցնում էր... Եւ չէի պատկերացնում,

Շար.ը էջ 19

## Ո՞Ր ԳՈՐԾՕՆՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԱՐԳԵԼՔ ԴԱՌՆԱԼ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

*Ամերիկեան «Հէրիս» հետազօտական ընկերութիւնը վերջերս յայտնաբերած է թէ ամերիկացիներու միայն 33 առ հարիւր համեմատութիւնը կը խոստովանի թէ իսկապէս ուրախ է: Մնացեալ 67 առ հարիւրը խոստովանած է թէ տխուր է կամ մասամբ ուրախ է: Այս համեմատութիւնները կը համապատասխանեն այլ երկիրներու մէջ կատարուած հետազօտութիւններու արդիւնքներուն: Նախապէս, Միջին Արեւելքի մէջ կատարուած ուսումնասիրութիւն մը ցոյց տուած է թէ այստեղ բնակող անձերուն մեծ մասը տխուր է:*

*Եթէ ուրախութիւնը բնական հոգեվիճակ է եւ յաճախ կեանքի նպատակ, ինչո՞ւ համար ուրախ մարդոց թիւը այսքան փոքր է: Տոքթ. Կրէկորի Ճանց հետաքրքրուելով այս հարցով* Psychology Today *ամսաթերթին մէջ հրատարակած է յօդուած մը, որուն մէջ ան նշած է չորս հիմնական կէտեր, որոնք կրնան արգելք հանդիսանալ մարդոց ուրախութեան:*

*Ըստ Ճանցի բոլորս ունինք ակնկալութիւններ մեր կեանքէն, երբեմն այս ակնկալութիւնները պահուած կ՚ըլլան մեր ենթագիտակցութեան մէջ: Մենք ակնկալութիւններ ունինք նաեւ մեր անձէն, մեր շրջապատէն, մեր կողակիցէն եւ մեր ընկերներէն:*

*Սակայն, մեր ակնկալութիւններէն միայն մաս մը կ՚իրագործուի իսկ մնացեալը մեզ կրնայ յուսախաբ դարձնել:*

*Կարեւոր է նշել, որ ակնկալութիւնները ունին դրական դեր մեր կեանքին մէջ: Անոնք մեզի կու տան յոյս եւ ապարագայի նկատմամբ առողջ հայեցք: Ակնկալութիւններու շնորհիւ կարելի կը դառնայ սահմաններ գծել մարդոց հետ յարաբերութեան մէջ: Սակայն կարգ մը պարագաներու, ակնկալութիւնները կ՚ըլլան ոչ իրապաշտ եւ հետեւաբար մարդիկ յաճախ կը հիասթափուին: Ճանց այս ծիրին մէջ կը շեշտէ նաեւ թէ մեր ուրախութիւնը պէտք չէ կախեալ ըլլայ մեր ակնկալութիւններու իրագործումէն:*

*Ճանցի համաձայն, ուրախութեան արգելք կը հանդիսանայ նաեւ ոխապահութիւնը: Պատահական չէ, որ մարդիկ մեծ կարեւորութիւն կու տան ներողութեան: Ներելը՝ մեղաւորէն աւելի օգտակար է ներողին համար: Երբ ներելու փոխարէն ոխ պահենք, եւ միշտ փորձենք փոխադարձել կատարուած սխալին, մեր ժամանակն ու ուժը կը վատնենք ի զուր: Ոխապահութիւնը կը յառաջացնէ տհաճ զգացումներ, ինչպէս ատելութիւն, ջղայնութիւն եւ տխրութիւն: Ահա թէ ինչու ոխը կրնայ նուազեցնել ուրախութիւնը:*

*Երրորդ հիմնական կէտը, որ Ճանց նշած է իր յօդուածին մէջ՝ ճնշուածութիւնն է կամ* stress*-ը: Ճիշդ է, որ ճնշուածութիւնը կրնայ յառաջանալ մեր միջավայրէն, սակայն կարգ մը պարագաներուն ճնշուածութիւնը արդիւնք է մեր վարմունքին եւ ակնկալութիւններուն: Հետեւաբար, մեր ակնկալութիւնները վերատեսութեան ենթարկելու կողքին, անհրաժեշտ է նաեւ ճնշուածութիւնը կառավարելու ռազմավարութիւններ որդեգրել: Ճնշուածութիւնը նուազեցնող ամէնէն առողջապահական սովորութիւններէն է մարզանքը:*

*Ճանց համոզուած է որ մարդոց մեծ մասը կը տառապի վերոյիշեալ չորս կէտերէն եւ այդ պատճառով բաւական դժուար եւ երբեմն անկարելի կը գտնէ ուրախ ըլլալ:*

## ՃՆՇՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԱՀԱՍ ՄԱՀՈՒԱՆ ԳՈՐԾՕՆՆԵՐԷՆ ՄԷԿԸ

*Բազմաթիւ ուսումնասիրութիւններու, բժշկական ազդարարութիւններու եւ մեր անձնական փորձառութեան շնորհիւ ներկայիս բոլորս իրազեկ ենք թէ ճնշուածութիւնը ունի շարք մը հակա-առողջապահական հետեւանքներ: Ճնշուածութեան սաստ կացումը կախեալ է թէ մեզմէ եւ թէ մեր միջավայրէն, սակայն մենք կրնանք զայն նուազեցնել եւ պահել սովորական մակարդակին վրայ:*

*Կարգ մը ուսումնասիրութիւններ ցոյց տուած են թէ ճնշուածութեան ամէնէն մեծ աղբիւրն է մարդոց հետ յարաբերութիւնները: Անշուշտ, անկարելի է գոյատեւել առանց այս յարաբերութիւններուն: Բոլորս կարիքը ունինք ընկերային յարաբերութիւններու, սիրային յարաբերութիւններու, բարեկամներու, դրացիներու եւ գործընկերներու: Սակայն ի՞նչ կրնայ պատահիլ երբ անոնք դառնան ճնշուածութեան աղբիւր:*

*Դանիոյ մէջ հետազօտներ կ՚ենթադրեն թէ յարաբերութիւններու պարագային ամէնէն շատ ճնշուածութիւն պատճառող դէպքերը վիճաբանութիւններն ու կռիւներն են: Այս գծով անոնք Դանիոյ մայրաքաղաք՝ Գոփէնհակընի մէջ կը կատարեն ուսումնասիրութիւն մը յայտնաբերելու համար վիճաբանութեան հետեւանքները ֆիզիքական առողջութեան վրայ:*

*Գոփէնհակընի համալսարանի հովանաւորութեամբ կատարուած ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ թէ կողակիցներու, ազգականներու, ընկերներու, դրացիներու եւ գործընկերներու հետ յաճախակի վիճաբանութիւնները կրնան բարձրացնել մահուան հաւանականութիւնը միջին տարիքի մարդոց մօտ: Աւելի քան տասը հազար անձերու մասնակցութեամբ կատարուած ուսումնասիրութեան արդիւնքները ցոյց տուած են թէ ազգականներու մարդկային յարաբերութիւններու պատճառած ճնշուածութիւնը կրնայ 50-էն 100 առ հարիւր համեմատութեամբ բարձրացնել մահուան հաւանականութիւնը որեւէ անհանգստութեան հետեւանքով:*

*Հետաքրքրական է թէ տղամարդիկ աւելի հակամէտ են ազդուելու վիճաբանութեան հետեւանքներէն քան կիները: Սեռային գործօններէն բացի հետազօտները նաեւ յայտնաբերեցին այլ գործօն մը որ կրնայ նպաստել վիճաբանութիւններուն եւ մահուան միջեւ կապին: Ուսումնասիրութեան աւարտին ի յայտ եկաւ թէ տղամարդոց կողքին՝ անգործ անձերը եւս աւելի կ՚ազդուին այս երեւոյթէն:*

## ՈՐՈ՞ՆՔ ԿԸ ՆԱԽԸՆՏՐԵՆ ՄՐՑՈՒՆԱԿ ԵՒ ԿԱՐՈՂ ԿԻՆԵՐ

*Ընկերային հոգեբանութեան ծիրին մէջ հեղինակաւոր հետազօտ՝ Ճանէթ Դէյլոր Սփէնս, մինչեւ 1970-ական թուականները կը զբաղէր անձկութեան (*anxiety*) վերաբերեալ հետազօտութիւններ կատարելով: Կիներու ազատութեան շարժումէն ետք է, որ Սփէնս իր մասնագիտական հետաքրքրութիւնը կը կեդրոնացնէ սեռերու միջեւ տաբերութիւններու վրայ, այլ խօսքով՝ կիներու եւ տղամարդոց հոգեկան վիճակներու, վարմունքներու, կարողութիւններու եւ հակազդեցութիւններու տարբերութիւններուն վրայ:*

*1960-ական թուականներէն ի վեր, հոգեբաններ անդրադարձած են տղամարդոց եւ կիներու միջեւ տարբերութիւններուն: Նշանաւոր հոգեբան՝ Ալպէրթ Պանտուրայի տեսութեան համաձայն՝ կիները եւ տղամարդիկը տարբեր վարմունքներ ունին, որովհետեւ ընկերութիւնը տարբեր ձեւերով կը վարուի անոնց հետ: Այլ խօսքով՝ սեռերու միջեւ տարբերութիւնները արդիւնք են ընկերութեան ստեղծած կամ որդեգրած չափանիշերուն, որոնց հիման վրայ հակազդեցութիւն կ՚ունենան թէ՛ իգական եւ թէ՛ արական սեռի անդամները: Այս ձեւով արդիւնքը կ՚ըլլայ տարբեր վարմունք, տարբեր մտածողութիւն:*

*1970 թուականին, Ռոպէրդ Հէլմրիչ եւ Էլիոթ Արոնսոն կը կատարեն հետազօտութիւն մը, որուն արդիւնքները ցոյց կու տան թէ կարող տղամարդիկ հաճելի կը նկատուին տղամարդոց կողմէ: Այս երկու հոգեբաններու հետազօտութեան մասին իրազեկութենէն ետք, Սփէնս կ՚որոշէ նման հետազօտութիւն մը կատարել մասնակցութեամբ նաեւ կիներու: Հէլմրիչի եւ Արոնսոնի կատարած հետազօտութեան բոլոր մասնակիցները տղամարդիկ էին:*

*Սփէնս նախքան ուսումնասիրութիւնը կատարելը կ՚ենթադրէ, որ միայն սեռերու միջեւ հաւասարութիւն քաջալերող անձերը կը նախընտրեն կարող եւ մրցունակ կիներ: Ամերիկացի հետազօտը իր ուսումնասիրութիւնը կը կատարէ համագործակցելով Ռոպէրդ Հէլմրիչի հետ: Իրենց ուսումնասիրութիւնը կատարելու համար հոգեբանները կը ստեղծեն* Attitude toward Women Scale *չափանիշերու հարցարանը, որ ցոյց կու տայ անձի մը կարծիքը կիներու իրաւունքներուն, պարտականութիւններուն, աշխատանքին, ուսման եւ կարողութիւններուն նկատմամբ:*

*Հետաքրքրական է, որ ուսումնասիրութեան արդիւնքները ցոյց տուին թէ Սփէնսի ենթադրութիւնը սխալ էր: Հակառակ հոգեբանին ակնկալութիւններուն, ուսումնասիրութեան գրեթէ բոլոր մասնակիցները նախընտրեցին եւ գնահատեցին մրցունակ կիները: Աւելին, անոնք ամէնէն բարձր նախընտրութիւնը ցուցաբերեցին այն կիներուն նկատմամբ, որոնք տղամարդոց հետ առնչուած կարողութիւններ ունին: Սփէնս, որ բաւական զարմացած էր արդիւնքներէն, դիտել տուաւ թէ նոյնիսկ ամէնէն պահպանողական ընկերութիւններու անդամները կը նախընտրեն մրցունակ կիներ:*

*Սփէնսի եւ Հէլմրիչի կատարած ուսումնասիրութիւնը հրատարակուեցաւ 1972 թուականին: Այս ուսումնասիրութեան արդիւնքները դարձան առաջին քայլերը՝ սեռային տարբերութիւններու ծիրին մէջ նոր հետազօտութիւններու նախաձեռնութեան:*

**JOB OPPORTUNITY**

**Ararat Home of Los Angeles caters primarily to the needs of the Armenian community by providing Assisted Living and Skilled/ Convalescent Nursing Services.**

**We are looking for an enthusiastic individual to join our management team as the Human Resources Coordinator. The candidate must have comprehensive HR knowledge with excellent communication skills. This is a hands-on position for an individual who will develop, implement and execute HR processes and strategies to recruit staff, administer benefits and compensation packages, and manage employee relations and retention. The candidate will ensure the organization's compliance with federal, state and local rules and regulations. The candidate must have, at a minimum, a Bachelor's degree in Human Resources or a related field from an accredited U.S. university and 5 years of progressive leadership experience in Human Resources. Additionally, the candidate must have up-to-date knowledge of workers' compensation, employee safety standards and FMLA. A bilingual (Armenian/English) candidate is strongly preferred. Competitive salary and benefits are offered.**

**Interested candidates should submit their resumes to Derik Ghookasian at info@ararathome.org.**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

# Յովիկ Աբրահամեանը վերցնում է իշխանութիւնը

*Շարունակուած էջ 2-էն*

*փաստաթղթերը կարգի բերելու, խաղի այս նոր կանոններով աշխատել սկսելու համար՝ սպառնալով հակառակ դէպքում լայնածաւալ ստուգումներ անցկացնել նրանց պատկանող օբիեկտներում: Այսինքն՝ Յովիկ Աբրահամեանը, միմիայն գործարարների հետ հաւաքային մակարդակով պայմանաւորուածութիւններ ձեռք բերելով, ուզում է անել այն, ինչ չեն կարողացել անել պետութիւնն իր գոյութեան ողջ ընթացքում եւ բոլոր ժամանակների կառավարութիւնները: Աւելին, Յովիկ Աբրահամեանը համոզում է, որ իր խօսքը, փաստօրէն, աւելի մեծ արժէք եւ ազդեցութիւն ունի, քան օրէնքը, որին չենթարկուելը, փաստօրէն, եղել էր նախկինում հաստատուած եւ գործող խաղի կանոն: Մի կողմ թողնենք տնտեսական համաներում անցկացնելու վարչապետի մտադրութիւնը: Դա արդարացւում է այն ժամանակ, երբ պետութիւնը որոշում է ամէն ինչ սկսել նոր էջից՝ հաւասար սկզբունքներով: Մինչդեռ տուեալ դէպքում գործ ունենք բացառապէս Յովիկ Աբրահամեան անձի եւ վարչապետի լծակներով օժտուած օլիգարխի գործօնի հետ, ինչը նշանակում է, որ խօսքը ոչ թէ առհասարակ ստուերային տնտեսութիւնը կրճատելու մասին է, այլ օլիգոպոլիաների կողմից թաքցուող, պիւտճէն այսքան ժամանակ շրջանցած գումարների մի մասի հաշուին պետական դատարկ գանձարանը լցնելու, ինչն այլ կերպ, քան պարզապէս ֆինանսական օգնութիւն կամ օլիգարխներից վերցուող պարտք չի կարելի համարել: Որովհետեւ եթէ մի բան կարգաւորւում է պարզագոյն պայմանաւորուածութիւններով ու հրահանգներով, այն կարող է նաեւ վերացուել նոյն եղանակով, եւ որեւէ երաշխիք չկայ, որ եթէ ոչ հենց Յովիկ Աբրահամեանը, ապա նրա յաջորդը կարող է նոյն օլիգարխների հետ պայմանաւորուել՝ մեծացնելու ստուերը, օրինակ՝ որպէս այսօր վերցուող պարտքի վերադարձման տարբերակ: Հիմա պէտք է ուղղակի հետեւել, թէ ինչպէս են օլիգարխ-վարչապետն ու ֆինանսների օլիգարխ նախարարը մտնելու իրենց սեփական, ինչպէս նաեւ՝ իրենց հետ փոխկապակցուած անձանց՝ խնամի-զարմիկների գրպանները՝ դատարկուած պիւտճէն լցնելու ժամանակաւոր խնդիրը լուծելու համար: Անկասկած, հետաքրքիր թատերական ներկայացում է սպասւում:*

*Ինչեւէ, երբ այս միջոցառումներն ու գործողութիւնները դիտարկում ենք մէկ շղթայի շրջանակում, շատ հետաքրքիր պատկեր է ստացւում: Հրապարակային մակարդակով հնչում են ամբոխ աճաճոյ յայտարարութիւններ, սակայն դրանք ուղեկցւում են բացառապէս հասարակութեան մէկ շերտի՝ օլիգարխիայի շահերը սպասարկող կոնկրետ ընթացակարգերով: Անգամ «գործարարներին» քամելու այս նախաձեռնութեան տակ հեշտութեամբ կարելի է տեսնել ստուերային գործունէութիւնը լեգիտիմացնելու ակնյայտ միտում: Որովհետեւ որ չափով ստուերային միջոցները բերուեն հարկային դաշտ, մնացած չափով դրանք մնալու են գործարարներին, եւ պետութիւնն այդ մասով նրանց այլեւս չի անհանգստացնելու:*

*Պէտք է խոստովանել, որ այս գործողութիւններով Յովիկ Աբրահամեանն ապացուցում է իր՝ հեռատես քաղաքական ֆիգուր լինելու հանգամանքը: Որովհետեւ դրանք փաստացի ուղղուած են օլիգարխիային, այսինքն՝ իշխանութեան վերարտադրման ամենալուրջ ռեսուրսն ունեցող շրջանակին ազատութեան, իշխանութեան վրայ ներգործելու որոշակի քուոտաներ տրամադրելով իրեն ենթարկելուն: Իսկ սա այլ կերպ, քան աստիճանաբար իշխանութիւնն իր ձեռքում կենտրոնացնելուն ուղղուած գործնական քայլ չի կարելի անուանել: Իշխանութիւնը Յովիկ Աբրահամեանին ժառանգելու գործընթացը, այսպիսով, ընթանում է լայն թափով: Նոր վարչապետն ընդամէնը ամիսների ընթացքում անում է այն, ինչ Տիգրան Սարգսեանը չկարողացաւ պաշտօնավարման ամբողջ վեց տարիների ընթացքում. ստեղծել այնպիսի քաղաքական կապիտալ, որը թոյլ չէր տա այդքան հեշտութեամբ ազատուել վարչապետից եւ նրան վերածել քաւութեան նոխազի:*

*«ՀԵՏՔ»*

# Վտանգաւոր «տանդէմ»

*Շարունակուած էջ 2-էն*

*եանն էլ դէմ հանդէս գալով տարածք յանձնելուն, այդուհանդերձ որպէս պաշտպանութեան նախարար եւ որպէս քաղաքագիտութեան թեկնածու իր գերատեսչութեամբ հանդերձ չի ձեւակերպել Հայաստանի զինուած ուժերի մօտեցումը Արցախի խնդրի կարգաւորման վերաբերեալ: Խօսքն իհարկէ դէ իւրէ ձեւակերպման մասին չէ, այլ դէ ֆակտօ՝ ինչը փաստացի կինստիտուցիոնալացներ Սէյրան Օհանեանի դիրքորոշումը եւ այն կը դնէր քաղաքական պատասխանատուութեան տիրոյթում, հնարաւորինս զերծ պահելով կոնիւկտուրային միջամտութիւններից, միաժամանակ նաեւ նպաստելով տարածաշրջանում հայկական զինուժի ռազմա-քաղաքական դերակատարութեան աճին:*

*Այդ աճն ապահովելու համար պահանջւում են մի շարք էական քայլեր, որոնք ենթադրում են առարկայական ռեֆորմներ բանակում, յատկապէս արժեհամակարգային, կառավարման փիլիսոփայութեան փոփոխութիւններ: Այդ տեսանկիւնից էլ Հայաստանի զինուժի համար գերկարեւոր է ՆԱՏՕի հետ յարաբերութիւնը, որն այդ առումով հանդիսանում է անվտանգութեան համաշխարհային առաջատար բեւեռը:*

*Միեւնոյն ժամանակ, Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը ստեղծել է մի վիճակ, երբ այդ բեւեռի հետ Հայաստանի յարաբերութիւնը յայտնուել է վտանգի տակ, երբ Հայաստանն արդէն իսկ ՀԱՊԿ շրջանակում ստանձնել է այդ բեւեռի հետ իր յարաբերութիւնը որոշակիօրէն սահմանափակելու միտուած պարտաւորութիւններ:*

*Այդ իմաստով, Սէյրան Օհանեանն ու Էդուարդ Նալբանդեանը ՆԱՏՕ-Հայաստան յարաբերութեան մասով պէտք է որ ունենան տրամագծօրէն հակառակ պատկերացումներ ու մտադրութիւններ: Եթէ Օհանեանը հանդէս է գալիս ազատագրուած տարածքները պահելու դիրքից, ապա նրա համար գերկարեւոր պէտք է լինի Հայաստանի պետութեան, մասնաւորապէս կարեւորագոյն օղակի՝ բանակի արդիականացումը: Իսկ այդ հարցում ՆԱՏՕ-ն անփոխարինելի գործընկեր է:*

*Մինչդեռ, այդ արդիականացումը Էդուարդ Նալբանդեանի համար խանգարող հանգամանք է, որովհետեւ արդիական միջավայրում նա չէր կարող իրականացնել եւ չի կարող աւարտել իր արտգործնախարարական առաքելութեան գլխաւոր նպատակը՝ Հայաստանը վերածել Ռուսաստանի լիակատար կցորդի, որի վերաբերեալ ոչ պաշտօնական կոնսուլտացիաների Մոսկուայում նա արդէն իսկ մասնակցում է:*

# ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 8-էն*

*Ցեղասպանութեան դէպքում՝ պարագան այլ է: Հայ մշակոյթի նկատմամբ բարբարոսական վերաբերմունքը շարունակւում է Թուրքիայում, քանի որ Թուրքը նպատակադրուած է հայի հետքը վերացնել Պատմական Հայաստանից, որպէսզի կարողանայ դրա թրքականութիւնը հաստատել:*

*4. Օսմանեան Թուրքիան բնաջնջեց ու բռնագաղթի ենթարկեց դարերից ի վեր իր բնօրրանում ապրող հայ ժողովուրդին: Այդպիսով նա կործանեց ու քանդեց հայի տունը եւ բռնի ուժով իւրացրեց Հայոց Աշխարհը, որ նոյնպէս պէտք է վերադարձնի իր տիրոջ, որպէսզի աշխարհով մէկ ցրուած հայութիւնը վերադառնայ իր հայրենիքը:*

*Մի խօսքով հայ ժողովուրդը ունի արեան, նիւթական, մշակութային ու հողային պահանջատիրութիւն:*

*Եզրակացնելով նշենք, որ Փրոֆ. Գէորգ Խրլոպեանի այս մեծարժէք աշխատութիւնը ծանրակշիռ ներդրում է Հայոց Ցեղասպանութիւնը միջազգային չափանիշով ճանաչելու եւ դատապարտելու խնդրում:*

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԸՆԿ. ՍԱՐԳԻՍ ԳԱՒԼԱՔԵԱՆԻ ՀԵՏ

*Շարունակուած էջ 6-էն*

*ասուլիս մը արաբերէն լեզուով, ուր ելոյթ ունեցան հայ դասախօսներ: Տեսաերիզով ցոյց տրուեցաւ Ջարդին մասին վաւերագրական ֆիլմ մը եւ նկարներ: Խօսք առաւ վերապատուելի Յարութիւն Սէլիմեան: Ուշագրաւ էր ներկայութիւնը մեծ թիւով տեղացի ուսանողներու, եւ համալսարանի տնօրէնութեան ու լրիւ անձնակազմին: Ձեռնարկին շեշտը դրուեցաւ հայ դատը եւ մեր պահանջատիրութիւնը ծանօթացնելու արաբ ժողովուրդին:*

*Տեղի ունեցաւ նաեւ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս՝ Կարէն Գրիգորեանի հրաժեշտի երեկոյ մը, ուր հալէպահայութեան կողմէ պարգեւատրուեցաւ յարգարժան հիւպատոսը իր տարած օգտաշատ աշխատանքին համար:*

Հարցում.- Ի՞նչ խօսք ունիք փոխանցելիք «Արարատ»-ի միջոցով:

*Պատասխան .- Մենք բոլորին կ'ուզենք հաւաստիացնել թէ հալէպահայութիւնը եւ մանաւանդ Հնչակեան երիտասարդութիւնը պիտի չի յուսահատի, մեր բոլոր ջանքերը եւ ճիգը ի գործ պիտի դնենք օգտակար դառնալու մեր ժողովուրդին, հակառակ անոր որ կը գործենք արտակարգ վիճակներու մէջ, եւ մեր գործունէութիւնը երբեք չի նմանիր խաղաղ օրերու մէջ գործող ղեկավարութեան մը գործունէութեան: Ասով հանդերձ պիտի կատարենք մեր ստանձնած պարտականութիւնը ի փառս մեր ժողովուրդին եւ հալէպահայութեան անվտանգ ապագային:*

*«Արարատ»-ին կը մաղթեմ յաջողութիւն եւ շնորհակալութիւն հալէպահայութեան հանդէպ իր ցուցաբերած մօտեցումին համար:*

*«ԱՐԱՐԱՏ»*

# ԱՆՈՒՇ ՆԱԳԳԱՇԵԱՆԻ ՀԵՏ

*Շարունակուած էջ 8-էն*

*րը ճոխացուցին իգական սեռի ներկայացուցիչները: Նախ՝ մայր ու դուստր Սօսի եւ Սալբի Քըրքունեաններ («Երկնային Տաղեր») իրենց յատուկ զգայնութեամբ, տաւիղով ու սրինգով դիւթեցին ներկաները ժողովրդական եղանակներով: Ապա, ԹՄՄ Արշակ Տիգրանեան վարժարանի հայերէնի ուսուցչուհի՝ Տիկին Նազելի Գոճայեան խոր ապրումով ընթերցեց Նագգաշեանի «Ծաղիկները» եւ «Ըսէ» բանաստեղծութիւնները, արժանանալով մեծ գնահատանքի:*

*Հանդիսավար Բարսեղ Գարթալեան ընթերցեց ողջոյնի գիրը Արժ. Տէր Արշակ Աւ. Քահանայ Խաչատուրեանի եւ հրաւիրեց բանաստեղծուհիին ԵՊՀ-ի ուսանողական տարիներու սերնդակից մտաւորականներէն Յովսէփ Նալպանտեանը փոխանցելու համար սրտի իր խօսքը:*

*Պահը հասաւ լսելու օրուան մեծարեալ Անուշին անուշ խօսքերը: Ան իր խօսքը համեմեց կարդալով իր գործերէն, պատառիկներ ծնողքին ուղղուած նամակներէ, ինչպէս նաեւ մանկութեան տարիներու յուշեր, երեւան բերելով ի'ր Երեւանը, ի'ր եւ մեր Հայաստանը, երէկուան Սովետականը, այսօրուան իրականը, սրբավայր Երուսաղէմն ու հայկական Երուսաղէմը: «Ամէն ինչ իր գինը ունի, իսկ սրբութիւնը անգին է», ըսաւ ան:*

*Առաջնորդ Սրբազան Հօր սրտի խօսքով ու աղօթքով վերջ գտաւ գրական եզակի այդ երեկոն: Յովնան Արքեպիսկոպոս վեր հանեց Նագգաշեանի գրական արժանիքները եւ «Հայաստանակարօտ» բառով սահմանեց ու մկրտեց Անուշն անոր գրական վաստակը:*

*Անուշ Նագգաշեան Լոս Անճելըս այցելութեան այս օրերուն հանդիպումներ կ'ունենայ հայկական վարժարաններու աշակերտութեան հետ, ներկայացնելով բանաստեղծութիւններու իր նոր գիրքը՝ «Ես հայ եմ», ուղղուած դպրոցական տարիքի մեր տղոց ու աղջիկներուն: Բարի կեցութիւն կը մաղթենք ազնիւ ու անուշ մեր Անուշին:*

## ԷՍԹՈՆԻԱՅԷՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

*Շարունակուած էջ 14-էն*

*Եկեղեցական պատարագ ամիսը միայն մէկ անգամ տեղի կ'ունենայ: Միայն մէկ հոգեւոր հովիւ ունին Պալթեան այս երեք երկիրները, իսկ հոգեւոր հովիւը պէտք է իր ժամանակը բաժնէ երեք գաղութներուն մէջ՝ ըստ պատշաճի եւ կարիքի: «Բոլոր հայերս եկեղեցւոյ շուրջ համախմբուած ենք, նոյնիսկ եթէ ամիսը անգամ մը պատարագ կ'ունենանք», կը բացատրէ Ռազմիկ:*

*Ռազմիկին «Հայկական հպարտութիւն»-ը ընդարձակուած է: Էսթոնիոյ մշակոյթի նախարարը այցելած է Ազգային կեդրոն: Նախարարը զարմացած է, երբ տեսած է գաղութ մը, որ ակնկալութիւն չունի պետութենէն: Ընդհակառակն, Ռազմիկ նախարարին փոխանցած է հայ գաղութին տրամադրութիւններն ու պատրաստակամութիւնը: «Ի՞նչ ձեւով, պարոն նախարար, հայ գաղութը կրնայ օգտակար ըլլալ Էսթոնիոյ կառավարութեան»:*

*Ամբողջ աշխարհի մէջ տարածուած հայու հոգին է այս, որուն ճամբով հայը իր ապրած վայրին մէջ փորձած է միշտ բան մը աւելցնել եւ ներդրում ունենալ տեղական կեանքին մէջ:*

*Ռազմիկ նաեւ կ'անդրադառնայ քաղաքական «արշաւներուն», յատկապէս Թրքական լոպիին եւ հակահայ քարոզչութեան՝ Ցեղասպանութեան 100-ամեակի նախօրեակին: Կը հետեւի իւրաքանչիւր անցուդարձի եւ կարելին կ'ընէ՝ հակազդելու սխալ ուղղութիւններու եւ ծանուցումներու: Եւ չուշացաւ Արտեմի պարզ, բայց շատ իրատեսական հաստատումը. «Մենք՝ հայերս, իրարու պէտք է օգնենք, եթէ ապրիլ կ'ուզենք»:*

*Արտեմ, Ռազմիկ եւ 1500 հայորդիներ Թալլինի մէջ կը գիտակցին «Նոր շունչի» արժէքին: «Նոր շունչը»՝ եկեղեցւոյ միջոցով փոխանցուած, անոնց կու տայ նոր սլացք հայապահպանման իրենց առաքելութեան մէջ:*

*Բայց այսօր հայը, հայրենիքի մէջ թէ սփիւռքի, պէտք ունի նոր շունչի... Նոր շունչը, որ մեր պատմութեան այս հանգրուանին նոր սլացք պիտի տայ, մինչ մենք կը թիավարենք մեր բազմաթիւ հիմնահարցերուն մէջէն: Նոր սլացքը կ'արդիւնաւորուի, երբ հայը կը գիտակցի իրարու օգնելու հրամայականին, իրարու հետ ու իրարու համար ապրելու եւ կեանք կերտելու իտէալին:*

*Պաքու ծնած, Երեւան ուսանած եւ Թալլին ապրող Արտեմին նոր շունչը իւրաքանչիւր հայունն է: Հայուն ապրած իւրաքանչիւր երկիր հայուն կու տայ իւրայատուկ պայման եւ պիտակ: Եւ այս պայմաններուն մէջ եւ պիտակին ներքեւ հայը կ'ապրի իր սփիւռքեան կեանքը: Բայց ինչո՞ւ այսպէս եղաւ մեր պատմութիւնը, եւ աշխարհով մէկ տարածուեցանք ու այդպէս ենք մինչեւ այսօր...*

*Այսօրուան հրամայականը ի՞նչ ընելու իրավիճակն է:*

*Իւրաքանչիւր հայ իր ապրած երկրին ու գաղութին մէջ պէտք ունի ձգտելու նոր շունչին, որպէսզի կերտէ նոր սլացք, որ հայուն ազգային վերապրումին հիմքն է, իսկ վերապրելու հիմնական նախապայմանն է իրարու հետ եւ իրարու համար գոյատեւել:*

*Թալլինի հայկական փոքրաթիւ գաղութին նոր սլացքը լաւագոյն օրինակներէն է հայուն վերապրելու իրականութեան:*

## ԻՆՉՈ՞Ւ ՀԱՅԵՐԷՆ ԽՕՍԻԼ

*Շարունակուած էջ 15-էն*

*է, որ լեզուն կը դարձնեն իրենցը:*

*Ուրեմն, պէտք է խորհինք, թէ ինչպէ՞ս կրնանք հայթայթել լեզուին միջավայրը: Դպրո՞ցը: Դպրոցը միայն մասամբ կու տայ ասիկա: Պզտիկները պէտք է կարենան ամէն տարիքի իրենց հետաքրքրութիւնները յառաջ տանիլ նաեւ մայրենիով: Այլապէս, մայրենին ակամայ կը դառնայ աղքատ ազգականը մեծամասնական լեզուի կողքին:*

*Հետեւաբար, մեզի կը մնայ յարգել երեխաները իրենց կազմաւորման բոլոր փուլերուն մէջ, այս պարագային՝ մանաւանդ լեզուն իւրացնելու իրենց ճիգին մէջ: Այնքան ատեն որ լեզուն կը համարենք անփոխանցելի կամ փոխանցումը կը նկատենք ոչ անհրաժեշտ, նոյնիսկ ոչ բաղձալի, արդէն որոշած ենք անոր ապագան: Երեխաները շատ լաւ կը զգան մեր կեցուածքը ամէն բանի նկատմամբ, ներառեալ մեր կեցուածքը մեր իսկ մայրենիին նկատմամբ: Ուրե՛մն, եթէ լեզուն չփոխանցուի, յանցաւորը ոչ լեզուն է, ոչ ալ երեխաները: Պարզապէս:*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 100,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ------------------------------------------
**Address:** ---------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**----------------------- **Fax :** --------------------------

## ՀԱՒԱՍԱՐԱԿՇՌՈՒԹԻՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

*Շարունակուած էջ 16-էն*

*որ պէտք է պառկեմ ու քնեմ... Ձեր մի քանի մերսումից յետոյ ես արդէն քնում եմ: Երբ քնում եմ, երազիս երեխաներիս եմ տեսնում: Հիմա ուզում եմ անընդհատ քնել: Երազներում եմ երեխաներիս տեսնում, երազներում եմ ես նրանց գրկում: Ես շատ-շատ եմ կարօտել նրանց: Երեխաներիս երազում գրկելու համար հարիւր-հազար անգամ Ձեզ շնորհակալութիւն եմ յայտնում, սիրելի Բժիշկ, ուզում եմ Ձեզ ամուր-ամուր գրկեմ ու համբուրեմ: Չէ որ իմ միակ երազանքն իրականացւում է միայն երազում՝ իրականացուեց Ձեր շնորհիւ, իրականացուեց Ձեր Հրաշք Ձեռքերի շնորհիւ»:*

*Թէեւ դժուար չէ պատկերացնել ցաւերից ազատագրուած, բուժուած մարդու զգացումներն ու երախտագիտութիւնը, որ կարող է նա ունենալ բժշկի հանդէպ, այնուամենայնիւ մի պահ շփոթւում ես՝ կարդալով այսպիսի տողեր. «Երբ հարցրեցի նրան, ով է ձեզ բուժում, նա պատասխանեց .- իմ ուսանողները: Նա ասաց դա այնպիսի հպարտութեամբ, որ ես ուզեցի լինել նրա ուսանողներից մէկը: Ես կարծեցի, որ Յիսուսի նման նա էլ ունի աշակերտներ, ովքեր հաւատում եւ պաշտպանում էին նրան:*

*Ակնյայտօրէն նա բուժել է յայտնի եւ ոչ շատ յայտնի մարդկանց: Ես համոզուած եմ, որ դա միայն իր բժշկական մերսման շնորհիւ չէ, այլ աւելի շատ օգնում է մարդկանց հոգու եւ կամքի միջոցով: Ես դիմեցի նրան մէջքի եւ ձեռքի ցաւի համար, բայց աւելի մեծ էր իմ հոգու ցաւը, սիրտս կոտրուած էր, իսկ մարմինս լի էր բացասական էներգիայով եւ տխրութեամբ: Նրա ձեռքերը սահում էին մարմնիս վրայով, փորձելով գտնել ցաւոտ կէտերը, փորձում էին բուժել այն, սակայն, նա յայտնաբերեց, որ ինչ կատարւում է՝ դա մարմնից դուրս է: Սկզբում ես նրան չէի հաւատում, դա մի նոր փորձութիւն էր: Յետոյ պարզեցի , որ ամբողջ Երեւանը խօսում է նրա մասին եւ հաւատում նրա հրաշքին: Ես խոստովանեցի իմ կասկածների մասին, իսկ նա պարզապէս լռեց եւ շարունակեց անել այն, ինչ անում էր, եւ հաւանաբար վստահ էր, որ վերջում ես կը փոխուեմ: Արդիւնքում վերադարձայ Գահիրէ բուժուած եւ լի դրական էներգիայով: Ես գիտակցում էի, որ շատ երկար ժամանակ երջանիկ չէի եղել: Բոլորը նկատեցին իմ վերաբերմունքի փոփոխութիւնը, եւ նրա հրաշագործութիւնը փոխանցուեց մարմնովս, յետոյ ոսկորներով դէպի հոգիս: Ես բոլորին ցանկանում եմ պատմել նրա մասին: Եւ պարզեցի, երբ մարդիկ հարցնում են ինձ՝ ինչպիսին էր Երեւանը, ես խօսում եմ միայն նրա եւ նրա հրաշագործ ձեռքերի մասին», եւ Գահիրէից գրում է Նայիրի Աւետիսեանը:*

*2008-ին Գագիկ Կարապետեանը աշխատել է Լոս Անճելոսում, Կլենտէյլի հայկական մասում, այստեղ նոյնպէս նա ունեցել է նոյն յաջողութիւնը՝ վայելել հիւանդների սէրն ու յարգանքը: Կլենտէյլում իրեն է դիմում ծայրայեղ ծանր վիճակում գտնուող մի կին: «Զթաքցնեմ, ձեզ մօտ եկայ խարխլուած հաւատով, անթաքոյց վախով, մտածելով, թէ գրկուելու եմ մէկամեայ դստերս ինքնուրոյն գրկելու հաճոյքից,- գրում է նա: Դուք վերադարձրեցիք իմ ուրախութիւնը: Համոզուած եմ, որ Ձեր մարդասիրութիւնը սահման չունի, որ Ձեր բուժած հիւանդի աչքերի մէջ վառուող հաւատի, յոյսի առկայծումը Ձեր մեծագոյն գնահատականն է: Զարմանալին այն է, որ մագնիսական հզօր դաշտի նման, դուք գրաւում էք բոլոր նրանց, ովքեր դիմում են Ձեզ, բոլոր նրանց, ում մէջ Ձեր հրաշք ձեռքերի կախարդիչ հպումից բոցավառւում է հաւատը, ապրելու տենչը»:*

*Այսպէս է, կեանք է.- պէտք է ապրուի: Ում շատ է տրուած, նա պէտք է այդքան էլ վերադարձնի աշխարհին...*

*Յ. Գ. - Գագիկ Կարապետեանը ծնուել է 1957 թ. Դեկտեմբերի 2-ին Լենինական (այժմ՝ Գիւմրի) քաղաքում: Աւարտել է երկու բուհ Երեւանում եւ մէկն ԱՄՆ-ում՝ ստանալով ուսուցիչ-մարզչի, հոգեբան-ֆիզիոթերապեւտի եւ ֆիզիոթերապեւտեւի մերսողի մասնագիտութիւններ:*

*Սովորել եւ աւարտել է Մոսկուայի ԽՍՀՄ ՄԳԱ ֆիզիոլոգիայի եւ հիգիենայի գիտահետազօտական ինստիտուտի ասպիրանտուրան եւ դոկտորանտուրան: ՌԴ բժշկատեխնիկական գիտութիւնների ակադեմիայի իսկական անդամ է, ակադեմիկոս: ՀՀ ժողովրդական (տեղծագործող) ուսուցիչ է: Հարիւրից աւելի գիտական աշխատութիւնների, երեք հազար ռադիոհեռուստատեսային հաղորդումների, երկու գեղարուեստական գրքերի հեղինակ է, այդ թւում՝ «Դժոխք» պոէմի, որը նուիրուած է 1988 թ. Դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերի յիշատակին: Ժողովրդական արտիստ, ասմունքի վարպետ Վլադիմիր Աբաջեանի կատարմամբ պոէմը մտել է Ազգային ռադիոյի «Ոսկէ ֆոնդ»:*

*Պարգեւատրուել է «Զօրավար Անդրանիկ» ոսկէ մեդալով, արժանացել Ռուսաստանի Դաշնութեան Ջիժեւսկու անուան մրցանակին:*

*Իր աշխատանքային խմբով տարեկան անց է կացնում 2500-3000 բուժական սեանսներ 300-350 այցելուների հետ: Նա աշխատանքային գործունէութիւն է ծաւալել Մոսկուայում, Ստամպուլում, Փարիզում, Մեքսիքոյում, Տուպայում, Լոս Անջելոսում եւ աշխատանքային այցերով եղել տարբեր երկրներում:*

*Ոչ աւանդական բժշկութեան միջոցով Գագիկ Կարապետեանը բուժում է ողնաշարային հիւանդութիւններ՝ օստեոխոնդրոզ, ռադիկուլիտ, աղային կուտակումներ, դիսկոգեն խախտումներ, իշիազ, սկոլիոզ, կիֆոզ, արթրոզ, կեցուածքի եւ յենաշարժողական ապարատի տարբեր տեսակի շեղումներ: Բուժման մեթոդիկայի առանձնայատկութիւնն այն է, որ մարդը դիտարկւում է որպէս մի ամբողջական համակարգ:*

*Բուժման նպատակով օգտագործւում են բուժական եւ դասական մերսում, մանուալ թերապիա, ասեղնաբուժութիւն, բուսաբուժութիւն, բրնձաբուժութիւն, ֆիզիքական եւ շնչառական վարժութիւնների համալիր: Բուժման մէկ սեանսի տեւողութիւնը 45-60 րոպէ է, շաբաթական 3 անգամ: Ամբողջ կուրսի տեւողութիւնը 12-17 սեանս է՝ կախուած հիւանդի վիճակից: Սեանսները մէկը միւսին նման չեն, ուղեկցւում են հանգստացուցիչ երաժշտութեամբ եւ աւարտւում են հոգեթերապիայով:*

*Աւելին իմանալու համար այցելէք՝* www.doctorkarapetyan.am:


Ամառնային
Փառատօն
Armenian Summer
FESTIVAL
Կազմակերպութեամբ Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
Sunday June 8, 2014
Barnsdall Art Park
HOLLYWOOD
4800 Hollywood Blvd Los Angeles, CA 90027
Starting at 11:00 am
Live Music
Dancing
Art work Exhibition
Kids Games
Armenian Food
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
Sponsors
MITCH O'FARRELL
COUNCILMEMBER MITCH O'FARRELL
Glendale West Pharmacy and Medical Supply
amga
ARMENIAN MEDIA GROUP OF AMERICA INC
Մասիս
www.massispost.com
SARKIS
Vrej Pastry
for more info please call
vNor Serount Cultural Association
(818) 391-7938